ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ

սովորող ուսանողների համար

ԵՐԵՎԱՆ – 2009

ՆԱԽԱԲԱՆ

Սիրելի՛ ուսանողներ,

Երևանի պետական համալսարանն այս տարի բոլորեց կենսագրության 90-ամյակը: Հիմնադրման օրվանից ի վեր հայոց մայր բուհի գործունեության ուղեգիծը եղել ու մնում է համալսարանական կրթության բովանդակության և ուսման բարձր որակի ապահովումը: Այսօր ԵՊՀ-ն համազգային և տարածաշրջանային դերակատարությամբ կրթական և գիտամշակութային ինքնավար հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, զարգացումը և փոխանցումն է: Գլոբալացման արդի ժամանակաշրջանում քաղաքակրթության մարտահրավերները պահանջում են միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական պատրաստվածություն՝ կրթության որակի և բովանդակության անընդհատ կատարելագործում, բարձրագույն կրթության միջազգային չափանիշներին դրանց համապատասխանեցում:

ԵՊՀ-ում 2007/08 ուստարվանից բոլոր մասնագիտությունների գծով մագիստրոսական ծրագրերը, իսկ 2008/09 ուստարվանից նաև բակալավրի ծրագրերն իրականացվում են կրեդիտային համակարգով: Ուսուցման նոր համակարգին անցնելը բխում է Բոլոնիայի գործընթացի պահանջներից և նպատակ ունի աստիճանական անցում կատարելու ուսման կազմակերպման ուսանողամետ համակարգին, որտեղ ուսման գործընթացի կենտրոնում ուսանողն է՝ իր անհատական կրթական կարիքներով, նախասիրություններով և ունակություններով, ապահովելով ուսումնառության ճկուն ձևերի և անհատական կրթական հետագծերի իրականացման լայն հնարավորություն:

Կրեդիտային համակարգի ներդրմամբ զգալիորեն բարելավվել է ձեզ առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքը և աշխատածավալը, հիմնավորված կերպով թեթևացվել լսարանային բեռնվածությունը, կրճատվել դասավանդվող առարկաների քանակը՝ իրատեսական նախադրյալներ ստեղծելով ձեր ինքնուրույն ուսումնական աշխատանքի հնարավորությունները մեծացնելու, ուսումնական ծրագրերը լավագույնս յուրացնելու և դրանցով սահմանված կրթական արդյունքները ձեռք բերելու համար:

Համալսարանում ներդրված կրեդիտային համակարգն ամբողջությամբ համատեղելի է Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) հետ, ինչը նորաստեղծ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ձեր ակադեմիական շարժունության (ուսանողական փոխանակումներ, ուսումնառության ժամանակահատվածներ օտարերկրյա բուհերում, կրթության շարունակում ավելի բարձր աստիճանում և այլն) ընդլայնման և որակավորումների ճանաչման դյուրացման գրավականն է: Իսկ դա կընդլայնի ձեր ապագա կարիերայի և մասնագիտական աշխատուժի գլոբալ շուկայում աշխատանք գտնելու հնարավորությունները:

Կրեդիտային համակարգի ներդրումը համալսարանում մեկնարկած լայնամասշտաբ կրթական բարեփոխումների սկիզբն է միայն, բարեփոխումներ, որոնք պայմանավորված են ոչ միայն Բոլոնիայի գործընթացի պահանջների ձևական կատարմամբ, այլև համալսարանում ծրագրային բարձր չափորոշիչների պահպանման և ուսման որակի բարձրացման նպատակադրությամբ, ինչի հիմնական չափանիշը մեր շրջանավարտների մասնագիտական աշխատանքով ապահովվածությունն է: Համալսարանը տարեցտարի խորացնելու և ընդլայնելու է կրեդիտային համակարգի գործառույթները՝ ձեզ համար կրթական ընտրության առավել ընդլայնված հնարավորություններ ապահովելու նպատակով:

Կրեդիտային համակարգով ուսումնառության ներկա ուղեցույցը պարունակում է ձեզ համար օգտակար տեղեկատվություն կրեդիտային համակարգի հիմնադրույթների, ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքների ստուգման ու գնահատման նոր կարգի, ձեզ առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքի, բովանդակության և աշխատածավալների, ծրագրի բաղկացուցիչ դասընթացների և դրանցով նախանշված կրթական արդյունքների վերաբերյալ:

Հաջողություն և ամենայն բարիք եմ մաղթում ձեզ:

ՌԵԿՏՈՐ՝ **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

I ԲԱԺԻՆ

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանում է Երևանի պետական համալսարանում բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի կրեդիտային հենքով ուսումնական գործընթացի կազմակերպման միասնական կանոնները:

1.2. Կարգը ներառում է ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ակադեմիական առաջադիմության չափանիշները, ինչպես նաև եզրափակիչ ատեստավորման կազմակերպման ընթացակարգը:

1.3. Կարգում տրված են նաև կրեդիտային համակարգում գործածվող առանձին տերմիններ, նկարագրված են համակարգի բնութագրիչները, բնորոշ գործառույթները և ընթացակարգերը:

2. Կրեդիտային համակարգի ընդհանուր նկարագիրը

2.1. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները

Համաեվրոպական ECTS[1] կրեդիտային համակարգի հետևյալ սահմանումները և դրույթները ընդունված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում և գործում են ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում:

1. ***Կարողությունը*** գիտելիքի, իմացության և ունակությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական (առանձնահատուկ ուսման տվյալ բնագավառի համար) և ընդհանուր:
2. ***Կրթական արդյունքն*** այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողն ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման չափանիշով, որը հնարավորություն է տալիս դատելու դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման վերաբերյալ: Կրթական արդյունքը և գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները:
3. ***Կրթական (ուսումնական) մոդուլը*** ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն միավորն է, որի համար կրեդիտ է տրվում: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը 1 կիսամյակ է՝ դրանով սահմանված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ: Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները ուսանողին շնորհվում են ամբողջությամբ, այլ ոչ թե առանձին մասերով:
4. ***ECTS կրեդիտը*** դասընթացն (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ուսումնառության ժամաքանակով արտահայտված բեռնվածքի չափման համընդունելի միավոր է, որը տրվում է ուսանողին դասընթացով նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

[1] Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ:

5. ***ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշներն են.***
   - ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,
   - կրեդիտը չափում է ուսանողի միայն ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, կարևորությունը և մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),
   - կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ գնահատման միավորների) հետ միասին,
   - ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
   - կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով (գնահատման միավորներով),
   - կրեդիտը չի արտահայտում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:
6. ***Կրեդիտային համակարգը*** ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:
7. ***Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը*** միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուստարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:
8. ***ECTS համակարգի կարևորագույն հատկանիշներն են.***
   - կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,

– կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն,
– կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների ելքային կրթական արդյունքները և հատկացված կրեդիտները, ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են նախապես և հասանելի են դրանցից օգտվողներին (ուսանողներին և դասախոսներին)։

2.2. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները

2.2.1. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները երկուսն են՝

ա) *կրեդիտների փոխանցում.*
այս գործառույթը ենթադրում է ուսումնական ծրագրի (պլանի) բոլոր դասընթացների և կրթական մոդուլների աշխատածավալների արտահայտում կրեդիտների օգնությամբ, ինչը հնարավոր է դարձնում կրեդիտներով չափված կրթական արդյունքի փոխանցումը ծրագրերի և բուհերի միջև,

բ) *կրեդիտների կուտակում.*
այս գործառույթի իրականացումը ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն, ինչն իրականացվում է ուսանողի անհատական ուսումնական ծրագրի օգնությամբ[2]։

Նշված գործառույթները բնութագրվում են մի շարք հատկանիշներով և ուղեկցվում համապատասխան ընթացակարգերով։

2.2.2. *Կրեդիտների փոխանցման* գործառույթի հիմնական հատկանիշներն են.

– գործում են մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ, կրթական մոդուլներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն) աշխատածավալները տրված են ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS կրեդիտներով,
– կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն նույն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող ծրագրի պահանջներին համապատասխան։

[2] Այս գործառույթի ներդրումը ԵՊՀ-ում նախատեսվում է իրականացնել 2010/11 ուստարվանից։

2.2.3. *Կրեդիտների կուտակման* գործառույթի հիմնական հատկանիշներն են.

- պարտադիր և ընտրովի դասընթացներից բաղկացած ուսումնական ծրագրեր, որոնցից յուրաքանչյուրի յուրացման հաջորդականությունը սահմանվում է դասընթացների նախապայմաններով,
- ուսանողի կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն,
- ուսանողների ուսումնառության անհատական ծրագրերի առկայություն,
- դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում ուսանողի կողմից դրանց ընտրության հնարավորություն՝ ելնելով դասընթացի կայացման ժամանակացույցից և (կամ) դասախոսի նախապատվությունից,
- ուսանողի կողմից ուսումնառության ինտենսիվության, հետևաբար նաև ուսումնառության ծրագրի տևողության կարգավորման հնարավորություն:

ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերում կրեդիտային համակարգի գործառույթները ներդրվում են մասնակիորեն, իսկ ամբողջական կիրարկումը նախատեսվում է 2010/11 ուստարվանից:

2.3. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը

1. ԵՊՀ-ում բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:
2. 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:
3. Ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից 32-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով՝ աշնանային և գարնանային: Ըստ այդմ, կիսամյակի ուսումնական պարապմունքների տևողությունը սահմանվում է 16 շաբաթ, բացառությամբ բակալավրի կրթական ծրագրի 8-րդ կիսամյակի, որի տևողությունը 8 շաբաթ է:
4. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի:
5. Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կազմում է 24-30 ժամ[3], իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ 14-18 ժամ[4]:

[3] Առանց ֆիզդաստիարակության պարապմունքների:

[4] Առանց լրացական դասընթացների:

6. Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ։
7. Որոշ դեպքերում, ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողը սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ ուսումնական բեռնվածություն։
8. Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 240 կրեդիտ է, իսկ մագիստրոսի ծրագրինը՝ 120 կրեդիտ։

3. Դասընթացները և կրթական մոդուլները

1. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին։
2. Մեծածավալ դասընթացներն անհրաժեշտության դեպքում բաժանվում են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների։
3. Դասընթացները (կրթական մոդուլները) ըստ յուրացման բնույթի բաժանվում են 2 հիմնական խմբի՝
   ա) պարտադիր դասընթացներ, որոնց յուրացումն ամրագրված է որոշակի կիսամյակներում,
   բ) կամընտրական դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ։

4. Կրեդիտների հատկացումը

1. Կրթական ծրագրի առանձին մոդուլներին կրեդիտների հատկացումը ելնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար ուսանողից պահանջվող միջին աշխատաժամանակի (լրիվ ուսումնական բեռնվածության) իրատեսական կանխատեսումից։
2. Հատկացվող կրեդիտների թվի և լսարանային (կոնտակտային) ժամերի միջև միարժեք կապ չկա։ Կրեդիտների թիվը, ինչպես արդեն նշվել է[5], կախված է նաև պարապմունքի ձևից (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբորատոր պարապմունք և այլն), ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդներից և այլն։
3. Դասընթացի ծրագիրը մշակող ուսումնական կառույցը (ամբիոնը) այնպես է պլանավորում ուսանողի ուսումնական աշխատանքը, որպեսզի դրա կատարման համար պահանջվող ժամաքանակը համապատասխանի դասընթացին հատկացված կրեդիտների ժամային համարժեքին։
4. Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները պետք է ներկայացվեն ամբողջական թվերով։

---

[5] Տե՛ս, մասնավորապես, դասընթացների կրեդիտատարության հաշվարկի սխեմաները 2007 թ. ԵՊՀ «Կրեդիտային համակարգով բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» փաստաթղթում։

5. Կրթական ծրագրերի ավարտական պահանջները

5.1. Բակալավրի ծրագիր

1. Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ԵՊՀ ուսանողը պետք է ծրագրի կատարման արդյունքում հաջողությամբ լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն, որի համար հաշվարկված հանրագումարային *միջին որակական գնահատականը (ՄՈԳ)* [6] պետք է կազմի առնվազն 9,00:
2. Մինչև ծրագրի ամփոփիչ ատեստավորումն (ամփոփիչ քննություն, ավարտական աշխատանքի պաշտպանություն) ընկած ժամանակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 9,00: Հակառակ պարագայում, որակավորում ստանալու համար ուսանողը պետք է բարձրացնի իր առաջադիմության ցուցանիշը մինչև սահմանված նվազագույն արժեքը՝ կրկնելով անհրաժեշտ քանակությամբ դասընթացներ:
3. Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն մինչև 36 կրեդիտ *հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթամասից* (այդ թվում՝ 4 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից), 10 կրեդիտ՝ *մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կրթամասից* (ներառյալ 2 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների ցանկից) և առնվազն 20 կրեդիտ՝ պրակտիկայից և եզրափակիչ ատեստավորման ձևերից:
4. Մնացած առնվազն 174 կրեդիտների բովանդակային կազմը սահմանվում է՝ ելնելով տվյալ մասնագիտությամբ բակալավրի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման պայմանից, և յուրաքանչյուր մասնագիտության համար տրվում է առանձին (ընդ որում, մինչև 24 կրեդիտ կարող է հատկացվել տվյալ մասնագիտության շրջանակներում որոշակի ուղղություններով մասնագիտացում իրականացնելու համար):

5.2. Մագիստրոսի ծրագիր

1. Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար ԵՊՀ ուսանողը ծրագրի կատարման արդյունքում պետք է հաջողությամբ լրացնի 120 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն, որի համար հաշվարկված հանրագումարային *միջին որակական գնահատականը (ՄՈԳ)*[7] պետք է կազմի առնվազն 12,00:
2. Մինչև ծրագրի ամփոփիչ ատեստավորումն (մագիստրոսական ատենախոսության պաշտպանություն) ընկած ժամանակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 12,00: Հակառակ պարագայում, որակավորում ստանալու համար ուսանողը պետք է բարձրացնի իր առաջադիմության ցուցանիշը մինչև սահմանված նվազագույն արժեքը՝ կրկնելով անհրաժեշտ քանակությամբ դասընթացներ:

---

[6] ՄՈԳ-ի վերաբերյալ տե՛ս սույն կարգի 6.5. կետը:
[7] ՄՈԳ-ի վերաբերյալ տե՛ս սույն կարգի 6.5. կետը:

3. Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն առնըվազն 6 կրեդիտ՝ *ընդհանուր դասընթացների կրթամասից,* և 48 կրեդիտ՝ *հետազոտական կառուցամասից*:
4. Մնացած կրեդիտների (մինչև 66) բովանդակային կազմը սահմանվում է *մասնագիտական պարտադիր կրթամասով* և *կամընտրական դասընթացներով՝* ելնելով տվյալ մասնագիտությամբ մագիստրոսի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման պայմանից, և յուրաքանչյուր ծրագրի համար տրվում է առանձին (ընդ որում, մինչև 18 կրեդիտ հատկացվում է կամընտրական դասընթացների ձևով որոշակի ուղղությամբ անհատական ուսուցում իրականացնելու համար)։

6. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը

6.1. Համակարգի հիմնադրույթները

1. ԵՊՀ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝
   ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը, ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր և բարելավել դասահաճախումները,
   բ) ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման օգնությամբ ներմուծել դիագնոստիկ գնահատման տարրեր՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործելով որպես հետադարձ կապ՝ դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման և կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդյունարար գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը՝ գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները։
2. Գիտելիքների գնահատումը (ստուգումը) ներառում է հետևյալ բաղադրիչները.
   ա) դասընթացին ուսանողի մասնակցության գնահատում դասահաճախումների հաշվառման օգնությամբ,
   բ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ և ստուգումներ),
   գ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում,

դ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

3. Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեջ՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 2 խմբի՝
   ա) *եզրափակիչ գնահատումով դասընթացներ,*
   բ) *առանց եզրափակիչ գնահատման դասընթացներ*:

6.2. Գնահատման մեթոդաբանությունը

6.2.1. Բակալավրի կրթական ծրագիր

Բակալավրի կրթական ծրագրում յուրաքանչյուր կիսամյակային քննաշրջանում կարող է ներառվել *եզրափակիչ գնահատումով* առավելագույնը 4 մասնագիտական դասընթաց, բացառությամբ առաջին կիսամյակի, որտեղ այդ դասընթացների քանակը սահմանափակվում է 3-ով:

1. *Եզրափակիչ գնահատումով դասընթացը* քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 2 ընթացիկ (միջանկյալ) քննություն: Ընթացիկ քննությունները պարտադիր կերպով անց են կացվում գրավոր, իսկ եզրափակիչ քննության ձևը՝ դասընթացը կազմակերպող ամբիոնի առաջարկությամբ հաստատում է ֆակուլտետի դեկանը:
2. *Եզրափակիչ գնահատումով դասընթացից* (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը ($Գ_{արդ.}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝
   ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 4 միավոր: Դասընթացին ուսանողի մասնակցության $Գ_{մաս.}$ միավորը որոշվում է *աղյուսակ 1-ում* բերված սանդղակի չափանիշներին համապատասխան.

Աղյուսակ 1.

Մասնակցության աստիճանը (%)	Հատկացվող միավորը
91-100	4
81-90	3
71-80	2
61-70	1
≤60	0

Օրինակ 1. Եթե 32 լսարանային ժամ աշխատածավալով դասընթացից ուսանողն ունի 15 ժամ բացակայություն, ապա դասընթացին մասնակցության աստիճանը կլինի՝ $\left(1-\frac{15}{32}\right)$ *x 100% = (1 – 0,47) x 100% = 53 %: Համաձայն աղյուսակի՝* $Գ_{մաս.}$ *= 0 միավոր:*

Օրինակ 2. Եթե 64 լսարանային ժամ աշխատածավալով դասընթացից ուսանողն ունի 12 ժամ անհարգելի և 4 ժամ հարգելի բացակայություն, ապա դասընթացին մասնակցության աստիճանը կլինի՝ $\left(1-\frac{12}{64-4}\right)$ *x 100% = (1 – 0,2) x 100% = 80%: Համաձայն աղյուսակի՝* $Գ_{մաս.}$ *= 2 միավոր:*

բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ (միջանկյալ) քննությունների արդյունքներից ($\sum Ք_{ընթ.}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 4 միավոր,

գ) եզրափակիչ քննության արդյունքից ($Ք_{եզր.}$), որը կարող է գնահատվել մինչև 8 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գ_{արդ.} = Գ_{մաս.} + \sum Ք_{ընթ.} + Ք_{եզր.}:$$

Ըստ այդմ, *եզրափակիչ գնահատումով դասընթացն* ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով[8]).

Աղյուսակ 2.

Գնահատման բաղադրամասը	$Գ_{մաս.}$	$Ք_{ընթ.1}$	$Ք_{ընթ.2}$	$Ք_{եզր.}$	$Գ_{արդ.}$
Միավորը	4	4	4	8	20

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 3 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից նա վաստակել է համապատասխանաբար 3 և 4 միավորներ, իսկ եզրափակիչ քննությունից՝ 6 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝ $Գ_{արդ.}$*= 3 + 3 + 4 + 6 = 16 :*

3. Լաբորատոր աշխատանքի ձևեր ունեցող *եզրափակիչ գնահատումով դասընթացի* ընթացիկ քննությանը ուսանողի մասնակցությունը թույլատրվում է նախորդող ժամանակահատվածում նախատեսված լաբորատոր աշխատանքների առնվազն 60% կատարողականի (փորձերի կատարում և հանձնում) դեպքում: Հակառակ պարագայում ուսանողին չի թույլատրվում մասնակցել ընթացիկ քննությանը, իսկ քննական ամփոփագրում նրա անվան դիմաց դրվում է «0» միավոր:

[8] Ընթացիկ քննության մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր, իսկ գնահատման քայլը՝ առնվազն 0,5 է:

4. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացը* գնահատվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 4 ընթացիկ ստուգումների (գնահատումների) արդյունքներով: Ընթացիկ ստուգումներն անց են կացվում կարճ հարցումների, փոքրածավալ գրավոր/ստուգողական աշխատանքների, անհատական առաջադրանքների (ռեֆերատ, էսսե և այլն) և նման կարգի այլ հանձնարարությունների կատարողականի ստուգման միջոցով: Ընթացիկ ստուգման ձևն ընտրում է դասընթացը կազմակերպող ամբիոնը:
5. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացից* (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը ($Գ_{արդ.}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝
   ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ $Գ_{մաս.}$, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը կարող է վաստակել 4 միավոր: Մասնակցության աստիճանը գնահատվում է համաձայն *աղյուսակ 1*-ում բերված սանդղակի,
   բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 4 ընթացիկ ստուգումների արդյունքներից ($\sum U_{ընթ.}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 4 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գ_{արդ.} = Գ_{մաս.} + \sum U_{ընթ.}:$$

Ըստ այդմ, *առանց եզրափակիչ գնահատման դասընթացն* ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով[9]).

Աղյուսակ 3.

Գնահատման բաղադրամասը	$Գ_{մաս.}$	$U_{ընթ\ 1}$	$U_{ընթ\ 2}$	$U_{ընթ\ 3}$	$U_{ընթ\ 4}$	$Գ_{արդ.}$
Միավորը	4	4	4	4	4	20

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 4 ընթացիկ ստուգումներից նա վաստակել է համապատասխանաբար 3, 2, 3 և 4 միավորներ, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝ $Գ_{արդ.} = 2 + 3 + 2 + 3 + 4 = 14$*:*

[9] Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր, իսկ գնահատման քայլն առնվազն 0,5 է:

6. Գնահատման՝ վերը նկարագրված եղանակները կիրառվում են միայն *մասնագիտական կրթամասի* բաղկացուցիչ դասընթացների (ուսումնական մոդուլների) գնահատման համար: *Հումանիտար ու սոցիալ-տնտեսագիտական* և *մաթեմատիկական ու բնագիտական կրթամասերի* բաղկացուցիչ դասընթացների գնահատումն իրականացվում է ավանդական եղանակով (ստուգարք կամ 20 միավորանոց սանդղակով գնահատվող եզրափակիչ քննություն): Պրակտիկաները գնահատվում են ստուգարքի ձևով:

6.2.2. Մագիստրոսի կրթական ծրագիր

Մագիստրոսի կրթական ծրագրում ներառված բոլոր դասընթացները *եզրափակիչ գնահատումով դասընթացներ* են, որոնց գնահատման կառուցվածքը, սակայն, մի փոքր տարբերվում է բակալավրի կրթական ծրագրի դասընթացների գնահատման՝ վերը նկարագրված եղանակից:

1. Դասընթացը քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 2 ընթացիկ (միջանկյալ) քննություն, որոնցից մեկն անց է կացվում ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա: Եզրափակիչ քննության ձևը դասընթացը կազմակերպող ամբիոնի առաջարկությամբ հաստատում է ֆակուլտետի դեկանը:
2. Դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը ($Գ_{արդ.}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝
   ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 4 միավոր: Դասընթացին ուսանողի մասնակցության $Գ_{մաս.}$ միավորը որոշվում է 6.2.1. կետում բակալավրի կրթական ծրագրի համար նկարագրված եղանակով (ուսումնառության անհատական ժամանակացույցով սովորող ուսանողի՝ դասընթացի մասնակցության համար տրվող միավորների քանակը հաշվարկվում է նրա ինքնուրույն աշխատանքի կատարողականի հիման վրա),
   բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ (միջանկյալ) քննությունների (գրավոր աշխատանք և բանավոր ներկայացում) արդյունքներից ($∑Q_{ընթ.}$), որոնց հատկացվող միավորների առավելագույն քանակը սահմանվում է 8,
   գ) եզրափակիչ քննության արդյունքից ($Q_{եզր.}$), որը կարող է գնահատվել մինչև 8 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գ_{արդ.} = Գ_{մաս.} + ∑Q_{ընթ.} + Q_{եզր.}:$$

Ըստ այդմ, մագիստրոսի կրթական ծրագրում ընդգրկված դասընթացն ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով).

Աղյուսակ 4.

Գնահատման բաղադրամասը	$Գ_{մաս.}$	$Ք_{ընթ.1}$	$Ք_{ընթ.2}$	$Ք_{եզր.}$	$Գ_{արդ.}$
Միավորը	4	8		8	20

3. Ընթացիկ գնահատման ձևերի միջև միավորների բաշխման քանակական հարաբերակցությունը որոշում է դասընթացը վարող դասախոսը, ինչը պարտադիր կերպով արձանագրվում է մագիստրոսական ծրագրի ուսանողի ուսումնառության ուղեցույցում զետեղված դասընթացի նկարագրության մեջ (դասընթացի ընթացիկ գնահատման կառուցվածքի փոփոխություն ուղեցույցի հրապարակումից հետո չի թույլատրվում)։
4. Գնահատման վերը նկարագրված եղանակը կիրառվում է միայն *ուսումնական կառուցամասի* բաղկացուցիչ դասընթացների (բացի *լրացական դասընթացներից*) գնահատման համար: *Հետազոտական կառուցամասի* մոդուլները, այդ թվում նաև պրակտիկաները, գնահատվում են ստուգարքի ձևով: Մագիստրոսական ատենախոսությունը գնահատվում է 20 միավորանոց սանդղակով՝ 9.2. կետում բերված գնահատման չափանիշներին համապատասխան:

6.3. Ընթացիկ և եզրափակիչ գնահատման կազմակերպումը

1. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների/ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, քննությունների ձևերը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշները տրամադրվում են ուսանողներին նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում)։
2. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցները կազմում են ֆակուլտետները, և հաստատվում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից։ Քննությունների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնամեթոդական վարչություն:
3. Ընթացիկ քննություններն անց են կացվում ուսումնառության կիսամյակի 7÷8-րդ և 15÷16-րդ շաբաթներում (8-րդ կիսամյակում՝ 4-րդ և 8-րդ շաբաթներում): Ընթացիկ քննությունների օրը ուսանողն ազատվում է դասերից:
4. Ընթացիկ ստուգումներն անց են կացվում յուրաքանչյուր 4 շաբաթը մեկ (8-րդ կիսամյակում՝ յուրաքանչյուր 2 շաբաթը մեկ): Ընթացիկ ստուգումն անց է կացնում տվյալ առարկան դասավանդող դասախոսը՝ առարկայի՝ դասացուցակով հատկացված ժամերին (ուսանողը չի ազատվում դասերից):
5. Եզրափակիչ քննություններն անց են կացվում կիսամյակային քննաշրջաններում՝ 17÷20-րդ շաբաթներում (8-րդ կիսամյակում՝ 9÷10-րդ շաբաթներում):
6. Քննության/ստուգման ավարտից հետո քննությունն ընդունած դասախոսը

քննական ամփոփագիրը նույն օրը ներկայացնում է դեկանատ:

7. Քննության գնահատականը հրապարակելու պահից ուսանողն իրավունք ունի այն գանգատարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, այնուհետև նաև ֆակուլտետի դեկանին:

6.4. Գնահատման սանդղակը և նշագրումը

1. ԵՊՀ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 20 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 5.

Գնահատման արդյունարար միավորը	Գնահատականը
18-20	*«Գերազանց»*
13-17	*«Լավ»*
8-12	*«Բավարար»*
0-7	*«Անբավարար»*
0	*«Չներկայացած»*
-	*«Ստուգված» /«Չստուգված»*

Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում գնահատման արդյունարար միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ 18 (գերազ.)):

2. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 8-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է *«Չստուգված»*, կրեդիտներ չեն տրվում: *«Ստուգված»* գնահատման դեպքում ուսանողի օգտին *վարկանիշային միավորներ*[10] չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի *միջին որակական գնահատականի (ՄՈԳ)* վրա:

6.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ԵՊՀ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են *ակադեմիական տեղեկագիր*[11], որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբե-

[10] Վարկանիշային միավորի վերաբերյալ տե՛ս սույն կարգի 6.5. կետը:

[11] Ակադեմիական տեղեկագրի օրինակները բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի համար կցված են սույն կարգին (*հավելվածներ 1 և 2*):

ռումների որակը:

2. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ տվյալ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:
3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները[12]՝
   – *գումարային կրեդիտների* քանակը,
   – *գնահատված կրեդիտների* քանակը,
   – *վարկանիշային միավորները*,
   – *միջին որակական գնահատականը*:
4. *Գումարային կրեդիտը (Կ)* կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:
5. *Գնահատված կրեդիտը (ԳԿ)* գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է թվային միավորներով.

$$\text{ԳԿ} = \sum \text{Կրեդիտ}_i \text{:}$$

6. *Վարկանիշային միավորը (ՎՄ)* յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

$$\text{ՎՄ} = \sum \text{Կրեդիտ}_i \times \text{Գ}_{\text{արդ}i}\text{,}$$

որտեղ $\text{Գ}_{\text{արդ}i}$-ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է:

Օրինակ, եթե ուսանողը 5, 4 և 6 կրեդիտանոց դասընթացներից գնահատվել է (վաստակել է) համապատասխանաբար 12, 16 և 19 միավոր, ապա դասընթացների այդ խմբից ուսանողի վաստակած վարկանիշային միավորը հավասար է՝
ՎՄ = 5 x 12 + 4 x 16 + 6 x 19 = 238՝ 300 հնարավորից (5 x 20 + 4 x 20 + 6 x 20):

7. *Միջին որակական գնահատականը (ՄՈԳ)* կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\text{ԳԿ}} \text{:}$$

[12] Տե՛ս ակադեմիական տեղեկագրին կից օրինակը:

Օրինակ, նախորդ դեպքում դիտարկված դասընթացների խմբի համար հաշվարկված միջին որակական գնահատականը կլինի՝ ՄՈԳ = $\frac{238}{15} = 15{,}87$ *՝ 20 հնարավորից։*

8. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են *կիսամյակային* (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և *արդյունարար* (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը։

6.6. Ուսման առաջադիմությունը

1. Ըստ ուսման առաջադիմության՝ ուսանողները դասակարգվում են՝ *առաջադիմող*, *փորձաշրջանի կարգավիճակում գտնվող* և *հեռացման ենթակա*։
2. Ուսանողը համարվում է *առաջադիմող*, եթե՝
   ա) կիսամյակում ունի 30 կրեդիտ ուսումնական միջին բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով),
   բ) հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների[13] կրեդիտները։
3. Ուսանողը համարվում է *փորձաշրջանի կարգավիճակում*, եթե չի բավարարել նախորդ կետում նշված պայմաններից որևէ մեկը, և ռեկտորատի կողմից նրան թույլատրվել է մասնակցել ակադեմիական պարտքերի մարմանը (լուծարքին)։
4. Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և բարձրացնելու ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան։
5. Բակալավրի կրթական ծրագրի համար փորձաշրջանի տևողությունը համընկնում է ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանի հետ, իսկ մագիստրոսի ծրագրում ուսանողին կարող է տրվել նաև լրացուցիչ ժամանակ՝ դասընթացը կրկնելու համար։
6. Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողը համարվում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում դուրս չի գալիս այդ կարգավիճակից։ Հեռացված ուսանողի վերականգնումը կատարվում է նույն կիսամյակում՝ ուսումնառության նախորդ ընթացքում վաստակած բոլոր կրեդիտների պահպանմամբ։
7. Նույն ուսումնական բեռնվածությամբ ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են (ուսանողական նպաստներ, պետական, ներբուհական և այլ տեսակի կրթաթոշակներ հատկացնելիս) նրանց միջին որակական գնահատականներով, իսկ միևնույն կրթական ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողներինը՝ վարկանիշային միավորներով։

[13] Տե՛ս դասընթացների ա) խումբը, բաժին 3, 3-րդ կետ։

7. Քննությունների վերահանձնումը և դասընթացի կրկնումը

1. Դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանը որոշելիս հաշվի չեն առնվում հարգելի պատճառներով բացակայության դեպքում բաց թողնված դասաժամերը, եթե այն հավաստող սահմանված կարգի բժշկական տեղեկանքը կամ դիմումը ներկայացվում է հաճախումները վերսկսելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:
2. Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն 2 աշխատանքային օրվա ընթացքում դեկանատում գրանցված սահմանված կարգի բժշկական տեղեկանքի կամ դիմումի առկայության դեպքում:
3. Ընթացիկ (միջանկյալ) քննությունների կամ ստուգումների արդյունքների վերահանձնում, այդ թվում նաև ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում, չի թույլատրվում:
4. Հարգելի պատճառով ընթացիկ քննությանը կամ ստուգմանը չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել մինչև հաջորդ ընթացիկ քննությունը/ստուգումն ընկած ժամանակահատվածում (համապատասխանաբար, 2-րդ ընթացիկ քննությունը՝ մինչև եզրափակիչ քննությունը, իսկ 4-րդ ընթացիկ ստուգումը՝ մինչև քննաշրջանի սկիզբը)՝ նախապես այն համաձայնեցնելով դեկանատի և պարապող դասախոսի հետ:
5. Հարգելի պատճառներով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում կարող է վերահանձնել այն:
6. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացի* գնահատման արդյունարար միավորի նվազագույն 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում պետք է վերահանձնի ամբողջ դասընթացը, սակայն նրա արդյունարար միավորը չի կարող գերազանցել անցողիկ 8-ը:

> *Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 4 ընթացիկ ստուգումներից նա վաստակել է համապատասխանաբար 1, 1, 2 և 1 միավորներ, ապա այդ դասընթացի արդյունարար միավորը կլինի՝ $Գ_{արդ.}$= 2 + 1 + 1 + 2 + 1 = 7, որը ցածր է նվազագույն շեմային պահանջից (8 միավոր): Այս դեպքում ուսանողը պարտքերի մարման շրջանում վերահանձնում է դասընթացը (4 ընթացիկ ստուգումներով գնահատվող ուսումնական նյութը) ամբողջությամբ, սակայն նրա արդյունարար միավորն այս դեպքում չի կարող գերազանցել անցողիկ 8-ը՝ $Գ_{արդ.}$ <= 8:*

7. *Եզրափակիչ գնահատումով դասընթացի* գնահատման արդյունարար միավորի նվազագույն 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում պետք է վերահանձնի եզրափակիչ քննությունը՝ վերջինիս համար սահմանված 8 միավորի ձեռքբերման հնարավորությամբ:

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից նա վաստակել է համապատասխանաբար 1 և 2 միավորներ, իսկ եզրափակիչ քննությունից՝ 2 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝ $Գ_{արդ.} = 2 + 1 + 2 + 2 = 7$, որը ցածր է նվազագույն շեմային պահանջից (8 միավոր): Այս դեպքում ուսանողը պարտքերի մարման շրջանում վերահանձնում է միայն եզրափակիչ քննությունը՝ սահմանված 8 միավորի ձեռքբերման հնարավորությամբ, իսկ արդյունարար գնահատականը փոխվում է եզրափակիչ քննության միավորների տարբերությամբ: Օրինակ, եթե եզրափակիչ քննության 2 միավորը լուծարքում բարձրացվել է մինչև 5, ապա

$$Գ_{արդ.} = 7 + (5 - 2) = 10:$$

8. Եթե մագիստրոսական ծրագրում դասընթացի գնահատման արդյունարար միավորը գտնվում է 5÷7 միավորի տիրույթում, ապա թույլատրվում է դասընթացի վերահանձնում նախորդ կետում բերված պահանջներին համապատասխան, ընդ որում՝ նույն կիսամյակի ընթացքում ուսանողն ունի յուրաքանչյուր այդպիսի դասընթաց վերահանձնելու ընդամենը մեկ հնարավորություն: 4 միավոր և ցածր արդյունք ցուցաբերած մագիստրոսական ծրագրով սովորող ուսանողը պարտավոր է կրկնել դասընթացը:
9. Ուսումնառության 1-ին կիսամյակում 2 դասընթաց չհանձնած մագիստրոսական ծրագրով սովորող ուսանողին հնարավորություն է տրվում կրկնել դասընթացները հաջորդ աշնանային կիսամյակում՝ շարունակելով ուսումը: 2-րդ և 3-րդ կիսամյակներում որևէ դասընթաց չհանձնած ուսանողը ազատվում է համալսարանից:
10. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:
11. Կրեդիտների կուտակման գործառույթի շնորհիվ վերանում է տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած և այն վերսկսող ուսանողի կողմից կիսամյակն ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

8. Մագիստրոսի ծրագրի ուսումնական կառուցվածքի կազմակերպման ընթացակարգը

1. Ուսումնառության առաջին կիսամյակի սկզբում մագիստրոսական ծրագրում ընդգրկված ուսանողը ծրագրի ղեկավարից ստանում է ուսումնառության իր անհատական ծրագրի ձևաթերթը, որտեղ նախապես լրացված են ուսումնական և հետազոտական կառուցվածքների բաղկացուցիչ դասընթացները և գիտակրթական մոդուլները՝ բացառությամբ կամընտրական դասընթացների:
2. Անհատական ծրագրում տրվում է դասընթացների ընտրացանկն ըստ ուսման տարիների և կիսամյակների՝ դրանց հատկացված կրեդիտների հետ միասին: Մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողների ուսումնառության անհատական ծրագրի ձևաթերթը բերված է *հավելված 3*-ում:

3. Ուսման առաջին շաբաթում ուսանողն իր ուսումնական խորհրդատուի հետ միասին լրացնում է կամընտրական դասընթացները ուսումնառության իր անհատական ծրագրում, որն այնուհետև հաստատվում է ծրագրի ղեկավարի կողմից և ներկայացվում դեկանատ:
4. Անհատական ծրագրում ներառված տվյալ կիսամյակի կամընտրական դասընթացներին ուսանողների գրանցումն իրականացվում է համապատասխան ֆակուլտետում: Բոլոր ուսանողները պետք է գրանցված լինեն մինչև տվյալ կիսամյակի 2-րդ շաբաթվա վերջը: Սահմանված վերջնաժամկետից հետո դասընթացներին մասնակցելու բոլոր տեսակի գրանցումները դադարեցվում են:
5. Հետագա կիսամյակների ընթացքում, անհրաժեշտության դեպքում, ուսանողը կարող է փոփոխություններ կատարել ուսումնառության իր անհատական ծրագրի դասընթացների ընտրացանկում՝ նախապես ստանալով ուսումնական խորհրդատուի և ծրագրի ղեկավարի համաձայնությունը: Ուսումնառության անհատական ծրագրի փոփոխությունների ձևաթերթը բերված է *հավելված 4*-ում:
6. Դասընթացի փոփոխությունը կարող է կատարվել նաև մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման նախաձեռնությամբ, եթե տվյալ դասընթացում բավարար թվով մասնակիցներ չեն ընդգրկվել:
7. Անհատական ծրագրի փոփոխությունը ենթադրում է դասընթացի բացթողում, նոր դասընթացի ընտրություն (ավելացում) ընտրացանկում, որի իրականացման ընթացակարգը հետևյալն է.
   – ուսանողը կարող է բաց թողնել իր ընտրած դասընթացը ուսումնական խորհրդատուի համաձայնությամբ՝ մինչև պարապմունքների 2-րդ շաբաթվա վերջը,
   – տվյալ կիսամյակի 3-րդից մինչև 4-րդ շաբաթվա վերջը բացթողումը ձևակերպելու համար ուսանողը պետք է ստանա նաև դասընթացը վարող դասախոսի և ծրագրի ղեկավարի համաձայնությունը,
   – ուսանողն իր ընտրացանկում նոր դասընթաց կարող է ավելացնել ուսումնական խորհրդատուի և դասընթացը վարող դասախոսի համաձայնությամբ՝ մինչև պարապմունքների 2-րդ շաբաթվա վերջը:
8. Նախորդող կրթական աստիճանի մասնագիտության փոփոխությամբ մագիստրոսական ծրագրում ընդգրկված ուսանողների համար ուսումնառության 1-ին շաբաթվա ընթացքում կարող են նշանակվել լրացական դասընթացներ: Լրացական դասընթացներ նշանակելու հարցը համապատասխան հարցազրույցից հետո առաջադրվում է մագիստրոսական ծրագրի ղեկավարի կողմից և համաձայնեցվում մասնագիտացնող ուսումնական ստորաբաժանման հետ:
9. Ուսանողը պատասխանատու է ուսումնառության իր անհատական ծրագրի ճշտության և ամբողջականության ապահովման համար:
10. Համալսարանն իրեն իրավունք է վերապահում հանել ցանկացած դասընթացի առաջադրումը տվյալ կիսամյակում, եթե դրանում ընդգրկված չեն բավարար թվով ուսանողներ:

9. Մագիստրոսի ծրագրի հետազոտական կառուցամասի կազմակերպման ընթացակարգը

1. Կիսամյակի առաջին երկու շաբաթվա ընթացքում մագիստրոսական ծրագրի ղեկավարը կազմում և ուսանողներին է տրամադրում տվյալ կիսամյակի հետազոտական աշխատանքների պլանը (ծրագրի հետազոտական կառուցամասով նախատեսվող գիտակրթական մոդուլների կազմակերպման ժամանակացույցը)։
2. Ծրագրի հետազոտական կառուցամասով նախատեսված գիտակրթական մոդուլների կատարողականի ստուգման համար կիրառվում է ատեստավորում։ Գիտական ղեկավարի սեմինարի, ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքի և պրակտիկաների ատեստավորումը կատարում է մագիստրանտի գիտական ղեկավարը, որը լրացված ատեստավորման թերթիկը անձամբ հանձնում է դեկանատ։
3. Ուսումնառության 1-ին կիսամյակի ավարտին ծրագրի համապատասխան հետազոտական մոդուլից ատեստավորում չստացած ուսանողին հնարավորություն է տրվում շարունակելու ուսումը 2-րդ կիսամյակում՝ այդ ընթացքում կատարելով չատեստավորված մոդուլով նախատեսված անավարտ աշխատանքը։ 2-րդ և 3-րդ կիսամյակներում որևէ հետազոտական մոդուլով չատեստավորված ուսանողն ազատվում է համալսարանից։

10. Դասընթացների տեղեկագիրքը

1. Համալսարանը յուրաքանչյուր ուստարվա համար հրապարակում է *ԵՊՀ դասընթացների տեղեկագիրք* (տպագրված և/կամ կայքէջում տեղադրված էլեկտրոնային տարբերակով), որը նաև կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց է։
2. *Դասընթացների տեղեկագիրքը* նախատեսված է համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է.
   ա) ընդհանուր տեղեկություն Համալսարանի վերաբերյալ՝ տեսակը և կարգավիճակը, ուսումնական ստորաբաժանումները, առաջարկվող կրթական ծրագրերը, ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ներքուհական հիմնական կանոնները (հատկապես կրեդիտների կուտակման, պաշտոնական ճանաչման և փոխանցման վերաբերյալ) և այլն,
   բ) տեղեկություն կրթական ծրագրերի վերաբերյալ.
      – ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, մուտքի շեմային պահանջները, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, կրթությունը շարունակելու հնարավորությունները, ծրագրի ընդհանուր կառուցվածքը և բովանդակությունը, քննական կանոնները և գնահատման կարգը, ավարտական ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատ-

վությունը և այլն,

– առանձին դասընթացի նկարագրությունը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի գիտելիքներով ու կարողություններով, դասընթացի համառոտագիրը (հակիրճ բովանդակությունը/թեմաները), անհրաժեշտ նախապայմանները, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները, դասավանդման լեզուն և այլն,

գ) ընդհանուր տեղեկատվություն ուսանողների համար.

– նյութական օգնության հնարավորությունները, ուսման վարձերի զեղչման և փոխհատուցման պայմաններն ու կանոնները, գործող ուսանողական ծառայությունները, ուսանողներին հասանելի ուսումնական/լաբորատոր ենթակառուցվածքները և այլն։

11. Կրթական ծրագրերի եզրափակիչ ատեստավորումը

11.1. Բակալավրի ծրագիր

1. Ուսանողի կողմից բակալավրի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով և պաշտպանությամբ և ծրագրի ավարտից հետո կազմակերպվող մասնագիտական ամփոփիչ քննությամբ, որը չի կրկնում կիսամյակային քննություններով հաստատված կրթական արդյունքների գնահատումները։
2. Ավարտական աշխատանքի թեման և ղեկավարը ընտրվում և հաստատվում են ավարտական ուստարվա առաջին 2 շաբաթվա ընթացքում, իսկ աշխատանքը կատարվում է ավարտական ուստարվա ընթացքում։
3. Ավարտական աշխատանքի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում է ուսումնառության վերջին 4 շաբաթը, որոնց ընթացքում նախատեսվում է.

   ա) աշխատանքի ներկայացումը մասնագիտացնող ուսումնական կառույցի (ամբիոնի) քննարկմանը։ Աշխատանքի հետ ներկայացվում է ղեկավարի կարծիքը, որը ներառում է կատարված աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն։

   բ) Ավարտական աշխատանքի նախնական քննարկում մասնագիտացնող ամբիոնում՝ աշխատանքի հեղինակի մասնակցությամբ։ Էական դիտողությունների առկայության դեպքում բակալավրի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և այն ներկայացնել լրացուցիչ քննարկման։ Դրական եզրակացության դեպքում մասնագիտացնող ամբիոնի կողմից աշխատանքը երաշխավորվում է պաշտպանության։

   գ) Մասնագիտացնող ուսումնական կառույցի (ամբիոնի) կողմից աշխա-

տանքը գրախոսության ուղարկելու կազմակերպում:

դ) Ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և բակալավրի աստիճանի շնորհում:

4. Ավարտական աշխատանքի պաշտպանությունը և մասնագիտական ամփոփիչ քննության անցկացումն իրականացվում են համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված կարգի:
5. Ավարտական աշխատանքի պաշտպանության և մասնագիտական ամփոփիչ քննության գնահատումը կատարվում է *աղյուսակ 4*-ում ներկայացված 20 միավորանոց սանդղակով:
6. Ավարտական աշխատանքի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանվում են գնահատման միավորների հետևյալ չափաքանակները.

Աղյուսակ 6.

Թիվ	Չափանիշ	Առավելագույն միավորը
1	Ներկայացման որակը	6
2	Ձևակերպման որակը	6
3	Կատարման ինքնուրույնության աստիճանը	6
4	Արդիականությունը/նորույթը	2
	Ընդամենը՝	**20**

7. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների կողմից ավարտական աշխատանքի գնահատումները կատարվում են սահմանված նմուշի գնահատման ձևաթերթում (տե՛ս *հավելված 5*):

11.2. Մագիստրոսի ծրագիր

1. Ուսանողի կողմից մագիստրոսի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է մագիստրոսական ատենախոսության կատարումով և պաշտպանությամբ:
2. Մագիստրոսական ատենախոսության գիտական ղեկավարի նշանակումը և թեմայի հաստատումը իրականացվում է 1-ին կիսամյակում: Համապատասխան ընթացակարգը ներառում է.
   - ծրագրի ղեկավարի հետ խորհրդատվությունների անցկացում, որոնց ընթացքում ճշգրտվում են մագիստրանտի հետազոտական հետաքրքրությունները, կազմակերպվում է հանդիպում տվյալ մագիստրոսական ծրագրի ատենախոսությունների ղեկավարների հետ,
   - գիտական ղեկավարի հետ թեմայի ընտրության վերաբերյալ խորհրդատվությունների անցկացում,
   - մագիստրոսական ատենախոսության համաձայնեցված թեմաների և գիտական ղեկավարների թեկնածությունների ներկայացում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի (միջամբիոնային հանձնախմբի) հաստատմանը, գիտական ղեկավարի նշանակումը և հրամանագրումը:

3. Մագիստրանտի կողմից գիտական ղեկավարի հետ համաձայնեցված ատենախոսական առաջարկի պատրաստում և ներկայացում ամբիոնում (միջամբիոնային հանձնախմբում) քննարկման և հաստատման համար, որն իրականացվում է 2-րդ կիսամյակում: Ատենախոսական առաջարկը պետք է պարունակի թեմայի բնագավառում առկա իրադրության նկարագրությունը, աշխատանքի նպատակը, ածանցյալ խնդիրների առաջադրումն ու սահմանումը, դրանց հավանական լուծումները, հետազոտական մեթոդները և գրականության ցանկը: Ատենախոսական աշխատանքի կատարումը շարունակվում է ուսուցման 3-րդ և 4-րդ կիսամյակներում:
4. Մագիստրոսական ատենախոսության պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.
   ա) ատենախոսության ներկայացում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման քննարկմանը պաշտպանությունից 4 շաբաթ առաջ: Ատենախոսության հետ ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը պետք է ներառի կատարված աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն,
   բ) ատենախոսության նախնական քննարկում մասնագիտացնող ամբիոնում (միջամբիոնային հանձնախմբում) մագիստրոսական ծրագրի ղեկավարի, մագիստրանտի գիտական ղեկավարի և մագիստրանտի պարտադիր մասնակցությամբ մեկ շաբաթյա ժամկետում: Էական դիտողությունների առկայության դեպքում մագիստրոսի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Լրացուցիչ քննարկման արդյունքում դրական եզրակացության դեպքում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման կողմից ատենախոսությունը երաշխավորվում է պաշտպանության,
   գ) մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման կողմից աշխատանքի արտաքին գրախոսության կազմակերպում, որի արդյունքում ոչ ուշ, քան պաշտպանությունից 3 օր առաջ մասնագիտացնող ամբիոնին (միջամբիոնային հանձնախմբին) է ներկայացվում ատենախոսության վերաբերյալ գրախոսականը,
   դ) մագիստրոսական ատենախոսության հրապարակային պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և մագիստրոսի աստիճանի շնորհում:
5. Մագիստրոսական ատենախոսության պաշտպանությունն իրականացվում է համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված կարգի:
6. Մագիստրոսական ատենախոսության գնահատումը կատարվում է *աղյուսակ 4*-ում ներկայացված 20 միավորանոց սանդղակով:
7. Մագիստրոսական ատենախոսության գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանվում են գնահատման միավորների հետևյալ չափաքանակները.

Աղյուսակ 6.

Թիվ	Չափանիշ	Առավելագույն միավորը
- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված ելքային կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

2. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ

2.1. Պարտադիր դասընթացներ

1401/B01. Հայոց լեզու և գրականություն – 1 (2 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (8 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)
1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի հնչյունական և բառային առանձնահատկությունները, ոճագիտական հիմնական հասկացությունները, նպաստել խոսքի թերությունների վերացմանը, ծանոթացնել հայ դասական գրականության նմուշներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայոց լեզվի հնչյունական և բառային առանձնահատկությունները.
2. կտիրապետի իր մասնագիտական բառապաշարին, տերմինաբանությանը, կկարողանա գրական հայերենով շարադրել մտքերը, գործնականում կկիրառի լեզվառճական հնարները.
3. կծանոթանա հայ հեղինակների գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործություններին, կվերլուծի դրանք:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պատմական համառոտ ակնարկ հայերենի զարգացման փուլերի մասին: Հայերենի տեղը աշխարհի լեզուների շարքում: ***Թեմա 2***՝ Հնչյունաբանություն. հայերենի հնչյունական համակարգը: ***Թեմա 3***՝ Շեշտ, վանկ, տողադարձ. հնչյունափոխություն: Հայերենի ուղղագրության սկզբունքները: ***Թեմա 4***՝ Բառագիտություն. բառերի ձևիմաստային խմբերը: ***Թեմա 6***՝ Բառապաշար. Դասակարգման սկզբունքները. մասնագիտական բառապաշար. տերմիններ: Հայերենի բառակազմական միջոցները: ***Թեմա 7***՝ Հայերենի գործառական ոճերը: ***Թեմա 8*** 5-րդ դարի հայ պատմագրությունը: ***Թեմա 9*** Հայ հին և միջնադարյան քնարերգությունը: Գրական երկերի վերլուծություն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է նախօրոք տրվող ստուգարքային թելադրության դրական գնահատականի և եզրափակիչ բանավոր պատասխանի հիման վրա:

1401/B02. Հայոց լեզու և գրականություն – 2 (2 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ, (8 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)
2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական համակարգերը, ձևաբանական և շարահյուսական ոճա-

գիտության հիմնական հասկացությունները, ծանոթացնել հայ դասական գրականության նմուշներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները.
2. կկարողանա ճիշտ գործածել քերականական ձևերը, գործնականում կկիրառի ձևաբանական և շարահյուսական լեզվառճական հնարները. կկարողանա վարել երկխոսություն և բանավեճ.
3. կծանոթանա հայ հեղինակների գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործություններին, կվերլուծի դրանք:

Բովանդակությունը

Թեմա 1՝ Ձևաբանություն. խոսքի մասերի դասակարգումը: ***Թեմա 2***՝ Ժամանակակից հայերենի թեքվող խոսքի մասերը: ***Թեմա 3***՝ Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը: ***Թեմա 4***՝ Շարահյուսություն. կապակցման միջոցներ և եղանակներ: ***Թեմա 5***՝ Պարզ նախադասություն: ***Թեմա 6***՝ Բարդ նախադասություն. փոխակերպում և դերբայական դարձված: ***Թեմա 7***՝ Ուղղակի և անուղղակի խոսք: ***Թեմա 8***՝ Ժամանակակից հայերենի կետադրությունը: ***Թեմա 9***՝ Ձևաբանական և շարահյուսական ոճաբանություն: ***Թեմա 10***՝ Ճարտասանական հմտություններ. բանավեճի արվեստ. երկխոսության վարում և կառավարում: ***Թեմա 11***՝ Հայ նոր գրականության սկզբնավորումը: 19-20-րդ դարերի հայ գրականությունը: ***Թեմա 12***՝ Հայ նորագույն գրականություն: Գրական երկերի վերլուծություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր՝ նախաքննական թելադրության դրական արդյունքի դեպքում: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր: Առաջին երկու հարցերը հայոց լեզվին վերաբերող տեսական հարցեր են, երրորդը՝ հայ գրականությանը վերաբերող հարց, չորրորդը՝ գործնական առաջադրանք:

1704/B01. Ռուսաց լեզու-1 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ գործնական պարապմունք

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ապահովել ուսանողի տիրապետումը ռուսաց լեզվի համակարգին, ապահովել բանավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակությունները՝ հաղորդակցվելու համար լեզվական տարբեր ոլորտներում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի ռուսաց լեզվի քերականական կառուցվածքին,
2. կկարողանա ճիշտ կազմել իր բանավոր խոսքը,
3. կկարողանա մասնակցել երկխոսությունների,

4. կկարողանա վերլուծել, մեկնաբանել և վերարտադրել գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հնչյունաբանություն. ձայնավորների և բաղաձայների դասակարգումը, արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: ***Թեմա 2.*** Բառագիտություն. պատկերացում բառիմաստի մասին, բառային միավորների հարաբերակցության ձևերը. ***Թեմա 3.*** Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները /բառ, ձևույթ/, խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: ***Թեմա 4.*** Շարահյուսություն. Շարահյուսական միավորները /բառակապակցություն, պարզ նախադասություն/, նախադասության գլխավոր անդամները, նախադասության տեսակները ըստ կառուցվածքի և հաղորդակցման ուղղվածության:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքը անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

1704/B02. Ռուսաց լեզու-2 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ գործնական պարապմունք

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ապահովել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը՝ հաղորդակցվելու համար լեզվական տարբեր ոլորտներում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ռուսաց լեզվի ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները,
2. կտիրապետի տվյալ մասնագիտության տերմինային համակարգին,
3. կտիրապետի մասնագիտական տեքստին հատուկ շարահյուսական կառուցվածքներին,
4. կկարողանա վերարտադրել մասնագիտական տեքստը, նաև ներկայացնել նրա բովանդակությունը սեղմ և ընդարձակ,
5. կկարողանա թարգմանել մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն:

Բովանդակությունը.

Թեմա 1. Բառագիտություն. դարձվածներ և դարձվածների դասակարգումը: ***Թեմա 2*** Ձևաբանություն. խոսքի մասերի քերականական կարգերը: Բառակազմություն. բառի ձևականական կազմը: ***Թեմա 3.*** Շարահյուսություն. միակազմ նախադասություն, միակազմ նախադասության դասակարգումը: Բարդ նախադասություն, բարդ նախադասության դասակարգումը: ***Թեմա 4.*** Ուղղագրություն. ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները: ***Թեմա 5.*** Մասնագիտական տեքստի կառուցվածքը. տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքը անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

1602/B01. Անգլերեն լեզու -1 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ գործնական պարապմունք

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսուցանել մասնագիտական անգլերեն (Professional English) հումանիտար և սոց. գիտությունների ֆակուլտետներում, (ուսանողները հանձնել են անգլերեն լեզվի ընդունելության քննություն), ինչպես նաև ընդհանուր անգլերեն (General English) տեխնիկական և բնագիտական ֆակուլտետներում, որտեղ (ուսանողները չեն հանձնել անգլերեն լեզվից ընդունելության քննություն):

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի անգլերենի քերականության հիմնական դրույթներին և բառային ֆոնդին,
2. կծանոթանա մասնագիտական անգլերենի գրավոր և բանավոր խոսքի հիմունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1 ՝ Անգլերեն լեզվով մասնագիտական ընթերցանության հմտությունների ձևավորում: ***Թեմա 2*** ՝ Մասնագիտական ընթերցանության տիրույթում գլխավոր և աջակցող մտքերի տարբերակում և ուսուցում: ***Թեմա 3*** ՝ Հիմնական տերմինների ուսուցում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

1602/B02. Անգլերեն լեզու -2 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ գործնական պարապմունք

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսուցանել մասնագիտական անգլերեն (Professional English) հումանիտար և սոց.գիտությունների ֆակուլտետներում, ինչպես նաև տեխնիկական և բնագիտական ֆակուլտետներում ըստ անցումային ժամանակաշրջանի առանձնահատկությունների և պահանջների:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ձեռք կբերի ունակություն ուսումնասիրել անգլերեն լեզվով մասնագիտական աղբյուրներ,
2. կկարողանա ընկալել և վերարտադրել իր մասնագիտական ոլորտին

առնչվող գրականությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հիմնական մասնագիտական տերմինները ուսումնասիրելու և կիրառելու ունակության զարգացում: ***Թեմա 2՝*** Մասնագիտական տեքստի հիմնական բովանդակության ընկալում և վերարտադրում: ***Թեմա 3՝*** Մասնագիտական գրավոր խոսքի հիմնական դրույթների ուսուցում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

1604/B01. Գերմաներեն լեզու-1 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ գործնական պարապմունք

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ համակարգել իրենց նախնական գիտելիքները գերմաներեն լեզվի հնչյունաբանության, քերականության և բառագիտության բնագավառներում և այդպիսով ստեղծել անհրաժեշտ հիմք՝ լեզվի ուսումնասիրության հաջորդ փուլերի համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի գերմաներենի հնչյունական կողմի հիմնական առանձնահատկությունները,
2. կտիրապետի ծրագրով նախատեսված առաջին փուլի համար անհրաժեշտ նվազագույն բառապաշարին,
3. կյուրացնի նշված փուլի համար անհրաժեշտ քերականական նյութը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գերմաներենի արտասանական նորմերը: Արտասանություն և գրություն: Հնչյունաբանական տառադարձություն: Գերմաներենի ձայնավորական և բաղաձայնական համակարգերը: ***Թեմա 2՝*** Քերականական կարգեր, դրանց արտահայտման միջոցները գերմաներենում: Գոյականի, ածականի և բայի ձևաբանական և քերականական նշանակությունները: Գոյականի հոլովման տիպերը: Հոլովների նշանակությունը և գործածությունը: Համեմատության աստիճանների կարգ: Լիիմաստ և սպասարկու բայեր: Նախդիրների գործառույթը նախադասության մեջ: ***Թեմա 3՝*** Պարզ նախադասություն, դրա շարադասությունը: Ուղիղ և շրջուն շարադասություն: ***Թեմա 4՝*** Թեմատիկ բառապաշարը ընդգրկում է հետևյալ թեմաները՝ «Ընտանիք», «Իմ մասնագիտությունը», «Համալսարան», «Իմ հանգստյան օրը», «Ճանապարհորդություն», «Գերմանիա»:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է նախապես անցկացված գրավոր թեստի արդյունքների և բանավոր հարցման հիման վրա:

1604/B02. Գերմաներեն լեզու-2 (4 կրեդիտ)
Շաբաթական 4 ժամ գործնական պարապմունք
2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ զարգացնել ուսման առաջին փուլում ձեռք բերած գիտելիքները գերմաներենի ձևաբանության և քերականության բնագավառներում, ինչպես նաև ընդլայնել թեմատիկ բառապաշարը, ակտիվացնել այդ բառապաշարը՝ համապատասխան երկխոսությունների և տեքստերի վերարտադրման նպատակով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. գործնականում կկիրառի գերմաներենի ձևաբանական և քերականական այն կառույցները, որոնք ուսումնասիրվում են այս փուլում,
2. կտիրապետի համապատասխան թեմատիկ բառապաշարին, որը վերաբերում է մասնագիտական ոլորտին,
3. կվարի երկխոսություններ, կկատարի համապատասխան տեքստերի վերար-տադրություն և կգրի փոխադրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գոյականի նշանակությունը և շարահյուսական գործառույթները: Հոգնակի թվի կազմության հիմնված տիպերը: Անհոգնական և անեզական գոյականներ: Գոյականների հոլովման համակարգը և գերմաներենի հոլովների կիրառական նշանակությունները: ***Թեմա 2***՝ Բայերի ձևաբանական և իմաստաքերականական դասակարգումը: Սուբյեկտիվ և օբյեկտիվ բայեր: Անցողական և անանցողական, երկսեռ բայեր: Բայի քերականական կարգերը: ***Թեմա 3***՝ Նախադասությունների դասակարգումը ըստ հնչերանգի և ըստ կազմության: Միավորյալ նախադասություններ: Ստորոգյալի համաձայնեցումը ենթակայի հետ: ***Թեմա 4***՝ Թեմատիկ բառապաշարը ընդգրկում է «Գերմանիայի մեծ քաղաքները», «Ընկերական շրջապատում», «Տնտեսություն և քաղաքականություն», «Իմ զբաղմունքը», «Իմ ուսումը», «Հայաստանի պատմությունից», «Համագործակցություն» և այլն:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է նախապես անցկացված գրավոր թեստի արդյունքների և բանավոր հարցման հիման վրա:

1605/B01. Ֆրանսերեն լեզու-1 (4 կրեդիտ)
Շաբաթական 4 ժամ, գործնական պարապմունք
1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է թարմացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականական և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա: Այս փուլում ստացած գիտելիքները հիմք են հանդիսանում հետագա՝ առավել խորացված ուսումնասիրության համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ճիշտ արտասանել ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները,
2. կկարողանա ճիշտ հնչերանգով ձևակերպել հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները դադար, շեշտ, հիմնական հնչերանգ, մեղեդային եզրափակում, տեմպ,
3. կիմանա ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծել բառը և նախադասությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ռիթմիկ խմբեր: Շեշտ: Enchaînement. Liaison. ***Թեմա2***՝ Հատուկ և հասարակ գոյական: Գոյականի սեռը, թիվը: Սեռի արտահայտությունը հոդերի և ածանցների միջոցով: ***Թեմա3***՝ Որոշյալ և անորոշ հոդ: Մասնական հոդը որպես անորոշ քանակ արտահայտելու միջոց: Միաձուլված հոդ: Հոդը չօգտագործելու դեպքերը: ***Թեմա 4***՝ Ցուցական, ստացական, հարցական և բացականչական, անորոշ ածականներ: Ածականի համաձայնությունը գոյականի հետ: ***Թեմա 5***՝ Քանակական և դասական թվական: Քանակական թվականի գործածությունը: ***Թեմա 6***՝ Անձնական անշեշտ դերանուններ, դրանց գործածությունը որպես ենթակա, ուղիղ և անուղղակի խնդիր: Անձնական շեշտված դերանուններ:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է գրավոր թեստի արդյունքների և բանավոր հարցման հիման վրա:

1605/B02. Ֆրանսերեն լեզու-2 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, գործնական պարապմունք

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ճիշտ արտասանել ֆրանսերենի հնչյունները, ճիշտ արտասանությամբ ձևակերպել նախադասությունը,
2. կկարողանա լսելով հասկանալ և վերաշարադրել տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անծանոթ բառ),
3. կկարողանա զրույց վարել անցած թեմաներով:

Բովանդակությունը.

Թեմա1՝ Գոյական անուն, միայն հոգնակի թվով գործածվող գոյականներ. Les funérailles, les entrailles. Բաղադրյալ գոյականների հոգնակի թվի կազմությունը (des coux-fleurs, des casse-croute և այլն): ***Թեմա 2***՝ Ածականի իմաստի փոփոխութ-

յունը կախված նրա դիրքից՝ un homme grand – un grand homme. Անորոշ դերանվանական ածականներ: ***Թեմա 3***՝ Հարաբերական դերանուններ, դրանց ձևերը և գործածությունը նախադասության մեջ՝ qui, que, dont, ou, lequel և այլն (դասակարգում): ***Թեմա 4***՝ Պայմանական եղանակ, կազմությունը և գործածությունը համադաս և ստորադասական նախադասություններում: Ըղձական եղանակ: Սահմանական եղանակը ուրիշի ուղղակի խոսքում:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է գրավոր թեստի արդյունքների և բանավոր հարցման հիման վրա:

1704/B03. Ռուսաց լեզու-3 (Լրացուցիչ դասընթաց) (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ գործնական պարապմունք

3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է՝ զարգացնելով ուսանողի լեզվային հմտությունները, ապահովել նրա տիրապետումը մասնագիտական լեզվին և ազատ օգտվելը մասնագիտական գրականությունից:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ազատ կտիրապետի մասնագիտական լեզվի տերմինաբանա յին համակարգին,
2. կկարողանա մեկնաբանել և վերարտադրել մասնագիտական տեքստեր
3. կկարողանա ինքնուրույն կազմել կապակցված տեքստ մասնագիտական թեմայով,
4. կկարողանա կազմել զեկույցներ և ռեֆերատներ մասնագիտական թեմաներով
5. կկարողանա թարգմանել մասնագիտական տեքստեր տարբեր բարդության:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ոճաբանություն. լեզվի գիտական ոճ, գիտական ոճին բնորոշ շարահյուսական կառուցվածքներ, գիտական կապակցված տեքստի կառուցման միջոցներ՝ բառային, ձևաբանական և շարահյուսական: ***Թեմա 2.*** Ուղղագրություն. ուղղագրության հիմնական կանոնները: ***Թեմա 3.*** Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրներ. ***Թեմա 4.*** Գիտական զեկույցների և մասնագիտական ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքներ:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց. 1-ին և 2-րդ հարցերը՝ 6-ական միավոր, 3-րդ հարցը /մասնագիտական տեքստի թարգմանություն հայերենից ռուսերեն/՝ 8 միավոր:

1602/B03. Անգլերեն լեզու – 3 (4 կրեդիտ)
Շաբաթական 4 ժամ գործնական պարապմունք
3–րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է խորացվաց ուսուցանել նեղ մասնագիտական անգլերեն (Professional English) յուրաքանչյուր ֆակուլտեի առարկայական բովանդակության տիրույթում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի գիտական երկխոսության համար պահանջվող հիմնական մասնագիտական բառապաշարին և տերմիններին,
2. կկարողանա ազատ զրույց վարել և քննարկել մասնագիտական ոլորտին առնչվող թեմաների շուրջ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մասնագիտական բանավոր խոսքի զարգացում: ***Թեմա 2՝*** Մասնագիտական քննարկում կատարելու հմտությունների ուսուցում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է **3** հարց: Առաջին առաջադրանքն է՝ կարդալ, թարգմանել անծանոթ տեքստը մասնագիտական թեմայով: Երկրորդ առաջադրանքն է՝ մեկնաբանել ծանոթ մասնագիտական տեքստը: Երրորդ առաջադրանքն է՝ խոսել մասնագիտական ոլորտի վերաբերյալ:

1604/B03. Գերմաներեն լեզու-3 (Լրացուցիչ դասընթաց) (4 կրեդիտ)
Շաբաթական 4 ժամ գործնական պարապմունք
3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ամբողջացնել բակալավրատի ընդհանուր կրթական մակարդակում ուսանողների գիտելիքները գերմաներեն լեզվից և ապահովել անհրաժեշտ գիտելիքներ համապատասխան մասնագիտական գործունեության համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա կարդալ, ընկալել, վերարտադրել և թարգմանել ինչպես ընդհանուր հաղորդակցական նշանակության, այնպես էլ նեղ մասնագիտական բնույթի տեքստեր: Այստեղ նկատի է առնվում նաև ուսանողի հաղորդակցական կարողությունների զարգացումը՝ երկխոսությունների, պատումների և հարցադրումների նյութի վրա:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Սահմանական եղանակի ակտիվ և ներգործական սեռերի բոլոր ժամանակների կազմությունն ու գործառույթը: Ժամանակաձևերի բացարձակ և

հարաբերական գործառույթը: *Թեմա 2՝* Հրամայական եղանակի ձևերը և նրանց քերականական հոմանիշները: Երկանդամ, եռանդամ և միանդամ կրավորական կառույցները: *Թեմա 3՝* Բայական և անվանական ստորոգյալի տարբեր տեսակները: Պատճառի, նպատակի, պայմանի պարագաների արտահայտության միջոցները: Ընդարձակ հատկացուցիչ: Բարդ ստորադասական նախադասությունների բոլոր տեսակները: Ուղղակի և անուղղակի խոսք պարունակող նախադասություններ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Հանրագումարային քննություն: Քննությունը բանավոր է՝ **20** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **3** հարց: Առաջին հարցը՝ բառագիտական և ընդհանուր լեզվական բառապաշարի ստուգում անծանոթ տեքստի հիման վրա – **8** միավոր: Երկրորդ հարցը՝ ծանոթ տեքստի վերարտադրում – **4** միավոր: Երրորդ հարցը՝ քերականական նյութ – **8** միավոր:

1605/B03. Ֆրանսերեն լեզու-3 (Լրացուցիչ դասընթաց) (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ, գործնական պարապմունք

3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է հանրագումարի բերել նախորդ մակարդակներում ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա իր մասնագիտական հիմնական տերմինների նշանակությունը, ներառյալ երկրորդ կիսամյակում սովորած տերմինոլոգիան 300 միավոր,
2. կկարողանա առանց բառարանի կարդալ միջին բարդության մասնագիտական տեքստեր,
3. կկարողանա առանց բառարանի կարդալ և վերաշարադրել միջին բարդության հասարակական-քաղաքական տեքստեր:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գոյականների իգական սեռի կազմության տարբեր միջոցների դասակարգում, քերականորեն (հոդի և այլ մասնիկների օգնությամբ), ձևաբանորեն (բառի ձևի փոփոխություն, ածանցներ), բառային (բառի տարբեր ձևեր): Երկու սեռ ունեցող գոյականներ: *Թեմա 2՝* Եղանակավորման քերականական արտահայտությունը, ֆրանսերեն լեզվի խոնարհման բնութագիրը՝ indicatif (սահմանական եղանակ), conditionnel (պայմանական եղանակ), subjonctif (ըղձական եղանակ), impératif (հրամայական եղանակ): *Թեմա 3՝* Նախդիրների համակարգային դասակարգում, տարբեր հարաբերություններ արտահայտող նախդիրներ:

Քննություններ անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է գրավոր թեստի արդյունքների և բանավոր հարցման հիման վրա:

1106/B01. Հայոց պատմության հիմնահարցեր-1 (2 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)
1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի առաջին մասի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել ուսանողին հայոց պատմության հին շրջանի և միջնադարի պատմությանը, Հայկական լեռնաշխարհի աշխարհագրությանը և սեր առաջացնել մեր ժողովրդի բազմադարյան պատմության և նրա հերոսական անցյալի նկատմամբ՝ շեշտը դնելով հայոց պետականության պատմության ըստ ամենայնի լուսաբանման վրա:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի հայոց հին ու միջնադարյան պատմությանը,
2. կկարողանա քննադատական վերաբերմունք հանդես բերել հայոց պատմության հին ու միջին շրջանի կարևորագույն իրադարձություններին,
3. յուրացրած կլինի հայոց պետականությունների պատմությունը:

Բովանդակությունը.

Ներածություն. Հայոց պատմության առարկան: Հայաստանի աշխարհագրական դիրքը, տարածքը և բնական պայմանները: ***Թեմա 1՝*** Հայաստանը հնագույն շրջանում: ***Թեմա 2՝*** Հայաստանի հին շրջանի պատմությունը. Ուրատու, Երվանդունիների թագավորությունը: Արտաշեսյանների թագավորությունը: Արշակունիների թագավորությունը Հայաստանում 2-3-րդ դ: ***Թեմա 3՝*** Հայաստանը վաղ միջնադարում: ***Թեմա 4՝*** Հայաստանը զարգացած միջնադարում: ***Թեմա 5՝*** Հայաստանը ուշ միջնադարում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

1106//B02. Հայոց պատմության հիմնահարցեր -2 (2 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)
2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի երկրորդ մասի դասավանդումը նպատակ ունի ուսանողին մատուցել հայոց պատմության նոր և նորագույն շրջանը: Դասավանդման ընթացքում շեշտը դրվում է ազգային-ազատագրական շարժումների և Հայաստանի 1-ին, 2-րդ և 3-րդ հանրապետությունների պատմության վերլուծության վրա:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի հայ ժողովրդի նոր և նորագույն պատմությանը,
2. կկարողանա վերլուծել հայ ազգային-ազատագրական շարժման կարևորագույն իրադարձությունները, Հայաստանի 1-ին, 2-րդ և 3-րդ հանրապետությունների պատմությանը և դասեր քաղել անցյալի սխալներից,

3. կկարողանա գիտելիքները լայնորեն օգտագործել իր աշխատանքային, հատկապես կրթական գործընթացներում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայկական հարցը. առաջացումը, բովանդակությունը: Ազատագրական պայքարը 17-18-րդ դդ.: Ռուսաստանի տիրապետության հաստատումը Արևելյան Հայաստանում: ***Թեմա 2՝*** Հայ ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը (1870-ական թթ.- 20-րդ սկիզբ): Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները: Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը: Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: ***Թեմա 3՝*** Պանթուրքիզմը պետական քաղաքականություն Թուրքիայում: Արևմտահայության Մեծ եղեռնը: Հայաստանը 1917թ. փետրվարյան հեղափոխության շրջանում: Հոկտեմբերյան հեղափոխությունը և Հայաստանը: ***Թեմա 4՝*** Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ.: ***Թեմա 5՝*** Խորհրդային Հայաստանը 1920-1991 թթ.: ***Թեմա 6՝*** Հայաստանի երրորդ հանրապետությունը: ***Թեմա 7՝*** Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ 7, 7, 6 միավոր արժեքով:

1302/B01. Փիլիսոփայության հիմունքներ (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (48 ժամ դասախոսություն, 16 սեմինար պարապմունք)

3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է հիմնարար գիտությունների տվյալների փիլիսոփայական մեկնաբանությունների միջոցով աջակցել ուսանողի համակարգված աշխարհայացքի, քաղաքակրթական զարգացումների արդի միտումների և այդ համատեքստում ազգային մրցունակ համակարգի մասին մասնագիտական պատկերացումների ձևավորմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի մասին փիլիսոփայական հայեցակարգերի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները,
2. կհասկանա ճշմարտության և մոլորության, գիտելիքի և հավատի, ռացիոնալի և իռացիոնալի սահմանազատման փիլիսոփայական մեթոդաբանության դերն ու նշանակությունը,
3. կկարողանա վերլուծել և ամբողջական պատկերացում կազմել արդի քաղաքակրթական, քաղաքական մշակութային և մարդաբանական պատկերացումների, տեխնածին քաղաքակրթության գլոբալ հիմնախնդիրների մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Փիլիսոփայությունը հոգևոր մշակույթի համակարգում: Փիլիսո-

փայության առարկան և գործառույթները: ***Թեմա 2***՝ Քաղաքակրթության զարգացման պատմափիլիսոփայական ակնարկ: ***Թեմա 3***՝ Կեցության փիլիսոփայական ըմբռնումը: Մարդկային կեցության առանձնահատ-կությունները: ***Թեմա 4***՝ Հոգեկանի ծագման հիմնահարցը: ***Թեմա 5,*** Աշխարհի ճանաչողության հիմնահարցը: ***Թեմա 6***՝ Մարդու փիլիսոփայական ըմբռնումը: Փիլիսոփայական մարդաբանություն: ***Թեմա 7***՝ Հասարակության փիլիսոփայական ըմբռնումը: Պատմության իմաստը: ***Թեմա 8***՝ Սոցիալական կյանքի հիմնական ոլորտները: ***Թեմա 9***՝ Հասարակության հոգևոր կյանքը: Հոգևոր մշակույթ և քաղաքակրթություն: ***Թեմա 10***՝ Հասարակական առաջադիմությունը և մարդկության ապագան:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը բանավոր է՝ **20** միավոր առավեագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **3** հարց, 2 հարցը՝ **8-ական** միավոր, 1 հարցը՝ **4** միավոր:

2.2. Կամընտրական դասընթացներ

1001/B01. Տնտեսագիտություն (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ դասախոսություն,

4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողներին տալ անհրաշեշտ գիտելիքներ մարդկանց բարեկեցության բնույթի և պատճառների, շուկայական տնտեսության զարգացման օրինաչափությունների, հիմնախնդիրների, դրանց հնարավոր լուծումների, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության մասին, ինչը կնպաստի նաև ռացիոնալ տնտեսական վարքագծի ձևավորմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. յուրացրած կլինի տնտեսագիտության հիմունքները,
2. պատկերացում կունենա տնտեսության շուկայական համակարգի կենսագործունեության, հիմնական հասկացությունների, զարգացման օրինաչափությունների և ձեռնարկարություն ծավալելու պայմանների մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրները. Տնտեսագիտության առարկան: ***Թեմա 2***՝ Տնտեսության շուկայական համակարգը. եկամտի և արդյունքի շրջապտույտը: ***Թեմա 3***՝ Անհատական շուկաների վերլուծությունը, պահանջարկ և առաջարկ: ***Թեմա 4***՝ Սպառողի վարքի տեսություն: ***Թեմա 5***՝ Արտադրության ծախքերը: ***Թեմա 6***՝ Շուկայի կառուցվածքը և գնի ու արտադրության ծավալի որոշումը: ***Թեմա 7***՝ Ձեռնարկությունների և կազմակերպությունների տիպերը և տեսակները: ***Թեմա 8***՝ Ազգային հաշիվների համակարգը: ***Թեմա 9***՝ Մակրոտնտեսական կայունությունը և տատանումները: ***Թեմա 10***՝ Փողը և բանկային համակարգը. դրամավարկային քաղաքականությունը: ***Թեմա 11***՝ Պետական բյուջեն և ֆիսկալ քաղաքականությունը: ***Թեմա 12***՝ Միջազգային տնտեսական գործակցությունը:

Ստուգարքի անցկացման կարգը.

Կիսամյակի ընթացքում անցկացվում է երկու լսարանային ստուգողական աշխատանք, որոնցից դրական գնահատականներ ստանալու դեպքում ուսանողը համարվում է ստուգարքը հանձնած:

Ստուգողական աշխատանքների արդյունքներով ստուգարքը չհանձնած ուսանողների համար դասընթացի ավարտին կազմակերպվում է բանավոր հարցում 4 հարց պարունակող հարցատոմսերով:

1202/B01. Քաղաքագիտություն (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ դասախոսություն

4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների մոտ քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կստանա համապատասխան գիտելիքներ քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերի մասին,
2. պատկերացում կկազմի քաղաքագիտության առարկայական տիրույթի ու մեթոդաբանության մասին,
3. կունենա քաղաքագիտական վերլուծություններ կատարելու բավարար ունակություններ,
4. կկարողանա կողմնորոշվել գործնական քաղաքականության հիմնահարցերի մեկնաբանման հարցերում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Քաղաքագիտության առարկան և օբյեկտը: ***Թեմա 2՝*** Քաղաքականության ծագումը և էությունը: ***Թեմա 3՝*** Քաղաքական իշխանության էությունն ու կառուցվածքը: ***Թեմա 4՝*** Հասարակության քաղաքական համակարգը: ***Թեմա 5՝*** Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: ***Թեմա 6՝*** Քաղաքական կուսակցությունները և կուսակցական համակարգեր: ***Թեմա 7՝*** Ընտրություններ և ընտրական համակարգեր: ***Թեմա 8՝*** Քաղաքական գաղափարախոսություններ: ***Թեմա 9՝*** Քաղաքական էլիտա և լիդերություն:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

1901/B01. Իրավագիտություն (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ դասախոսություն

1-ին կամ 2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները: Նպատակներից է նաև ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների մշակումը, ինչպես նաև իրավական աշխարհայացքի ու մշակույթի ձեւավորումը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա պետության և իրավունքի մասին հիմնական սկզբունքները, հայեցակարգերը,
2. կիմանա օրենսդրության առանձին ճյուղերի իրավական կարգավորման հիմունքները,
3. կյուրացնի կարևոր իրավական հասկացությունները, եզրույթները,
4. ձեռք կբերի գիտելիքները գործնականում կիրառելու ունակություններ և հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հասարակություն և պետություն: ***Թեմա 2.*** Իրավունք: ***Թեմա 3.*** Իրավական կարգավորման կառուցակարգը և իրավունքի կենսագործումը: ***Թեմա 4.*** Իրավունքի ձևերը: ***Թեմա 5.*** Իրավունքի համակարգը: ***Թեմա 6.*** Օրինականություն, իրավաչափ վարքագիծ, իրավախախտում: ***Թեմա 7.*** Կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմնահարցերը: ***Թեմա8-9.*** Սահմանադրական իրավունք: ***Թեմա 10.*** Դատական իշխանություն և դատական համակարգ: ***Թեմա 11-16.*** Քաղաքացիական իրավունք: ***Թեմա 17.*** Աշխատանքային իրավունք: ***Թեմա 18.*** Ընտանեկան իրավունք: ***Թեմա 19.*** Էկոլոգիական իրավունք: ***Թեմա 20.*** Քրեական իրավունք: ***Թեմա 21-23.*** Դատավարական իրավունք: ***Թեմա 24.*** Միջազգային իրավունք:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց (նախապես տրամարդված հարցաշարից), որոնցից առնվազն 2-ին դրական պատասխանող ուսանողը ստանում է «ստուգված»:

1107/B01. Մշակութաբանություն (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ դասախոսություն

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և մշակույթ՝ հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել հայ և համաշխարհային մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. համապարփակ գիտելիքներ կունենա գիտության մեջ «մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումների և տեսությունների մասին,
2. ծանոթ կլինի մշակույթի կառուցվածքին, բաղադրիչներին, տիպաբանությանը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափություններին,
3. ընդհանուր գիտելիքներ կունենա համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումների օրինաչափությունների վերաբերյալ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: ***Թեմա 2՝*** Մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, գործառույթները և մեխանիզմները: Մշակութային գործընթացներ: ***Թեմա 3՝*** Մշակույթը «անհատ», «բնություն», «հասարակություն», «էթնոս», «քաղաքակրթություն» կատեգորիաների համատեքստում: ***Թեմա 4՝*** Համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումները մոտեցումներ հարցադրումներ, օրինաչափություններ: ***Թեմա 5՝*** Ժամանակակից մշակութային գործընթացները և գլոբալիզացիայի խնդիրը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

2101/B01. Կրոնների պատմություն (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ դասախոսություն

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դենոմինացիաների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա՝ ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնածիսական առանձնահատկություններ ունեն դրանք, ինչպես նաև Հայ առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները և տոնածիսական համակարգը,
2. կհասկանա ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները,
3. կկարողանա կատարել տարբեր կրոնների ու կրոնական ուղղությունների տարբերակում և քննական արժևորում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: ***Թեմա 2***՝ Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: ***Թեմա 3***՝ Բուդդայականություն, իսլամ, դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: ***Թեմա 4***՝ Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: ***Թեմա 5***՝ Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: ***Թեմա 6***՝ Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: ***Թեմա 7***՝ Հայ Առաքելական եկեղեցին V-IX դարերում: ***Թեմա 8***՝ Հայ Առաքելական եկեղեցին X-XIV դարերում: ***Թեմա 9***՝ Հայ Առաքելական եկեղեցին XV-XVIII դարերում: ***Թեմա 10***՝ Հայ Առաքելական եկեղեցին XIX-XX դարերում:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 3 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

3. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ

3.1. Պարտադիր դասընթացներ

2301/B01. Համակարգչից օգտվելու հմտություններ (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (8 ժամ դասախոսություն,
24 ժամ գործնական պարապմունք),
1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողին ծանոթացնել համակարգչի կառուցվածքին և աշխատանքի հիմնական սկզբունքներին: Ուսանողի մոտ ձևավորել համակարգչից օգտվելու հիմնական հմտությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա համակարգչի կառուցվածքի և աշխատանքի հիմնական սկզբունքները,
2. կիմանա, թե ինչ է օպերացիոն համակարգը, բազմախնդրայնությունը, որոնք են տեքստային և գրաֆիկական խմբագիրների աշխատանքների սկզբունքների տարբերությունը, Windows օպերացիոն համակարգի և Word, Excel, PowerPoint ծրագրերի հետ աշխատելու հիմնական սկզբունքները,
3. կկարողանա ինքնուրույն կատարել իր թղթավարությունը (կուրսային, ավարտական աշխատանքներ, հաշվարկների կատարում, զեկուցումների համար սլայդների պատրաստում և այլն):

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: Օպերացիոն համակարգի հասկացություն և բազմախնդրայնության գաղափար: ***Թեմա 2***՝ Windows օպերացիոն համակարգի գրաֆիկական ինտերֆեյսի հետ աշխատելու հիմնական սկզբունքները: ***Թեմա 3***՝ Microsoft Word փաստա-

թղթի ստեղծում և ձևավորում: ***Թեմա 4*՝** Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակներ: ***Թեմա 5*՝** Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անց է կացվում համակարգչի մոտ՝ ըստ ստուգարքի համար կազմված տարբերակի հրահանգների: Տարբերակը բաղկացած է 4 բաժնից, որով ստուգվում են ուսանողի գիտելիքները Windows XP համակարգի, MS Word, MS Excel և MSPowerPoint կիրառությունների վերաբերյալ: Ուսանողը գնահատվում է «ստուգված», եթե ճիշտ կատարում է յուրաքանչյուր բաժնի հրահանգների 75%-ը:

0002/B01. Քաղաքացիական պաշտպանություն (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (24 ժամ դասախոսություն և
8 ժամ գործնական պարապմունք)
6-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացների նպատակն է ուսանողներին ծանոթացնել ԱԻ-ում (երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհներ, արտադրական և տրանսպորտային վթարներ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում և այլն) և պատերազմական պայմաններում պաշտպանվելու ձևերին և մեթոդներին, նաև փրկարարական աշխատանքների ծավալներին, բովանդակությանը և կատարմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է կարողանա ստեղծված ԱԻ-ում և պատերազմական պայմաններում ժամանակին և ճիշտ իրականացնի պաշտպանվելու ձևերն ու մեթոդները:

Բովանդակությունը.

Թեմա-1. ԱԻ-ի նախարարության կառուցվածքը և խնդիրները: ***Թեմա-2.*** ԱԻ-ները, նրանց բնութագրերը և կանխարգելման միջոցառումները: ***Թեմա-3.*** Բնակչության գործողությունները ահաբեկությունների և նրանց սպառնալիքի ժամանակ: ***Թեմա-4.*** Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: ***Թեմա-5.*** Բնակչության պաշտպանության կազմակերպումը ԱԻ-ների և պատերազմի ժամանակ: ***Թեմա-6.*** ԱԻ-ի և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: ***Թեմա-7.*** Փրկարարական աշխատանքների կազմակերպումը ԱԻ-ի և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգումը ընթանում է բանավոր՝ հարցատոմսերով: Հարցատոմսը ներառում է երեք հարց՝ երկուսը տեսական, մեկը գործնական:

0002/B02. Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (8 ժամ դասախոսություն և
24 ժամ գործնական պարապմունք)
6-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացների նպատակն է ուսանողներին սովորեցնել էքստրեմալ պայմաններում (երկրաշարժ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահարում, ոսկորների կոտրվածքներ, արյունահոսություն, շոկային իրադրություն, վնասվածքներ) մինչբժշկական օգնության ցուցաբերում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է կարողանա էքստրեմալ պայմաններում (երկրաշարժ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում, ոսկորների կոտրվածքներ, արյունահոսություն, շոկային իրադրություն, վնասվածքներ) ցուցաբերել առաջին և մինչբժշկական օգնություն:

Բովանդակությունը.

Թեմա 1. Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն ԱԻ-ում: ***Թեմա 2***. Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը ԱԻ-ների պայմաններում: ***Թեմա 3***. Սուր հիվանդություններ և թունավորումներ: ***Թեմա 4***. Հակահամաճարակային միջոցառումներն ԱԻ-ում: ***Թեմա 5***. Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգումը ընթանում է բանավոր՝ հարցատոմսերով: Հարցատոմսը ներառում է երեք հարց՝ երկուսը տեսական, մեկը գործնական:

0901/B01. Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ դասախոսություն

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պատկերացում էկոլոգիա գիտության տեսական հիմնահարցերի, բնապահպանության առկա խնդիրների և հիմնահարցերի լուծման առաջարկվող եղանակների և կիրառվող մեթոդների ու մոդելների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա էկոլոգիա գիտության հիմնական տեսական մոտեցումները, օրենքները, հարցերը,
2. կկարողանա օգտագործել այդ գիտելիքները բնապահպանական հարցերի լուծման ոլորտում,
3. կկարողանա կատարել անհրաժեշտ վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1. Էկոլոգիայի զարգացման պատմական ուղին, տեղն ու դերը մյուս գիտությունների համակարգում: Օրգանիզմներ և էկոհամակարգ: Էկոլոգիական հիմնական օրենքները և կանոնները: ***Թեմա 2.*** Էկոհամակարգի տարրերը և տրոֆիկ մակարդակները: ***Թեմա 3.*** Օրգանիզմների և միջավայրի փոխհարաբերությունը, էկոգործոններ: ***Թեմա 4.*** Էներգիան էկոհամակարգերում: Սննդային շղթաներ: Կենսաերկրաքիմիական ցիկլեր: ***Թեմա 5.*** Մարդու էկոլոգիա: Շրջակա

միջավայր: Մարդածին համակարգեր: ***Թեմա 6.*** Բնական պաշարների դասակարգումը: Գլոբալ արտադրություն և քայքայում: ***Թեմա 7.*** Շրջակա միջավայրի ոլորտների նկարագրություն: ***Թեմա 8.*** Պոպուլյացիոն էկոլոգիա: ***Թեմա 9.*** Շրջակա միջավայրի աղտոտվածության հիմնահարցերը: Գլոբալ էկոլոգիական պրոբլեմներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անց է կացվում բանավոր: Ստուգարքի ժամանակ ստուգվում է ուսանողի իմացությունը կիսամյակի ընթացքում անցած նյութի վերաբերյալ: Տոմսը պարունակում է 3 հարց:

0801/B01. Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ դասախոսություն)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պատկերացում էկոլոգիա գիտության տեսական հիմնահարցերի, բնապահպանության առկա խնդիրների և հիմնահարցերի լուծման առաջարկվող եղանակների և կիրառվող մեթոդների ու մոդելների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. կիմանա էկոլոգիա գիտության հիմնական տեսական մոտեցումները, օրենքները, հարցերը,
5. կկարողանա օգտագործել այդ գիտելիքները բնապահպանական հարցերի լուծման ոլորտում,
6. կկարողանա կատարել անհրաժեշտ վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1. Էկոլոգիայի զարգացման պատմական ուղին, տեղն ու դերը մյուս գիտությունների համակարգում: Օրգանիզմներ և էկոհամակարգ: Էկոլոգիական հիմնական օրենքները և կանոնները: ***Թեմա 2.*** Էկոհամակարգի տարրերը և տրոֆիկ մակարդակները: ***Թեմա 3.*** Օրգանիզմների և միջավայրի փոխհարաբերությունը, էկոգործոններ: ***Թեմա 4.*** Էներգիան էկոհամակարգերում: Սննդային շղթաներ: Կենսաերկրաքիմիական ցիկլեր: ***Թեմա 5.*** Մարդու էկոլոգիա: Շրջակա միջավայր: Մարդածին համակարգեր: ***Թեմա 6.*** Բնական պաշարների դասակարգումը: Գլոբալ արտադրություն և քայքայում: ***Թեմա 7.*** Շրջակա միջավայրի ոլորտների նկարագրություն: ***Թեմա 8.*** Պոպուլյացիոն էկոլոգիա: ***Թեմա 9.*** Շրջակա միջավայրի աղտոտվածության հիմնահարցերը: Գլոբալ էկոլոգիական պրոբլեմներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անց է կացվում բանավոր հարցազրույցի ձևով:

3.2. Կամընտրական դասընթացներ

0101/B05. Մաթեմատիկայի հիմունքներ (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ դասախոսություն 1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մաթեմատիկայի հիմունքներին՝ որպես ընդհանուր մշակույթի բաղկացուցիչ մաս, ձևավորել վերացական մտածողություն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կծանոթանա մաթեմատիկայի պատմությանը,
2. կհասկանա մաթեմատիկական մտածողության իմաստը,
3. կկարողանա լուծել պարզագույն կիրառական խնդիրներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մաթեմատիկա առարկան և մաթեմատիկական լեզու: ***Թեմա 2***՝ Աքսիոմային մոտեցումը մաթեմատիկայի: ***Թեմա 3***՝ Բազմությունների տեսության տարրերը: ***Թեմա 4***՝ Կոորդինատների մեթոդ: ***Թեմա 5***՝ Մաթեմատիկական մոդելավորում: ***Թեմա 6***՝ Հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության տարրերը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անց է կացվում բանավոր հարցազրույցի ձևով:

0903/B01. Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաները (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (16 ժամ դասախոսություն և 16 ժամ գործնական պարապմունք)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել բնական գիտությունների մեթոդոլոգիային և հայեցակարգերին, ուսանողների մոտ ձևավորել ժամանակակից պատկերացումներ բնական գիտությունների զարգացման օրինաչափությունների և հեռանկարների շուրջ, նրանց մատուցել այն գիտելիքների պաշարը, որոնք անհրաժեշտ են զարգացած և լայն աշխարահայացքի ձևավորման համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա բնագիտության ժամանակակից հայեցակարգերի ձևավորման պատմությունը,
2. կհասկանա բնագիտության ժամանակակից հայեցակարգերի էությունը,
3. կկարողանա ճիշտ կողմնորոշվել ինֆորմացիայի գնահատման և վերլուծության ժամանակ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բնագիտության զարգացման պատմությունը: ***Թեմա 2***՝ Տիեզերքի ծագման և զարգացման գիտական տեսություններ և դրանց պատմական զարգացումը: ***Թեմա 3***՝ Կոսմոգոնիկ տեսություն: ***Թեմա 4***՝ Երկրի ծագման և ձևավորման տեսություն: ***Թեմա 5***՝ Կյանքի ծագումը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում են հարցեր՝ նախապես տրամադրված հարցաշարից:

4. Ընդհանուր մասնագիտական դասընթացներ

4.1. «Աշխարհագրություն» մասնագիտություն

0101/B01. Մաթեմատիկա - 1 (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (24 ժամ դասախոսություն և
24 ժամ գործնական պարապմունք),
1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ զարգացնել վերլուծական երկրաչափության և հանրահաշվի դպրոցական դասընթացի ընթացքում ստացած գիտելիքները և դաստիարակել հմտություններ աշխարհագրության մեջ դրանք կիրառելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա կոորդինատների մեթոդը, վերլուծական երկրաչափությունը հարթության վրա,
2. կհասկանա վերլուծական երկրաչափությունը տարածության մեջ,
3. կծանոթանա գծային հավասարումների համակարգերի լուծման մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կոորդինատների մեթոդը: ***Թեմա 2***՝ Ուղիղ գիծը հարթության վրա: ***Թեմա 3***՝ Երկրորդ կարգի կորեր: ***Թեմա 4***՝ Վեկտորներ: ***Թեմա 5*** Ուղիղ գիծը տարածության մեջ: ***Թեմա 6***՝ Հարթության հավասարումը: ***Թեմա 7***՝ Մակերևույթի տեսություն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 4 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր կարճ հարցում: Միավորների քայլը **1** է:

2-րդ ստուգում. Անհատական առաջադրանք: Միավորների քայլը **1** է:

3-րդ ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը **1** է:

4-րդ ստուգում. Փոքրածավալ գրավոր ստուգողական աշխատանք: Միավորների քայլը **1** է:

0101/B02. Մաթեմատիկա - 2 (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (24 ժամ դասախոսություն և

24 ժամ գործնական պարապմունք),

2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ զարգացնել մաթեմատիկական անալիզի և հավանականությունների տեսության դպրոցական դասընթացի ընթացքում ստացած գիտելիքները և դաստիարակել հմտություններ դրանք աշխարհագրության մեջ կիրառելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անընդհատ ֆունկցիաների հիմնական հատկությունները,
2. կհասկանա դիֆերենցիալ և ինտեգրալ հաշվի հիմնական գաղափարները և կկարողանա աշխատել դրանց հետ,
3. կծանոթանա սահմանների տեսության հետ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդը: ***Թեմա 2***՝ Հաջորդական սահման: ***Թեմա 3***՝ Ֆունկցիայի սահման: ***Թեմա 4***՝ Ֆունկցիայի անընդհատությունը: ***Թեմա 5*** Ֆունկցիայի ածանցյալ: ***Թեմա 6***՝ Անորոշ և որոշյալ ինտեգրալ: ***Թեմա 7***՝ Դիֆերենցիալ հավասարումներ: ***Թեմա 8***՝ Թվային շարքեր: ***Թեմա 9*** Հավանականությունների տեսության տարրերը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար **1,1,1,1** միավոր: Միավորների քայլը՝ **0.5** է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար **2, 2, 2, 2** միավոր: Միավորների քայլը՝ **0.5** է:

0401/B01. Ֆիզիկա (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (24 ժամ դասախոսություն և

24 ժամ լաբորատոր պարապմունք),

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել էլեկտրականության, մագնիսականության և օպտիկայի հիմնական օրենքներին, դրանց առնչվող հիմնական փորձերին, ներկայացնել այդ օրենքները դիֆերենցիալ և ինտեգրալային տեսքերով, գաղափար տալ նրանց հիմնական կիրառությունների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա էլեկտրականության, մագնիսականության և օպտիկայի հիմնական օրենքները, դրանց առնչվող կարևորագույն փորձերը, երևույթները,
2. կհասկանա այդ երևույթների, փորձերի, օրենքների կապը, օրենքների համակարգի ներքին տրամաբանությունը, այդ համակարգից բխող հիմնական հետևությունները և արդյունքները,
3. կկարողանա ստացած գիտելիքները կիրառել կոնկրետ բնույթ կրող հարցերի վերլուծության, խնդիրների լուծման համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Էլեկտրական դաշտը վակուումում և միջավայրում: ***Թեմա 2***՝ Էլեկտրական հոսանք: ***Թեմա 3***՝ Մագնիսական դաշտը վակուումում և միջավայրում: ***Թեմա 4***՝ Էլեկտրամագնիսական մակածում և քվազիստացիոնար երևույթներ: ***Թեմա 5***՝ Մաքսվելլի հավասարումների համակարգը: ***Թեմա 6***՝ Էլեկտրամագնիսական տատանումներ և ալիքներ: ***Թեմա 7***՝ Լույսի ինտերֆերենցը: ***Թեմա 8***՝ Լույսի դիֆրակցիան: ***Թեմա 9***՝ Լույսի բևեռացումը: ***Թեմա 10***՝ Լուսի փոխազդեցությունը նյութի հետ, ոչ գծային օպտիկա:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք՝ գրավոր: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք՝ գրավոր: Միավորների քայլը 0,5 է:

4-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0601/B02. Քիմիա (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն և
30 ժամ լաբորատոր պարապմունք),
3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել պատկերացում արդի ընդհանուր և անօրգանական քիմիայի տեսության մասին, տարրերի հատկությունների կախվածությունը պարբերական համակարգում դրանց գրված դիրքից, երկրակեղևում քիմիական տարրերի անհամաչափ բաշխման պատճառների, քիմիական կապի տեսակների և օքսիդա-վերականգնման գործընթացների էությանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա արդի ընդհանուր և անօրգանական քիմիայի տեսությունը, բնական միացություններից տարրերի ստացման արդյունաբերական եղանակները,
2. կհասկանա տարրերի խմբերի ընդհանուր բնութագիրը, դրանց բնական միացությունների հայտնաբերման պատմությունը, ստացման արդյունաբերական եղանակները,

3. կկարողանա կատարել քիմիական փորձեր և հաշվարկներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ատոմա-մոլեկուլային ուսմունքը և քիմիայի հիմնական օրենքները: Ավոգադրոյի և գազերի միացյալ օրենքները և դրանց կիրառությունը: ***Թեմա 2՝*** Պարբերական օրենքը և տարրերի պարբերական համակարգը: Քիմիական կապի տեսակները: ***Թեմա 3՝*** Քիմիական ռեակցիայի արագությունը և նրա վրա ազդող գործոնները: Քիմիական հավասարակշռություն: ***Թեմա 4՝*** Ջուր: Ջրի վիճակի դիագրամը: Լուծույթներ և դրանց ընդհանուր հատկությունները: Իրական և կոլոիդ լուծույթներ: Էլեկտրոլիտների լուծույթների հատկությունները: ***Թեմա 5՝*** Ջրածին, թթվածին, ջրածնի պերօքսիդ, օզոն, դրանց ստացումը, հատկությունները և կիրառությունները: ***Թեմա 6՝*** Ոչ մետաղների (քլոր, ծծումբ, ազոտ, ֆոսֆոր, ածխածին, սիլիցիում) ստացումը, հատկությունները և կիրառման բնագավառները: ***Թեմա 7՝*** Ազնիվ գազեր, դրանց հատկությունները, կիրառությունը: ***Թեմա 8՝*** Մթնոլորտի և հողի ներկայիս աղտոտված վիճակը: Աղտոտման դեմ պայքարի եղանակները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք՝ գրավոր: Միավորների քայլը 0,5 է:

2. կհասկանա ջրաօդերևութաբանական երևույթների բազմագործոն կապերի և մաթեմատիկական մոդելավորման անհրաժեշտության մասին,
3. կկարողանա կատարել ժամանակակից իրավիճակի և ընթացիկ պրոցեսների անալիզ, գործոնների և պայմանների գնահատում, ջրաօդերևութաբանական կանխատեսում, գծային և ոչ գծային ծրագրավորում, “Excel” ծրագրով հաշվարկներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ընդհանուր տեղեկություններ ջրաօդերևութաբանական տեղեկատվության մասին: ***Թեմա 2***՝ Ջրաօդերևութաբանական տվյալների մշակման համակարգերի առանձնահատկություններն ու խնդիրները: ***Թեմա 3***՝ Հավանականության տեսության հիմնարար հասկացությունները: ***Թեմա 4***՝ Պատահական երևույթների տեսության հիմունքների կիրառումը ջրաօդերևութաբանության մեջ: ***Թեմա 5***՝ Մաթեմատիկական վիճակագրության մեթոդների կիրառումը ջրաօդերևութաբանության մեջ: ***Թեմա 6***՝ Հաճախականության ֆիլտրեր: ***Թեմա 7***՝ Բնական համակարգերի մաթեմատիկական մոդելավորում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0901/B25. Ջրակենսաբանություն և ջրաէկոլոգիա (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն
և 24 ժամ գործնական պարապմունք),
5-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակը ջրակենսաբանական և ջրաէկոլոգիական գիտելիքների և հմտությունների տեսական, մեթոդոլոգիական և կիրառական հիմումքների յուրացումն է:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կիմանա ջրակենսաբանության և ջրային էկոլոգիայի հիմնական հասկացությունները և հիմնատար սկզբունքները,
2. կկարողանա համակարգել իր գիտելիքները ջրային ավազանների բնակչության և ջրային օբյեկտների էկոլոգիական վիճակի մասին՝ հիմք ընդունելով ժամանակակից պահանջներին ջրային էկոհամակարգերի ուսումնասիրման ժամանակ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: ***Թեմա 2***՝ Ջրակենսաբանության և ջրային էկոլոգիայի հիմնական դրույթները: ***Թեմա 3***՝ Տարբեր տիպի ջրային ավազանների ջրակենսաբանությունը և ջրային էկոլոգիան:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում. Թեստ: Միավորների քայլը 0,5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0,5 է:

0903/B11. Գեոինֆորմատիկա (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (32 ժամ դասախոսություն),

6-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գեոինֆորմացիոն համակարգերի ու դրանց օգտագործման մասին տեսական ու կիրառական գիտելիքներ, տալ ջրաօդերևութաբանական ԱՏՀ-երի մասին պատկերացում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գեոինֆորմացիոն համակարգերի գործառական կառուցվածքի տեսական հիմքերը և կապը ջրաօդերևութաբանության հետ,
2. կհասկանա ԱՏՀ-ում տվյալների կառավարման մեխանիզմը,
3. կկարողանա ինքնուրույն կերպով ստեղծել ԱՏՀ տվյալների հենք ջրաօդերևութաբանական հետազոտությունների կազմակերպման նպատակով:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գեոինֆորմատիկայի ընդհանուր դրույթները: ***Թեմա 2***՝ Տվյալների գրանցումը, մուտքագրումը և պահպանումը: Տարածական տվյալների կառուցումը: ***Թեմա 3***՝ Տվյալների վերլուծությունը և մոդելավորումը: ***Թեմա 4***՝ Տվյալների բազաների կառավարման համակարգերը: Հասկացություն ինտեգրացիոն համակարգերի մասին: ***Թեմա 5***՝ Մեքենայական գրաֆիկայի տեխնիկական միջոցները, տվյալների տեսանելիացման մեթոդները և միջոցները: Համակարգչային քարտեզների և ատլասների ստեղծման առանձնահատկությունները ջրաօդերևութաբանական քարտեզների ավտոմատ ստացում: ***Թեմա 6***՝ Գեոինֆորմատիկայի կիրառական ասպեկտները ջրաօդերևութաբանության մեջ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում. Թեստ: Միավորների քայլը 0,5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0,5 է:

0901/B26. Հայաստանի աշխարհագրություն (4 կրեդիտ)
Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն
և 24 ժամ գործնական պարապմունք),
6-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ՀՀ ֆիզիկական և տնտեսական աշխարհագրությանը, նրա բնությանը, տնտեսության ժամանակակից առանձնահատկությունները և տեղաբաշխման սկզբունքները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կստանա գիտելիքներ ՀՀ բնության և տնտեսության տեղաբաշխման առանձնահատկությունների մասին,
2. գաղափար կկազմի հանրապետության լանդշաֆտների էության և հողերի կադաստրային գնահատման ժամանակ դրանց նշանակության մասին,
3. կկարողանա ստացած տեսական գիտելիքները օգտագործել կիրառական նպատակներով:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Աշխարհագրական դիրքը և սահմանները: ***Թեմա 2***՝ Լեռնագրությունը: ***Թեմա 3***՝ Երկրաբանական կառուցվածքը և օգտակար հանածոները: ***Թեմա 4***՝ Կլիման: ***Թեմա 5***՝ Ջրագրությունը: ***Թեմա 6***՝ Հողաբուսական ծածկը, կենդանական աշխարհը: ***Թեմա 7***՝ Վերընթաց լանդշաֆտային գոտիները: ***Թեմա 8***՝ Վարչատարածքային կառուցվածքը և բնակչությունը: ***Թեմա 9***՝ Արդյունաբերությունը: ***Թեմա 10***՝ Գյուղատնտեսությունը: ***Թեմա 11***՝ Տրանսպորտ և տնտեսական կապերը: ***Թեմա 12***՝ Բնության պահպանությունը: ***Թեմա 13***՝ Ներքին բնապահպանական տարբերությունները: ***Թեմա 14***՝ ԼՂՀ բնության և տնտեսության ընդհանուր բնութագիրը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0901/B27. Մայրցամաքների կլիման և ջրաբանություն (5 կրեդիտ)
Շաբաթական 5 ժամ (48 ժամ դասախոսություն
և 32 ժամ գործնական պարապմունք),

6-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին գիտելիքներ հաղորդել տվյալ մայրցամաքի կլիմայի և ջրագրության մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կիմանա յուրաքանչյուր մայրցամաքի կլիման ձևավորող գործոնների և ջրագրական ցանցի առանձնահատկությունների մասին,
2. կհասկանա ամեն մի մայրցամաքի կլիմայական գոտիների տեղաբաշխման յուրահատկությունները, ջրագրական ցանցի ձևավորման օրինաչափությունները,
3. կկարողանա գնահատել ջրագրական ցանցի և կլիմայի ունեցած ազդեցությունները կոնկրետ մայրցամաքում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մայրցամաքի կլիման ձևավորող հիմնական գործոնները և կլիմայական գոտիները: ***Թեմա 2***՝ Մայրցամաքի ջրագրական ցանցի առանձնահատկությունները: ***Թեմա 3***՝ Մայրցամաքի խոշոր գետերն ու լճերը և դրանց տեղաբաշխումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0901/B28. Գետային հոսք և ջրաբանական հաշվարկներ (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն
և 24 ժամ լաբորատոր աշխատանք),
6-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել •գետային հոսքի հիմնական բնութագրիչների հետ և սովորեցնել կատարելու ջրաբանական հաշվարկներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գետային հոսքի հիմնական բնութագրիչների հաշվարկային մեթոդները,
2. կհասկանա գետային հոսքի և բնական երևույթների բազմագործոն կապերի և մաթեմատիկական մոդելավորման մասին,

3. կկարողանա կատարել ժամանակակից իրավիճակի և ընթացիկ պրոցեսների անալիզ, գործոնների և պայմանների գնահատում, ջրաբանական կանխատեսում, գծային և ոչ գծային ծրագրավորում:

Բովանդակությունը

Թեմա 1՝ Գետային հոսքի բազմամյա տատանումները /փոփոխությունները/: ***Թեմա 2***՝ գետային հոսքի հաշվարկը ջրաչափական դիտարկումների տվյալների առկայության դեպքում: ***Թեմա 3***՝ Գետային հոսքի հաշվարկի առանձին ձևերը ըստ ջրաչափական տվյալների: ***Թեմա 4***՝ Գետային հոսքի հաշվարկի մեթոդական հիմունքները ջրաչափական տվյալների բացակայության դեպքում: ***Թեմա 5***՝ Տարեկան հոսքի նորման: ***Թեմա 6***՝ Հոսքի ներատարեկան բաշխվածությունը: ***Թեմա 7***՝ Նվազագույն հոսք: ***Թեմա 8***՝ Գարնանային հորդացումների առավելագույն հոսքը: ***Թեմա 9***՝ Տնտեսական գործունեության ազդեցության գնահատումը գետային հոսքի վրա:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0901/B29. Հայաստանի ջրաբանություն (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն
և 24 ժամ գործնական պարապմունք),
7-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ՀՀ ջրային ռեսուրսների ձևավորման առանձնահատկություններին: Բացահայտել ՀՀ ջրային ռեսուրսների հետ առնչվող հիմնահարցերը և տալ դրանց լուծման ուղիները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գետերի հոսքի ձևավորման առանձնահատկությունների և ջրային ռեսուրսների անհավասարաչափ բաշխման մասին,
2. կհասկանա գետային հոսքի անհավասարաչափ բաշխման պատճառները,
3. կկարողանա բացահայտել ջրային օբյեկտների փոխկապակցվածությունը և ՀՀ ջրաբանությանը վերաբերող ժամանակակից հիմնախնդիրները, լուծման ուղիները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ջրային ռեսուրսների ձևավորման բնական պայմանների ընդհանուր բնութագիրը: ***Թեմա 2***՝ ՀՀ ջրային ռեսուրսները և հաշվեկշիռը: ***Թեմա 3***՝

Գետերը, հոսքի ձևավորման առանձնահատկությունները, հոսքի օգտագործումը և դրա հետ կապված հիմնախնդիրները: ***Թեմա 4՝*** ՀՀ լճերը, նրանց օգտագործման և պահպանման հիմնախնդիրները: ***Թեմա 5՝*** Ջրամբարները, դերը հոսքի կարգավորման գործում: ***Թեմա 6՝*** Ստորերկրյա ջրեր, տարածական բաշխման առանձնահատկությունները, օգտագործման հիմնահարցերը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում. Թեստ: Միավորների քայլը 0,5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0,5 է:

0901/B30. Հայաստանի կլիման (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն
և 24 ժամ գործնական պարապմունք),
7-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել Հայաստանի կլիմայաստեղծ տարրերի և կլիմայական գոտիների ձևավորման առանձնահատկությունների և օրինաչափությունների մասին մասնագիտական պատկերացումը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա Հայաստանի կլիմայի ձևավորման պայմանները,
2. կհասկանա Հայաստանի կլիմայի ձևավորման օրինաչափությունները և առանձնահատկությունները,
3. կկարողանա կատարել կլիմայի ձևավորման պայմանների վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ճառագայթային (ռադիացիոն) գործոնները: ***Թեմա 2՝*** Մթնոլորտային շրջանառությունը: ***Թեմա 3՝*** Կլիմայի բնութագիրն ըստ օդերևութաբանական տարրերի: ***Թեմա 4՝*** Ջերմային ռեժիմը: ***Թեմա 5՝*** Խոնավացման ռեժիմը: ***Թեմա 6՝*** Մթնոլորտային այլ երևույթներ: ***Թեմա 7՝*** Հայաստանի կլիմայական գոտիները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում. Թեստ: Միավորների քայլը 0,5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0,5 է:

0901/B31. Ջրային ռեսուրսների համալիր օգտագործում և պահպանում (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն
և 24 ժամ գործնական պարապմունք),
7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հիմնական հասկացություններին և բնորոշումներին, ջրային ռեսուրսների համալիր օգտագործման ու պահպանման հիմնախնդիրներին, ջրային տնտեսության, ջրային ռեսուրսների կառավարմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կիմանա Երկրագնդի ջրային ռեսուրսների ծավալի ու որակի, դրանց օգտագործման ոլորտների ու տեսակների, աղտոտման աղբյուրների մասին,
2. կհասկանա "Ջրային ռեսուրսների պահպանման կանոների" հիմնական դրույթների նորմավորման, վնասակար նյութերի սահմանային թույլատրելի խտության անհրաժեշտության մասին,
3. կկարողանա կատարել ջրի որակի անթրոպոգեն բազմամյա փոփոխությունների, ջրային ռեսուրսների կառավարման պայմանների գնահատում, ջրատնտեսական միջոցառումների էկոլոգիական փորձաքննություն, հոսքաջրերի միջոցով ջրային ավազաններ մուտք գործող աղտոտող նյութերի հաշվարկ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Երկրագնդի ջրային ռեսուրսները և դրանց օգտագործումը: ***Թեմա 2՝*** Ջրօգտագործման ոլորտները: ***Թեմա 3՝*** Ջրային ավազանների աղտոտման աղբյուրները: ***Թեմա 4՝*** Ջրի որակի գնահատումն ըստ ջրօգտագործողների և ջրսպառողների: ***Թեմա 5՝*** Հետադարձ ջրեր, դրանց մաքրումը և օգտագործումը: ***Թեմա 6՝*** Ջրային օբյեկտների պահպանումը աղտոտումից: ***Թեմա՝ 7*** Բնական ջրերի աղտոտումից պահպանման ինժեներական մեթոդները: ***Թեմա 8՝*** Ջրային ռեսուրսների հաշվարկը և կառավարում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0901/B32. Ջրաբանական կանխատեսումներ (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն
և 24 ժամ գործնական պարապմունք),
7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ժամանակակից ջրաբանության կիրառական նշանակություն ունեցող հիմնական ճյուղերից մեկի՝ ջրաբանական կանխատեսումների առջև դրվող խնդիրների և դրանց լուծման համար անհրաժեշտ մեթոդներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ջրաբանական կանխատեսումների դասակարգումը և նրանց կանխատեսումների մեթոդները,
2. կհասկանա ջրաբանական կանխատեսումներ էությունը,
3. կկարողանա ինքնուրույն կերպով կազմել ջրային օբյեկտների առանձին տարրերի կանխատեսումներ և հաշվարկել նրանց հավանական սխալները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ջրաբանական կանխատեսումները որպես ջրաբանության կիրառական հիմնական ճյուղ, նրա կապը այլ գիտությունների հետ, մեթոդների հիմնավորումը: ***Թեմա 2***՝ Կանխատեսումների դասակարգումը, սխալի թույլատրելի սահմանը, արդարացման և մեթոդիկայի ճշտության գնահատումը: ***Թեմա 3***՝ Գետերի գարնանային վարարումները և անձրևային հորդացումների հոսքի կանխատեսման մեծությունները, թողարկված կանխատեսումների արդարացման գնահատումը: ***Թեմա 4***՝ Վեգետացիոն և սակավաջուր փուլերի հոսքի և նրանց առանձին տարրերի կանխատեսման մեթոդները: ***Թեմա 5***՝ Սառցային երևույթների կանխատեսման մեթոդները: ***Թեմա 6***՝ Կանխատեսումների հաղորդման ձևերը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0901/B33. Շրջակա միջավայրի պահպանության ջրաօդերևութաբանական ասպեկտներ (4 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ (30 ժամ դասախոսություն
և 18 ժամ գործնական պարապմունք),
8-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մթնոլորտում և ջրոլորտում անթրոպոգեն գործունեության արդյունքում տեղի ունեցող առավել վտանգավոր խախտումների, ինչպես նաև շրջակա միջավայրի պայմանների պահպանման ուղիների մասին՝ բարենպաստ էկոհամակարգերի պահպանման համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մթնոլորտի և ջրոլորտի ժամանակակից էկոլոգիական վիճակը, դրա վրա ազդող հիմնական արտաքին գործոնները, դրանց անթրոպոգեն բաղադրիչը,
2. կհասկանա մոնիթորինգի գլոբալ համակարգի կազմակերպման, ինչպես նաև օդի և ջրի որակի գնահատման մեթոդները,
3. կկարողանա տալ անթրոպոգեն գործոնների ջրային էկոհամակարգերի կենսածին բաղադրիչի վրա ազդեցության աստիճանի գնահատականը և բնութագիրը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մթնոլորտային օդի պահպանումը: ***Թեմա 2***՝ Մթնոլորտի աղտոտման ընդհանուր հարցերը: ***Թեմա 3***՝ Մթնոլորտի աղտոտման ուսումնասիրման մեթոդները: ***Թեմա 4***՝ Մայրցամաքային ջրերի պահպանումը: ***Թեմա 5***՝ Ջրի որակի գնահատումը ըստ ջրօգտագործողների և ջրսպառողների: ***Թեմա 6***՝ Մարդու տնտեսական գործունեության ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա: ***Թեմա 7***՝ Ջրային ռեսուրսների պահպանումը աղտոտումից և ջրի որակի հսկողության կազմակերպում: ***Թեմա 8***՝ Համաշխարհային օվկիանոսի պահպանումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0901/B34. Ջրակլիմայական գլոբալ փոփոխություններ (4 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ (30 ժամ դասախոսություն

և 18 ժամ գործնական պարապմունք),

8-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մթնոլորտի և ջրոլորտի գեոէկոլոգիական հիմնահարցերին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը.

1. կիմանա մթնոլորտի և ջրոլորտի գեոէկոլոգիական համամոլորակային, ռեգիոնալ և լոկալ հիմնախնդիրները,
2. կհասկանա մթնոլորտի և ջրոլորտի պահպանման ու որակի բարելավման անհրաժեշտությունը,
3. կկարողանա ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարել և որոշել մթնոլորտ ու ջրային միջավայր կատարվող արտանետումների թույլատրելի քանակությունը կոնկրետ իրավիճակներում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բնօգտագործում հասկացության բովանդակությունը: ***Թեմա 2***՝ Գեոէկոլոգիական մեթոդաբանության հիմնահարցերը: ***Թեմա 3***՝ Բնական միջավայրի պահպանման հիմնահարցերը: ***Թեմա 4***՝ Մթնոլորտի և ջրոլորտի գեոէկոլոգիական հիմնահարցերը: ***Թեմա 5***՝ Մթնոլորտի և ջրոլորտի անաղարտության պահպանման հիմնահարցերը: ***Թեմա 6***՝ Մթնոլորտի և ջրոլորտի գեոէկոլոգիայի սոցիալական ասպեկտը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում. Թեստ: Միավորների քայլը 0,5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0,5 է:

4.3. «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտություն

0101/B01. Մաթեմատիկա-1 (6 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ (48 ժամ դասախոսություն և
48 ժամ գործնական պարապմունք)
1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ զարգացնել վերլուծական երկրաչափության և հանրահաշվի դպրոցական դասընթացի ընթացքում ստացած գիտելիքները և դաստիարակել հմտություններ աշխարհագրության մեջ դրանք կիրառելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. կիմանա կոորդինատների մեթոդը, վերլուծական երկրաչափությունը հարթության վրա,
5. կհասկանա վերլուծական երկրաչափությունը տարածության մեջ,
6. կծանոթանա գծային հավասարումների համակարգերի լուծման մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կոորդինատների մեթոդը: ***Թեմա 2***՝ Ուղիղ գիծը հարթության վրա: ***Թեմա 3***՝ Երկրորդ կարգի կորեր: ***Թեմա 4***՝ Վեկտորներ: ***Թեմա 5*** ՝Ուղիղ գիծը տարածության մեջ: ***Թեմա 6***՝ Հարթության հավասարումը: ***Թեմա 7***՝ Մակերևույթի տեսություն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 4 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր կարճ հարցում: Միավորների քայլը **1** է:

2-րդ ստուգում. Անհատական առաջադրանք: Միավորների քայլը **1** է:

3-րդ ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը **1** է:

4-րդ ստուգում. Փոքրածավալ գրավոր ստուգողական աշխատանք: Միավորների քայլը **1** է:

0101/B02. Մաթեմատիկա-2 (6 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ (48 ժամ դասախոսություն և
48 ժամ գործնական պարապմունք)
2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ զարգացնել մաթեմատիկական անալիզի և հավանականությունների տեսության դպրոցական դասընթացի ընթացքում ստացած գիտելիքները և դաստիարակել հմտություններ դրանք աշխարհագրության մեջ կիրառելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

4. կիմանա անընդհատ ֆունկցիաների հիմնական հատկությունները,
5. կհասկանա դիֆերենցիալ և ինտեգրալ հաշվի հիմնական գաղափարները և կկարողանա աշխատել դրանց հետ,
6. կծանոթանա սահմանների տեսության հետ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդը: ***Թեմա 2***՝ Հաջորդական սահման: ***Թեմա 3***՝ Ֆունկցիայի սահման: ***Թեմա 4***՝ Ֆունկցիայի անընդհատությունը: ***Թեմա 5*** Ֆունկցիայի ածանցյալ: ***Թեմա 6***՝ Անորոշ և որոշյալ ինտեգրալ: ***Թեմա 7***՝ Դիֆերենցիալ հավասարումներ: ***Թեմա 8***՝ Թվային շարքեր: ***Թեմա 9*** Հավանականությունների տեսության տարրերը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար **1,1,1,1** միավոր: Միավորների քայլը՝ **0.5** է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար **2, 2, 2, 2** միավոր: Միավորների քայլը՝ **0.5** է:

0401/B02. Ֆիզիկա (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (32 ժամ դասախոսություն և
32 ժամ լաբորատոր աշխատանք)
3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ֆիզիկայի և ջերմադինամիկայի հիմնական օրենքներին, դրանց առնչվող հիմնական փորձերին, ներկայացնել այդ օրենքները դիֆերենցիալ և ինտեգրալային տեսքերով, գաղափար տալ նրանց հիմնական կիրառությունների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մեխանիկայի, մոլեկուլյար ֆիզիկայի և ջերմադինամիկայի հիմնական օրենքները, դրանց առնչվող կարևորագույն փորձերը, երևույթները,
2. կհասկանա այդ երևույթների, փորձերի, օրենքների կապը, օրենքների համակարգի ներքին տրամաբանությունը, այդ համակարգից բխող հիմնական հետևությունները և արդյունքները,
3. կկարողանա ստացած գիտելիքները կիրառել կոնկրետ բնույթ կրող հարցերի վերլուծության, խնդիրների լուծման համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Նյութական կետի կինեմատիկա: ***Թեմա 2***՝ Նյութական կետի և կետերի համակարգի դինամիկա: ***Թեմա 3***՝ Աշխատանքը և պահպանման օրենքները: ***Թեմա 4***՝ Հաշվարկի իներցիալ և ոչ իներցիալ համակարգեր: ***Թեմա 5***՝ Պինդ մարմնի մեխանիկա: ***Թեմա 6***՝ Հոծ միջավայրի մեխանիկա: ***Թեմա 7*** Տատանումներ և ալիքներ: ***Թեմա 8***՝ Մոլեկուլային և վիճակագրական ֆիզիկայի հիմունքները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք՝ գրավոր: Միավորների քայլը 0,5 է:
2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:
3-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք՝ գրավոր: Միավորների քայլը 0,5 է:
4-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0903/B12. Երկրագիտություն (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ դասախոսություն)
1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը.

“Երկրագիտություն” դասընթացի հիմնական նպատակն է Երկիր մոլորակի աշխարհագրական թաղանթի ճանաչումը, որպես ամբողջական բնական համակարգ, ինչպես նաև նրա կառուցվածքի ու զարգացման, բնական համակարգերի զարգացման օրինաչափությունների բացահայտումը: Աշխարհագրական թաղանթի մասն է կազմում աշխարհագրական միջավայրը, որը շրջապատում է մարդուն և որի հետ մարդկային հասարակությունը կապված է իր կյանքով ու արտադրական գործունեությամբ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. գաղափար կկազմի աշխարհագրական թաղանթի կոմպոնենտային և տարածքային բաղադրիչների մասին,
2. կհասկանա աշխարհագրական թաղանթի բնական բաղադրիչների ընդհանուր օրինաչափությունները և տարածաժամանակային կազմակերպման առանձնահատկությունները, ինչպես նաև թաղանթի ներսում նյութի, էներգիայի ու ինֆորմացիայի շրջապտույտի էությունը և դրա հետևանքները:
3. կկարողանա ստացած գիտելիքները կիրառել աշխարհագրական թաղանթում տեղի ունեցող բնական երևույթների ընթացքը բացատրելու և բնապահպանական բազմաթիվ հիմնախնդիրներ լուծելու համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ընդհանուր երկրագիտության ուսունասիրության առարկան, տեղը գիտությունների դասակարգման համակարգում, նրա կառուցվածքը, ուսումնասիրության մեթոդները և արդի խնդիրները: ***Թեմա 2՝*** Երկրի ընդհանուր ձևաբանությունը: Երկրի ձևը, մեծությունը, ոլորտային կառուցվածքը: Երկրի խտությունը, մագնիսականությունը, ծանրահակ ուժը: Ոլորտների քիմիական կազմը: ***Թեմա 3՝*** Աշխարհագրական թաղանթի հիմնական հատկանիշները և դրանց փոխադարձ կապը և փոխպայմանավորվածությունը:: ***Թեմա 4՝*** Աշխարհագրական թաղանթի դինամիկան: Նյութերի և էներգիայի շրջապտույտները աշխարհագրական թաղանթում: ***Թեմա 5՝*** Աշխարհագրական թաղանթի ռիթմիկ երևույթներ: Օրեկան, տարեկան, բազմամյա ռիթմեր: Կենսաբանական ռիթմերը լանդշաֆտներում: ***Թեմա 6՝*** Մարդու և աշխարհագրական թաղանթի փոխհարաբերությունները: Բնության ռացիոնալ օգտագործման և պահպանության հիմնախնդիրները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0903/B03. Տեղագրություն (6 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ (48 ժամ դասախոսություն և
48 ժամ գործնական պարապմունք)
1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գեոդեզիական բոլոր տեսակի չափումների կատարման, այդ չափումների ժամանակ օգտագործվող գործիքների, ինչպես նաև չափումների արդյունքների մշակման մեթոդների մասին պատշաճ մասնագիտական պատկերացում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա երկրի մակերևույթի համեմատաբար փոքր տեղամասերը հարթության վրա պատկերելու ձևերն ու եղանակները,
2. կհասկանա վերը նշված պատկերման համար տեղավայրում հատուկ գործիքների ու սարքերի օգնությամբ իրականացվող գծային ու անկյունային չափումները,
3. կկարողանա գնահատել չափումների արդյունքները, մշակել ու կազմել տարբեր մասշտաբի հատակագծեր ու քարտեզներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հանույթի աշխատանքային հիմնավորման ստեղծումը և նրա կապակցումը պետական գեոդեզիական ցանցին: ***Թեմա 2՝*** Տարբեր հանույթային աշխատանքների համար օգտագործվող գործիքներն ու սարքերը, նրանց ստուգումները: ***Թեմա 3՝*** Կախված տարածքի չափերից, բնույթից, հանույթի նպատակից, վայրի տեղագրական և կլիմայական պայմաններից հանույթի եղանակի ընտրությունը, իրականացումը և աշխատանքների ճշտության գնահատումը: ***Թեմա 4՝*** Հատակագծի կազմում և ձևավորում: ***Թեմա 5՝*** Նախագծի տեղափոխում հատակագծից բնության մեջ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0903/B13. Հողերի աշխարհագրություն հողագիտության հիմունքներով (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (24 ժամ դասախոսություն և
8 ժամ գործնական պարապմունք)
3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել լանդշաֆտային թաղանթի “հայելին” հանդիսացող հողի ձևավորման գործոնների, կազմի, հատկությունների, բերրիության և աշխարհագրական տեղաբաշխման մասին պատշաճ մասնագիտական պատկերացումներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հողագոյացման պրոցեսի բովանդակությունը, հողի ծագումնաբանական առանձնահատկությունները,
2. կունենա գիտելիքներ հողի կազմի, հատկությունների, բերրիության և աշխարհագրական տեղաբաշխման մասին,
3. կկարողանա կատարել հողագիտական դաշտային աշխատանքներ, հողերի ախտորոշում, ծագումնաբանական հորիզոնների բնութագրում, հողերի քարտեզագրում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հողագոյացման գործոնները և էությունը: ***Թեմա 2***՝ Հողի պինդ, հեղուկ և գազային փուլերի կազմն ու հատկությունները: ***Թեմա 3***՝ Հողերի դաշտային ախտորոշումը և ծագումնաբանական հորիզոնների վերլուծությունը: ***Թեմա 4***՝ Հողի բերրիության ձևավորման գործոններն ու տիպերը: ***Թեմա 5***՝ Հողերի աշխարհագրություն, դասակարգում, շրջանացում, աշխարհագրական տեղաբաշխում: *Թեմա 6* Հողային ռեսուրսների ժամանակակից վիճակը և հողերի պահպանությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0903/B14. Գեոդեզիական հանույթ (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (32 ժամ դասախոսություն և
32 ժամ գործնական պարապմունք)
2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գեոդեզիական հանույթային աշխատանքների կազմակերպման սկզբունքների ու խնդիրների, օգտագործվող սարքերի ու գործիքների, ինչպես նաև կատարման եղանակների վերաբերյալ պատշաճ մասնագիտական պատկերացում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկազմի ընդհանուր պատկերացում գեոդեզիական հանույթային աշխատանքների կատարման մասին,
2. կիմանա հանույթի յուրաքանչյուր տեսակի իրականացման առանձնահատկությունները և կիրառման ոլորտները,
3. կկարողանա հանույթի դաշտային չափումների տվյալներով կազմել հատակագծեր ու քարտեզներ:

Բովանդակությունը

Թեմա 1՝ Հորիզոնական թեոդոլիտային հանույթ, կատարման կարգը, եղանակները, չափումների արդյունքների մշակումը և հատակագծի կազմումը: ***Թեմա 2՝*** Տախեոմետրիական հանույթի կատարման համար տախեոմետրիական փակ և բաց ընթացքների անցկացումը, պիկետների պլանային և բարձունքային դիրքի որոշման եռաստիճան չափումներ, ռելիեֆի և իրադրության պատկերումը հատակագծերի և քարտեզների վրա: ***Թեմա 3՝*** Մենզուլային հանույթ, առանձնահատկությունները, հանույթի կատարման եղանակները: Երկրաչափական ցանցի կառուցումը, կետերի բարձրությունների հաշվումը և կապակցումը: Հանույթային պլանշետների շրջանակների կառուցումը, հենման կետերի տեղադրումը պլանշետի վրա:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0903/B15. Գեոինֆորմատիկա և գեոինֆորմացիոն քարտեզագրության ներածություն (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (32 ժամ դասախոսություն և
32 ժամ լաբորատոր պարապմունք)
2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել տեսական և կիրառական գիտելիքներ քարտեզագրության և ժամանակակից տեխնոլոգիաների, ինչպես նաև ժամանակակից գեոինֆորմացիոն քարտեզագրման, նրա խնդիրների և մեթոդների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա երկրատեղեկատվական քարտեզագրման նորագույն տեխնոլոգիաները,

2. կկարողանա կիրառական նպատակով նախագծել և ստեղծել քարտեզագրական հենք և տվյալների բանկ,
3. կհասկանա կառուցել տվյալների տարածակորդինատային, տարածամանակային եռաչափ մոդելներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Երկրատեղեկատվական քարտեզագրման հիմնական դրույթները և խնդիրները: ***Թեմա 2***՝ Երկրատեղեկատվական համակարգերի, տեխնոլոգիաների, երկրատեղեկատվական քարտեզագրման փոխազդեցությունը: ***Թեմա 3***՝ Երկրատեղեկատվական քարտեզագրության մեթոդները: ***Թեմա 4***՝ Տարածական մոդելավորում և ինտերպոլյացիա:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0903/B16. Կադաստրային գործի ներածություն (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (24 ժամ դասախոսություն և
8 ժամ գործնական պարապմունք)
1-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել անշարժ գույքի և հողային կադաստրի վարման վերաբերյալ, ինչպես նաև հողի և անշարժ գույքի արդյունավետ օգտագործման նպատակով ժամանակակից տեխնոլոգիական ծրագրերի ու մեթոդների վերաբերյալ պատշաճ մասնագիտական պատկերացում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անշարժ գույքի և հողի, հողային հարաբերությունների, ՀՀ սահմանադրության, հողային օրենսգրքի և ՀՀ կառավարության որոշումների մասին,
2. կհասկանա անշարժ գույքի և հողային կադաստրի դերն ու նշանակությունը, նրանց բաղադրիչ մասերի վարումը, տեղեկությունների ստացումը, մշակումը և խմբավորումը,
3. կկարողանա իրականացնել սեփականության իրավունքի գրանցում, հաշվառում և գնահատում, ինչպես նաև կիրառել կադաստրի տվյալները հողային հարաբերությունների կարգավորման, հողային հարկի, վարձակալության և այլ բնագավառներում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կադաստրի ընդհանուր հասկացությունը և բովանդակությունը, հիմնական հողային հարաբերությունները, հողային կադաստրի բաղադրիչ մասերը և նրանց վարման կազմակերպումը: ***Թեմա 2՝*** Հանրապետության հողային ֆոնդը որպես հողային կադաստրի օբյեկտ, հողային ռեսուրսների կառավարման տնտեսական հիմքերը և մեխանիզմները: ***Թեմա 3՝*** Անշարժ գույքի օբյեկտների հասկացությունը և դասակարգումը, հողային շուկայի ձևավորումը և գործողությունը: ***Թեմա 4՝*** Անշարժ գույքի և հողամասերի գնահատման մեթոդները, տեղեկատվական համակարգի ստեղծումը և զարգացումը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում. Թեստ: Միավորների քայլը 0,5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0,5 է:

0903/B17. Նիվելիրացում (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (32 ժամ դասախոսություն և
32 ժամ գործնական պարապմունք)
3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել նիվելիրացման աշխատանքների, օգտագործվող սարքերի ու գործիքների և կատարման եղանակների վերաբերյալ պատշաճ մասնագիտական պատկերացում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. պատկերացում կունենա տարբեր դասերի նիվելիրացումների կատարման ժամանակ կիրառվող մեթոդների ու գործիքների մասին,
2. կիմանա նիվելիրների, նրանց կառուցվածքային տարբերությունների մասին և կկարողանա հաշվի առնել տարբեր բնույթի սխալների ազդեցությունը նիվելիրացման վրա,
3. կկարողանա կառուցել երկայնական պրոֆիլ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Նիվելիրացումների տեսակները, նիվելիրների կառուցվածքը, ստուգումները և աշխատանքը: ***Թեմա 2՝*** Նիվելիրացումների բաժանումը դասերի, ռեպերների և դրոշմանիշեր, նիվելիրացման ստուգումը կայանում և ամբողջ ծրագծում, նիվելիրային ընթացքի կապակցումը պետական գեոդեզիական հիմքին: ***Թեմա 3՝*** Նիվելիրացման մատյան, մատյանի մշակումը և պիկետների նիշերի հաշվումը: ***Թեմա 4՝*** Երկայնական պրոֆիլի կառուցումը, կարմիր և աշխատանքային նիշերի հաշվումը, լայնական պրոֆիլների կազմումը: ***Թեմա 5՝***

Պիկետաժի նշահարումը բնության մեջ, կորի գլխավոր կետերի նշահարումը և պիկետաժային արժեքների որոշումը, շրջանային կորերի մանրամասնիկային նշահարումը: ***Թեմա 6՝*** Մակերևույթի նիվելիրացում, ջրհավաք մակերեսների որոշումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0903/B18. Քարտեզագիտություն (5 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (32 ժամ դասախոսություն և
48 ժամ լաբորատոր պարապմունք)
3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է, ուսանողներին տալ քարտեզագրության հիմնավորված ժամանակակից մեկնաբանում, այն միևնույն ժամանակ որպես գիտության տեխնիկա և տեխնալոգիա՝ նկատի ունենալով քարտեզագրության և նորագույն տեխնոլոգիաների ինտեգրացիոն պրոցեսները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից պայմաններում ընթացող գիտությունների ինտեգրացիայի մասին, որի արդյունքում տեղի է ունենում գիտությունների ակտիվ զարգացում, այդ թվում նաև քարտեզագիտության,
2. կհասկանան և ձեռք կբերի կայուն գիտելիքներ նշված ինտեգրացիայի արդյունքում քարտեզագրության և քարտեզագիտության նոր ճյուղի զարգացման վերաբերյալ, ինչպիսին է երկրատեղեկատվական ժամանակակից քարտեզագրումը,
3. կկարողանա դառնալ լավ քարտեզագիր մասնագետ միայն այն դեպքում, եթե զուգակցի ժամանակակից տեխնոլոգիաները, սարքածրագրային համակարգերը քարտեզակազմողական աշխատանքների ընթացքում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Քարտեզ, քարտեզագրության տերմինները, էությունը և նրանց սահմանումները: ***Թեմա 2՝*** Քարտեզագրական ժամանակակից պատկերումները: ***Թեմա 3՝*** Քարտեզագրական ընդհանրացում քարտեզների և ատլասների տիպերը: ***Թեմա 4՝*** Քարտեզների օգտագործման մեթոդները: ***Թեմա 5՝*** Քարտեզագիտության քարտեզագրության երկրատեղեկատվական համակարգերի կարպերը: ***Թեմա 6՝*** Երկրատեղատվական քարտեզագրումը և երկրատեղատվական համա-

կարգերը որպես գիտության տեխնիկա և տեխնալոգիա: *Թեմա 7*՝ Գեոիկոնիկա և գեոիկոնոմետրիա տերմինները և նրանց սահմանումները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0903/B19. ՀՀ քաղաքացիական իրավունք (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (32 ժամ դասախոսություն և

16 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Պարզաբանել քաղաքացիական իրավունքի էությունը, առանձնահատկությունները, քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորման կառուցակարգերը կադաստրային հարաբերությունների կանոնակարգման համար քաղաքացիաիրավական նորմերի դերն ու նշանակությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա քաղաքացիական օրենսդրությունը,
2. կհասկանա օրենսդրությամբ ամրագրված կառուցակարգերն օգտագործել անշարժ գույքի կապակցությամբ ծագող հարաբերությունները կարգավորելիս,
3. կկարողանա դրանք կիրառել կոնկրետ խնդիրներ լուծելու համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Քաղաքացիական իրավունքը որպես իրավունքի ճյուղ: *Թեմա 2*՝ Քաղաքացիական իրավահարաբերությունը: *Թեմա 3*՝ Քաղաքացիական իրավունքի սուբյեկտները: **Թեմա 4**՝ Քաղաքացիական իրավունքի օբյեկտները: *Թեմա 5*՝ Գործարքներ: *Թեմա 6*՝ Ներկայացուցչություն: *Թեմա 7*՝ Ժամկետները քաղաքացիական իրավունքում, հայցային վաղեմություն: *Թեմա 8*՝ Սեփականության իրավունք*: Թեմա 9*՝ Քաղաքացիների սեփականության իրավունքը: *Թեմա 10*՝ Պետական սեփականության իրավունք: *Թեմա 11*՝ Ընդհանուր սեփականության իրավունք: *Թեմա 12*՝ Սեփականության իրավունքի պաշտպանումը: *Թեմա 13*՝ Սահմանափակ իրային իրավունքներ: *Թեմա 14*՝ Ընդհանուր ուսմունք պարտավորությունների մասին: *Թեմա 15*՝ Քաղաքացիաիրավական պայմանագիր: *Թեմա 16*՝ Գույքի օտարման պայմանագրեր:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0903/B20. Տվյալների հենք (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (32 ժամ դասախոսություն և
32 ժամ լաբորատոր պարապմունք)
4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել տվյալների հենքի (ՏՀ) հիմունքներին՝ նախագծում, ստեղծում, տեղեկացնել նորմավորման և օպտիմավորման հիմունքների մասին, ՏՀ կառավարման SQL լեզվի միջոցով, ներկայացնել ՏՀ օգտագործման առանձնահատկությունները տարածական (spatial) տվյալների ցուցադրման համար, ինչպես նաև ՏՀ-ի օգտագործումը որպես ԱՏՀ հիմք:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ՏՀ-ի էության, դրա նախագծման, ստեղծման և կառավարման մասին,
2. կհասկանա ՏՀ-ի ռելյացիոն մոդելը, նորմավորման և օպտիմավորման մեթոդները,
3. կկարողանա կիրառել ստացված գիտելիքները գործնականում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տվյալների մոդել: ***Թեմա 2***՝ Ռելյացիոն մոդել: ***Թեմա 3***՝ Գործողություններ աղյուսակների հետ: ***Թեմա 4***՝ Տվյալների ամբողջականություն: ***Թեմա 5***՝ ՏՀ-ի նախագծում: ***Թեմա 6***՝ Նորմավորում և օպտիմավորում: ***Թեմա 7***՝ Տարածական տվյալներ: ***Թեմա 8***՝ ՏՀ-ի ղեկավարման համակարգեր (Postgre SQL, Microsoft SQL Server):

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0903/B21. Գեոմորֆոլոգիա երկրաբանության հիմունքներով (5 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (50 ժամ դասախոսություն և

30 ժամ լաբորատոր պարապմունք)
4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել գեոմորֆոլոգիայի և երկրաբանության հիմունքների, ռելիեֆի ձևերի ծագման և զարգացման, ներծին և արտածին պրոցեսների առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. գաղափար կկազմի գեոմորֆոլոգիայի և երկրաբանության, նրա ուսումնասիրության օբյեկտի և մեթոդների մասին,
2. կհասկանա ներծին և արտածին պրոցեսների էությունը, ապարների և ռելիեֆի տարբեր ձևերի ծագման պատճառները,
3. կստանա տեսական գիտելիքներ, որոնք կարող է օգտագործել գործնական նպատակներով:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Երկրի և երկրակեղևի կազմը, կառուցվածքը և հասակը: ***Թեմա 2***՝ Երկրի ռելիեֆը: ***Թեմա 3***՝ Քարոլորտը և ներծին պրոցեսները: ***Թեմա 4***՝ Երկրի զարգացման հիմնական փուլերը: ***Թեմա 5***՝ Արտածին պրոցեսներ: ***Թեմա 6***՝ Գեոմորֆոլոգիական, երկրաբանական և տեկտոնական քարտեզներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2**-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0903/B22. Պետական գեոդեզիական ցանցի ստեղծումը, կարգերը և մեթոդները (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (32 ժամ դասախոսություն և
32 ժամ գործնական պարապմունք)
4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պլանային և բարձունքային պետական գեոդեզիական ցանցերի, նրանց կարգերի և կառուցման մեթոդների մասին պատշաճ մասնագիտական պատկերացում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հիմնական գեոդեզիական աշխատանքների կազմակերպման ընդհանուր սկզբունքները,

2. կյուրացնի գեոդեզիական հենարանային ցանցերի կարգերը և կառուցման մեթոդները,
3. կկարողանա օգտվել պետական պլանային ու բարձունքային ցանցերի ստեղծման համար անհրաժեշտ սարքերից ու գործիքներից:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Եռանկյունավորման նախագծի կազմում և տեսադիտում, նշանների կառուցումը և կենտրոնների հիմնադրումը: ***Թեմա 2***՝ Բազիսների չափումը ինվարային լարերով, կոմպարատորներ, ինվարային լարերի էտալոնացումը կոմպարատորներում: ***Թեմա 3***՝ Պետական եռանկյունավորման ցանցերում կիրառվող հորիզոնական անկյունների չափման շրջանային նվազների և բոլոր կոմբինացիաներում անկյունների չափման եղանակները: ***Թեմա 4***՝ Հենակետերի որոշումը պոլիգոնոմետրական մեթոդով հենարանային ցանցերի կառուցումը փակ կամ բաց ընթացքների ձևով: ***Թեմա 5***՝ Տրիլատերացիայի ժամանակ եռանկյունների կողմերի չափման սարքեր և գործիքներ, ռադիո և լուսահեռաչափեր: Թեմա 6 Ճափումների ճշտության ստուգումը և գնահատումը, աշխատանքային հիմնավորման կապակցումը պետական գեոդեզիական ցանցին:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0903/B23. Ինժեներային երկրաբանություն և գրունտագիտություն (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (32 ժամ դասախոսություն և
32 ժամ գործնական պարապմունք)
4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել երկրաբանական միջավայրի և ճարտարագիտական կառույցների փոխազդեցության խնդիրներին, ճարտարագիտաերկրաբանական պրոցեսների կանխորոշմանը և հաշվարկմանը, լեռնային ապարների երկրատեխնիկական հատկությունների փոփոխության օրինաչափություններին, կապված ապարների առաջացման պայմանների և հետգենետիկ պրոցեսների հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրունտների տեսական հիմունքները և կծանոթանա ճարտարագիտական երկրադինամիկային,
2. կհասկանա ռեգիոնալ ճարտարագիտական երկրաբանության ընդհանուր օրենքները,

3. կկարողանա կատարել ճարտարագիտա-երկրաբանական հետազոտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ճարտարագիտական երկրաբանությունը որպես երկրաբանական գիտական ուղղություն: ***Թեմա 2***՝ Գրունտների կազմը և կառուցվածքը, ջրաֆիզիկական և մեխանիկական հատկությունները: ***Թեմա 3***՝ Երկրաբանական պրոցեսներ, երևույթներ, նրանց ճարտարագիտաերկրաբանական դասակարգումը: ***Թեմա 4***՝ Հողմահարման պրոցեսների և կեղևի ճարտարագիտաերկրաբանական գնահատումը: ***Թեմա 5***՝ Գերնստման երևույթներ: ***Թեմա 6***՝ Սեյսմիկ միկրոշրջանացում: ***Թեմա 7***՝ Ռեգիոնալ ճարտարագիտական երկրաբանության հիմնական դրույթները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում. Թեստ: Միավորների քայլը 0,5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0,5 է:

0903/B24. Մաթեմատիկական քարտեզագրություն (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (32 ժամ դասախոսություն և
32 ժամ գործնական պարապմունք)
4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել քարտեզների ստեղծման պրոցեսի կարևորագույն էտապներից մեկի՝ քարտեզների մաթեմատիկական հիմքի նախատեսման, քարտեզագրական պրոյեկցիաների և աղավաղումների բաշխման օրենքների պատշաճ մասնագիտական պատկերացում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա քարտեզի մաթեմատիկական հիմքի տարրերի՝ մասշտաբի, գեոդեզիական հիմքի և քարտեզագրական պրոյեկցիաների մասին,
2. կհասկանա մաթեմատիկական այն օրենքները, որոնք թույլ են տալիս քարտեզագրվող մակերևույթի և հարթության կետերի միջև ստեղծել փոխադարձ ֆունկցիոնալ կապ,
3. կկարողանա քարտեզներից ճիշտ օգտվել և կատարել ճշգրիտ չափումներ՝ հաշվի առնելով աղավաղումների բաշխման օրենքները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Քարտեզների մաթեմատիկական հիմքը որպես քարտեզների ստեղծման պրոցեսի կարևորագույն էտապ՝ քարտեզագրական պրոյեկցիայի ընտրմամբ և համապատասխան քարտեզագրական ցանցի կառուցմամբ: ***Թեմա 2***՝ Քարտեզագրական պրոյեկցիաների բովանդակությունը և աղավաղումների

բաշխման օրենքները: ***Թեմա 3***՝ Մասշտաբը, գեոդեզիական հիմքը և քարտեզագրական պրոյեկցիան որպես քարտեզի մաթեմատիկական հիմքի տարրեր: ***Թեմա 4***՝ Քարտեզագրական պրոյեկցիաների ստորաբաժանումը ըստ աղավաղման բնույթի և ըստ օգտագործված օժանդակ երկրաչափական մարմնի:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0903/ B25. Ձեռնարկությունների էկոնոմիկա (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (30 ժամ դասախոսություն և
18 ժամ գործնական պարապմունք)
5-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողների մոտ ձևավորել ձեռնարկության՝ որպես շուկայական տնտեսության պայմաններում գործող ինքնակարգավորվող համակարգի, դրա կառուցվածքի, գործառույթների, ռեսուրսների, ծախսերի և արդյունքների, ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման առանձնահատկությունների մասին գիտական պատկերացումներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ձեռնարկության տնտեսական վարքի բնույթը շուկայի ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների համատեքստում,
2. կհասկանա շուկայի ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների դերը ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման գործում,
3. կկարողանա հմտությունները օգտագործել ինքնուրույնաբար կառավարչական որոշումների կայացման գործում:

Բովանդակությունը.

2. կհասկանա ոլորտի աշխատանքների իրականացման գործում գոյություն ունեցող իրավունքների կարևորությունը,
3. կկարողանա ստացած գիտելիքները օգտագործել կոնկրետ բնագավառում,

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Սոցիալ-մշակութային ծառայությունների ոլորտում իրավունքի նշանակությունը: ***Թեմա 2***՝ Զբոսաշրջության ոլորտում իրավունքի նշանակությունը: ***Թեմա 3***՝ Վարչական և զբոսաշրջության ոլորտում իրավունքներն ու պարտականությունները: ***Թեմա 4***՝ ՀՀ-ում զբոսաշրջության և ծառայության ոլորտի իրավունքները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում. Թեստ: Միավորների քայլը 0,5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0,5 է:

0902/B47. Գովազդը սոցիալ-մշակույթային ծառայության և զբոսաշրջության ոլորտում (3 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ (30 ժամ դասախոսություն և
18 ժամ գործնական պարապմունք),
8-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել գովազդի, սոցիալ-մշակույթային ծառայությունների և զբոսաշրջության մեջ նրանց դերի, նշանակության մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա զբոսաշրջության ոլորտ հասկացությունը, նրա դերը տնտեսության ոչ նյութական ոլորտում, ոլորտում գործող ծառայությունները և նրանց նշանակությունը ոլորտի զարգացման համար:
2. կհասկանա գովազդի էությունն ու նշանակությունը, նրա նպատակը և խթանիչ դերը, գովազդի տեսակները:
3. կկարողանա սոցիալ-մշակույթային ծառայություններին, նրանց հիմնարար դերին զբոսաշրջության զարգացման գործում, տեղական նշանակությանը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Զբոսաշրջության ոլորտ հասկացությունը, նրա դերը նրա դերը: ***Թեմա 2՝*** Գովազդ: Գովազդը որպես տնտեսության նոր ձևավորվող ճյուղ: Գովազդի կազմակերպում, ընթացակարգը և տարածման միջոցները՝ մամուլ, հեռուստատեսություն, ռադիո և այլն: ***Թեմա 3՝*** Սոցիալմշակույթային ծառայություններ, նրանց հիմնարար դերը զբոսաշրջության զարգացման գործում, տեղական նշանակությունը: ***Թեմա 4՝*** Հյուրանոցային ինդուստրիա: ***Թեմա 5՝*** Ժամանցային, առողջարարական, գործարարական տուրիզմի կազմակերպման առանձնահատկությունները և այն սպասարկող ծառայությունները: ***Թեմա 6՝*** Առողջարարական տուրիզմի կազմակերպումը, նրա տարբերող առանձնահատկությունները, կուրորտների տիպերը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում. Թեստ: Միավորների քայլը 0,5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0,5 է:

4.5. «Երկրաբանություն» մասնագիտություն

0104/B01. Մաթեմատիկա (7 կրեդիտ)

Շաբաթական 8 ժամ (32 դասախոսություն և
96 ժամ գործնական աշխատանք)
1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել անալիտիկ երկրաչափության, բարձրագույն հանրահաշվի և մաթեմատիկական անալիզի հիմունքներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ուղիղ գծի և հարթության հավասարումները, վեկտորների սկալյար, վեկտորական և խառն արտադրյալները,

2. կկարողանա հաշվել որոշիչներ, կատարել գործողություններ մատրիցների հետ, լուծել գծային հավասարումների համակարգեր,
3. օանոթ կլինի անընդհատ ֆունկցիաներին, հաջորդականության և ֆունկցիայի սահմաններին, ֆունկցիայի ածանցիալի և ինտեգրալի, թվային շարքի գաղափարներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գծային հանրահաշվի տարրերը: ***Թեմա 2***՝ Անալիտիկ երկրաչափությունը հարթության վրա: ***Թեմա 3***՝ Վեկտորները հարթության և տարածության մեջ: ***Թեմա 4***՝ Անալիտիկ երկրաչափությունը տարածության մեջ: ***Թեմա 5***. Ֆունկցիա: Անընդհատություն: ***Թեմա 6***՝ Մեկ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ հաշիվ: ***Թեմա 7***՝ Մի քանի փոփոխականի ֆունկցիաներ: ***Թեմա 8***՝ Ինտեգրալ հաշիվ: ***Թեմա 9***՝ Թվային շարքեր: ***Թեմա 10***՝ Դիֆերենցիալ հավասարումներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքնաչյուրը **1** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

0408/B01. Ֆիզիկա (6 կրեդիտ)

Շաբաթական 7 ժամ (32 ժամ դասախոսություն

80 ժամ լաբորատոր աշխատանք)

2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ընդհանուր ֆիզիկայի հիմնական օրենքներին, դրանց առնչվող հիմնական փորձերին, ներկայացնել այդ օրենքների դիֆերենցիալ և ինտեգրալ տեսքով, գաղափար տալ դրանց հիմնական կիրառությունների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը

1. կիմանա ընդհանուր ֆիզիկայի հիմնական օրենքները և դրանց առնչվող կարևորագույն փորձերը, երևույթները
2. կհասկանա այդ երևույթների, փորձերի, օրենքների համակարգերի ներքին տրամաբանությունը, այդ համակարգերից բխող հիմնական հետևությունները և արդյունքները:
3. կարողանա ստացած գիտելիքները կիրառել կոնկրետ բնույթ կրող հարցերի վերլուծության, խնդիրների լուծման համար:

Բովանդակություն.

Թեմա 1՝ Նյութական կետի կինեմատիկա: ***Թեմա 2***՝ Նյութական կետի և համակարգի դինամիկա: ***Թեմա 3***՝ Պինդ մարմնի մեխանիկա: ***Թեմա 4***՝ Հեղուկների և գազերի շարժումը: ***Թեմա 5***՝ Նյութի վիճակ: ***Թեմա 6***՝ Թերմոդինամիկայի հիմուքներ: ***Թեմա 7***՝ Հաղորդիչները և դիէլեկտրիկները էլեկտրական դաշտում: ***Թեմա 8***՝ Հաստատուն էլեկտրական հոսանքներ: ***Թեմա 9***՝ Մագնիսական դաշտ: ***Թեմա 10***՝ Էլեկտրամագնիսական ինդուկցիա: ***Թեմա 11***՝ Էլեկտրամագնիսական տատանումներ: ***Թեմա 12***՝ Լույսի ինտերֆերենցիա և դիֆրակցիա: ***Թեմա 13***՝ Լույսի փոխազդեցությունը նյութի հետ: ***Թեմա 14***՝ Ջերմային ճառագայթում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքնաչյուրը **1** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

0601/B01. Քիմիա - (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (20 ժամ դասախոսություն

44 ժամ լաբորատոր աշխատանք)

2-րդ կիսամյակ քննություն:

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել քիմիական գիտության տեսական և փորձնական հիմնահարցերի մասին հիմնարար պատկերացումներ՝ համապատասխան քիմիայի ժամանակակից մակարդակին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ընդհանուր և անօրգանական քիմիայի տեսական օրենքները, տարրերի տարածվածությունը բնության մեջ,
2. կհասկանա առանձին տարրերի, հատկապես մետաղների ստացման եղանակները և կիրառման ոլորտները,
3. կկարողանա կատարել ինքնուրույն աշխատանքներ հանքանյութերի որակական և քանակական հետազոտությունների բնագավառում, լաբորատոր փորձերի ընթացքում կկարողանա կատարել տարրերի հայտնաբերման որակական և քանակական աշխատանքներ և այդ բոլորից անել անհրաժեշտ վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Քիմիայի զարգացման պատմական ուղին, տեղն ու դերը մյուս գիտությունների համակարգում: ***Թեմա 2***՝ Քիմիայի հիմնական օրենքները: Պարբերական համակարգի դերն ու նշանակությունը: ***Թեմա 3***՝ Տարրերի տարածվածությունը երկրի կեղևում, դրանց հայտնաբերման եղանակները: ***Թեմա 4***՝ Տարրերի դերն ու նշանակությունը մարդու օրգանիզմում, դրանց քիմիական և

ֆիզիկական հատկությունները: ***Թեմա 5***՝ Մետաղների ստացման եղանակները: ***Թեմա 6***՝ Երկրի ընդերքում տեղի ունեցող երկրաքիմիական երևույթների բնույթը և վերլուծությունը: ***Թեմա 7***՝ Քիմիական կինետիկա: Դարձելի, ոչ դարձելի ռեակցիաներ: ***Թեմա 8***՝ Ջերմա-, ջրա- և էլեկտրամետաղագործություն: ***Թեմա 9***՝. Լուծույթներ: Լուծույթների խտության որոշման եղանակներ: ***Թեմա 10***՝ Պարբերական համակարգի IV գլխավոր ենթախմբի տարրերի ընդհանուր բնութագիրը: ***Թեմա 11***՝ Երկաթի ենթախմբի տարրերի (Fe,Co,Ni) ընդհանուր բնութագիրը: ***Թեմա 12***՝ III գլխավոր ենթախմբի տարրերը: ***Թեմա 13***՝ VII գլխավոր և երկրորդական ենթախմբի տարրերի ընդհանուր բնութագիրը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքնաչյուրը **1** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

0903/B01. Գեոդեզիա կոսմոհանույթի հիմունքներով (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (16 ժամ դասախոսություն և
32 ժամ լաբորատոր աշխատանք)
2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գեոդեզիական հանույթային աշխատանքների կազմակերպման սկզբունքների ու խնդիրների, օգտագործվող սարքերի ու գործիքների, ինչպես նաև կատարման եղանակների վերաբերյալ պատշաճ մասնագիտական պատկերացում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկազմի ընդհանուր պատկերացում գեոդեզիական հանույթային աշխատանքների կատարման մասին,
2. կիմանա հանույթի յուրաքանչյուր տեսակի իրականացման առանձնահատկությունները և կիրառման ոլորտները,
3. կկարողանա հանույթի դաշտային չափումների տվյալներով կազմել հատակագծեր ու քարտեզներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հորիզոնական թեոդոլիտային հանույթ, կատարման կարգը, եղանակները, չափումների արդյունքների մշակումը և հատակագծի կազմումը: ***Թեմա 2***՝ Տախեոմետրիական հանույթի կատարման համար տախեոմետրիական փակ և բաց ընթացքների անցկացումը, պիկետների պլանային և բարձունքային դիրքի որոշման եռաստիճան չափումներ, ռելիեֆի և իրադրության պատկերումը

հատակագծերի և քարտեզների վրա: ***Թեմա 3՝*** Մենզուլային հանույթ, առանձնահատկությունները, հանույթի կատարման եղանակները: Երկրաչափական ցանցի կառուցումը, կետերի բարձրությունների հաշվումը և կապակցումը: Հանույթային պլանշետների շրջանակների կառուցումը, հենման կետերի տեղադրումը պլանշետի վրա:

0801/B02. Ընդհանուր երկրաբանություն (5 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (6 ժամ դասախոսություն,
64 ժամ լաբորատոր աշխատանք),
1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել երկրաբանության հիմունքներին, արտածին, ներծին երկրաբանական պրոցեսներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

1 կիմանա երկրի ոլորտների կառուցվածքը, երկրագնդի զարգացման պատմությունը, ապարների ծագումը և պետրոգրաֆիական կազմը,
2 կհասկանա երկրաժամանակագրական սանդղակի էությունը,
3 կկարողանա կատարել երկրաբանական քարտեզագրում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Երկրագունդը տիեզերական տարածքում: **Թեմա 2՝** Երկրագնդի ոլորտները, կազմը, տարքը: **Թեմա 3՝** Արտածին պրոցեսներ (էռոզիա, աբռազիա, էկզառացիա, էոլյան պրոցեսներ, գրավիտացիոն պրոցեսներ): **Թեմա 4՝** Ներծին պրոցեսներ (մագմատիզմ, տեկտոնիկա, սեյսմոգեն պրոցեսներ, մետամորֆիզմ): **Թեմա 5՝** Ծանոթություն հանքերի, հանքավայրերի վերաբերյալ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքնաչյուրը **1** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

0802/B01. Միներալոգիա բյուրեղագիտության հիմունքներով-1 (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (18 ժամ դասախոսություն,
30 ժամ լաբորատոր աշխատանք),
1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել միներալների տեսակներին և նրանց հատկություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

1. կիմանա միներալների առաջացման պրոցեսները,
2. կհասկանա նրանց ֆիզիկական ու քիմիական հատկությունները,
3. կկարողանա միներալները տարբերակել միմյանցից։

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածական ծանոթություն միներալների առաջացման պրոցեսների հետ: ***Թեմա2***՝ Բյուրեղագիտության հիմունքները: ***Թեմա 3***՝ Միներալների ներքին կառուցվածքը, քիմիական կազմը և այլն: ***Թեմա 4***՝ Միներալների ֆիզիկական հատկությունները: ***Թեմա 5***՝ Միներալաառաջացման պրոցեսները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0, 5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0,5 է:

0802/B02. Միներալոգիա բյուրեղագիտության հիմունքներով-2 (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (14 ժամ դասախոսություն,

50 ժամ լաբորատոր աշխատանք)

2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել միներալների տեսակներին և նրանց հատկություններին։

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

1. կիմանա միներալների առաջացման պրոցեսները,
2. կհասկանա նրանց ֆիզիկական ու քիմիական հատկությունները,
3. կկարողանա միներալները տարբերակել միմյանցից։

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածական ծանոթություն միներալների առաջացման պրոցեսների հետ: ***Թեմա 2***՝ Բյուրեղագիտության հիմունքները: ***Թեմա 3***՝ Միներալների ներքին կառուցվածքը, քիմիական կազմը և այլն: ***Թեմա 4***՝ Միներալների ֆիզիկական հատկությունները: ***Թեմա 5***՝ Միներալաառաջացման պրոցեսները

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը **2** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0805/B01. Պատմական երկրաբանություն հնէաբանության հիմունքներով (8 կրեդիտ)

Շաբաթական 8 ժամ (64 ժամ դասախոսություն և
64 ժամ լաբորատոր աշխատանք),
3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել Հնէաբանության և պատմական երկրաբանության տեսական հիմնարար գիտելիքներ, տիրապետել նրանց ուսունասիրության մեթոդներին և գիտելիքների հմուտ կիրառումը գիտական և գործնական խնդիրների լուծման համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա արդի պատմական երկրաբանության և հնէաբանության մասնագիտության տեսական խնդրացանկը,
2. կհասկանա պատմական երկրաբանության հնէաբանական հիմունքներով մասնագիտության վերլուծական մեթոդների տրամաբանությունը,
3. կկարողանա կատարել մասնագիտական վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պատմական երկրաբանությունը որպես գիտություն: Սահմանումը, գլխավոր հասկացությունները, առարկան և խնդիրները, կապը այլ երկրաբանական գիտությունների հետ, հատկապես հնէաբանության և շերտագրության: ***Թեմա 2՝*** Շերտագրություն և ժամանակագրություն: Շերտագրական միավորների տիպերը, առանձնացման չափանիշները, հարաբերական և բացարձակ ժամանակագրություն, ստորաբաժանումների էտալոնները: ***Թեմա 3՝*** Պատմաերկրաբանական վերլուծության հիմնական մեթոդները, ֆացիալ, հնէաբանական, հնաշխարհագրական քարտեզներ, ֆորմացիոն, հնատեկտոնական: ***Թեմա 4՝*** Երկրակեղևի գլխավոր տեկտոնական կառույցները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0804/B01. Կառուցվածքային երկրաբանություն և երկրաբանական քարտեզագրում -1 (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (24դասախոսություն և
24ժամ լաբորատոր աշխատանք),
3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել երկրակեղևի հիմնական կառուցվածքային տիպերին, դրանց ուսումնասիրման ու քարտեզա·րման եղանակներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա որոշել երկրակեղևը կազմող հիմնական կառուցվածքային տիպերի տեղադրման ձևերն ու առանձնահատկությունները,
2. գաղափար կկազմի երկրաբանական քարտեզների տեսակների ու մասշտաբների մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կառուցվածքային երկրաբանությունը, նրա խնդիրները և մեթոդները: Կառուցվածքային ձևերի պատկերման եղանակները: ***Թեմա 2՝*** Երկրաբանական քարտեզները, դրանց տեսակներն ու տիպերը: Քարտեզների կազմման սկզբունքները: ***Թեմա 3՝*** Երկրաբանական քարտեզների պայմանական նշանները, երկրաբանական կտրվածք, շերտագրական սյունակ: ***Թեմա 4՝*** Լեռնային ապարների դեֆորմացիայի ֆիզիկական պայմանները: Դեֆորմացիայի տեսակները: ***Թեմա 5՝*** Շերտ և շերտավորություն: Շերտավորության տիպերը: Շերտայնության մակերեսների կառուցվածքը: ***Թեմա 6՝*** Շերտի դիրքը տարածության մեջ. հորիզոնական և թեք տեղադրում: Տեղադրման էլեմենտները և նրանց չափման եղանակները: ***Թեմա 7՝*** Աններդաշնակություններ: Շերտագրական և տեկտոնական աններդաշնակություններ: Դրանց պարզաբանման չափանիշները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **8** հարց, յուրաքանչյուրը **0,5** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով:
Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր:
Միավորների քայլը 0,5 է:

0802/B03. Պետրոլոգիա-1 (7 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (24 դասախոսություն և
24 ժամ լաբորատոր աշխատանք),
3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել երկիրը կազմող հրային և մետամորֆային ապարներին, նրանց միներալային և քիմիական կազմին, հրաբխային և ինտրուզիվ ապարների մարմիններին, ապարների ծագումնաբանական խնդիրներին և նրանց հետ կապված հանքավայրերին, հետազոտման մանրադիտակային և անալիտիկ մեթոդներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հրային ապարների՝ հրաբխային և ինտրուզիվ, միներալային և քիմիական կազմը, անվանակարգումը, հրային ապարների տարածման առանձնահատկությունները երկրակեղևի տարբեր երկրատեկտոնական կառույցներում,
2. կհասկանա հրային ապարների ուսումնասիրման մեթոդները բևեռացնող մանրադիտակի միջոցով, տարբեր տիպի մագմատիկ հալոցքների ծագումը երկրակեղևում և մանթիայում և համապատասխան ապարների առաջացումը,
3. կկարողանա տարբերակել հրային և մետամորֆային ապարների հետ կապված օգտակար հանածոների հանքավայրերը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բյուրեղաօպտիկայի հիմունքները, միներալների և ապարների հետազոտման մեթոդները բևեռացնող մանրադիտակի տակ: ***Թեմա 2՝*** Ապար կազմող գլխավոր միներալները և նրանց տարածվածությունը հրային ապարներում: ***Թեմա 3՝*** Ընդհանուր հասկացություններ մագմայի մասին: Մագմատիկ հալոցքների կառուցվածքը, քիմիական կազմը, հատկությունները, դիֆերենցման դրույթը, միներալների բյուրեղացման հաջորդականությունը և տարբեր գործոնների ազդեցությունը բյուրեղացման վրա: ***Թեմա 4՝*** Մագմատիկ մարմինների ձևաբանությունը, ներքին կառուցվածքը, էֆուզիվ և ինտրուզիվ մարմինների տեղադրման երկրաբանական պայմանները: ***Թեմա 5՝*** Ապարների վերափոխումը մետամորֆիզմի ընթացքում: Մետամորֆիզմը վերահսկող գործոնները: Մետամորֆիզմի ֆացիանների տեսությունը: ***Թեմա 6՝*** Մետամորֆիզմի տիպերը՝ թերմալ մետամորֆիզմ, դինամոմետամորֆիզմ և դինամոթերմալ մետամորֆիզմ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը **2** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0803/B01. Երկրաֆիզիկա – 1 (4կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (32 դասախոսություն և 32 ժամ լաբորատոր աշխատանք),

3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել երկրաֆիզիկական մեթոդներից գրավիհետախուզական մեթոդի տեսական հիմքին, միջուկային երկրաֆիզիկական մեթոդին, մագնիսահետախուզության մեթոդի հիմունքներին, դրանցով լուծվող երկրաբանական խնդիրներին:, ծանրության ուժի չափման մեթոդներին և տեխնիկային, չափված արժեքների վրա մտցվող ուղղումների հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրավիհետախուզական մեթոդի հիմնական խնդիրները, ռադիոակտիվ երևույթների ֆիզիկական հիմքը, մագնիսահետախուզության մեթոդի տեսությունը և լուծվող խնդիրները
2. կհասկանա գրավիհետախուզության և մագնիսահետախուզության տեղը մյուս երկրաֆիզիկական մեթոդների համալիրում, ռադիոմետրական երևույթների օգնությամբ լուծվող երկրաբանական խնդիրները,
3. կկարողանա համապատասխան գործիքով չափել ծանրության ուժի արժեքը և նրա վրա մտցնել համապատասխան ուղղումներ, չափել երկրամագնիսական դաշտի տարբեր էլեմենտների արժեքները, չափել ռադիոչափի օգնությամբ ռադիոակտիվ դաշտը և տալ նրա երկրաբանական մեկնաբնությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ձգողական ուժ, նրա պոտենցիալ ֆունկցիան, Լապլասի և Պուասոնի հավասարումները: ***Թեմա 2***՝ Կենտրոնաձիգ ուժ, նրա պոտենցիալ ֆունկցիան: ***Թեմա 3***՝ Ծանրության ուժի նորմալ արժեքը, Կլերոյի և Հելմերտի բանաձևերի իմաստը: ***Թեմա 4***՝ Ծանրության ուժի փոփոխությունը ըստ ժամանակի: ***Թեմա 5***՝ Ծանրության ուժի ռեդուկցիաները: ***Թեմա 6***՝ Գրավիտացիոն դաշտի չափված արժեքների մեկնաբանման եղանակները: ***Թեմա 7***՝ Ծանրության ուժի դիտարկման դինամիկ և ստատիկ եղանակի մեթոդիկան: ***Թեմա 8***՝ Գրավիհետախուզության օգնությամբ լուծվող երկրաբանական խնդիրները: ***Թեմա 9***՝ Միջուկային երկրաֆիզիկա առարկայի խնդիրները, տրոհման օրենքը: ***Թեմա 10***՝ Լեռնային ապարների, լիթոսֆերայի և հիդրոսֆերայի ռադիոակտիվությունը: ***Թեմա 11***՝ Միջուկային գեոխրոնոլոգիայի հիմունքները: ***Թեմա 12***՝ Ռադիոակտիվ դաշտը չափող գործիքներ: ***Թեմա 13***՝ Նմուշների ռադիոչափական անոմալիա, նրանց լաբորատոր մշակման եղանակները: ***Թեմա 14***՝ Ռադիոակտիվ հանքավայրերի որոնման և հետախուզման մեթոդիկան ու տեխնիկան, հանույթի ձևերը: ***Թեմա 15***՝ Երկրամագնիսական դաշտ, առաջացման պատճառները, ուսումնասիրման պատմությունը: ***Թեմա 16***՝ Երկրամագնիսական դաշտի էլեմենտները, կառուցվածքը և վարիացիաները: ***Թեմա 17***՝ Լեռնային ապարների մագնիսական հատկությունները: ***Թեմա 18***՝ Մագնիսահետախուզության տեսության հիմունքները, մագնիսական դիպոլի դաշտը, նորմալ և անոմալ մագնիսական դաշտեր: ***Թեմա 19***՝ Մագնիսահետախուզության ուղիղ և հակադարձ

խնդիրների լուծումը: *Թեմա 20*՝ Մագնիսահետախուզական հանույթի դաշտային մեթոդները

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր:

Միավորների քայլը 0,5 է:

0802/B04. Պետրոլոգիա-2 (7 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (40 դասախոսություն և
40 ժամ լաբորատոր աշխատանք),
4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել երկիրը կազմող հրային և մետամորֆային ապարներին, նրանց միներալային և քիմիական կազմին, հրաբխային և ինտրուզիվ ապարների մարմիններին, ապարների ծագումնաբանական խնդիրներին և նրանց հետ կապված հանքավայրերին, հետազոտման մանրադիտակային և անալիտիկ մեթոդներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հրային ապարների՝ հրաբխային և ինտրուզիվ, միներալային և քիմիական կազմը, անվանակարգումը, հրային ապարների տարածման առանձնահատկությունները երկրակեղևի տարբեր երկրատեկտոնական կառույցներում,
2. կհասկանա հրային ապարների ուսումնասիրման մեթոդները բևեռացնող մանրադիտակի միջոցով, տարբեր տիպի մագմատիկ հալոցքների ծագումը երկրակեղևում և մանթիայում և համապատասխան ապարների առաջացումը,
3. կկարողանա տարբերակել հրային և մետամորֆային ապարների հետ կապված օգտակար հանածոների հանքավայրերը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բյուրեղաօպտիկայի հիմունքները, միներալների և ապարների հետազոտման մեթոդները բևեռացնող մանրադիտակի տակ: *Թեմա 2*՝ Ապար կազմող գլխավոր միներալները և նրանց տարածվածությունը հրային ապարներում: *Թեմա 3*՝ Ընդհանուր հասկացություններ մագմայի մասին: Մագմատիկ հալոցքների կառուցվածքը, քիմիական կազմը, հատկությունները, դիֆերենցման դրույթը, միներալների բյուրեղացման հաջորդականությունը և տարբեր գործոնների ազդեցությունը բյուրեղացման վրա: *Թեմա 4*՝ Մագմատիկ մարմինների ձևաբանությունը, ներքին կառուցվածքը, էֆուզիվ և ինտրուզիվ մարմինների տե-

ղադրման երկրաբանական պայմանները: *Թեմա 5*՝ Ապարների վերափոխումը մետամորֆիզմի ընթացքում: Մետամորֆիզմը վերահսկող գործոնները: Մետամորֆիզմի ֆացիանների տեսությունը: *Թեմա 6*՝ Մետամորֆիզմի տիպերը՝ թերմալ մետամորֆիզմ, դինամոմետամորֆիզմ և դինամոթերմալ մետամորֆիզմ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը **2** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0803/B02. Երկրաֆիզիկա - 2 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (32 դասախոսություն և
32 ժամ լաբորատոր աշխատանք),
4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել էլեկտրահետախուզական մի քանի կիրառական և արդյունավետ մեթոդներին, նրանց կիրառմամբ գործնական խնդիրների լուծման և ստացված տվյալների մշակման ու մեկնաբանման մոտեցումներին, ծանոթացնել սեյսմահետախուզական սարքավորումներին, կատարել դաշտային նյութերի նախնական մշակում

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա էլեկտրահետախուզական մեթոդների կիրառումը երկրաֆիզիկական ուսումնասիրությունների բնագավառում, սեյսմահետախուզական սարքավորումների աշխատանքի սկզբունքները
2. կհասկանա ուսուցանվող մեթոդների դաշտային տվյալների որակական և քանակական մշակումն ու մեկնաբանումը, նշված բնագավառում համակարգչային տեխնոլոգիայի և ժամանակակից սարքավորումների ներդրումը, սեյսմաժապավենի վրա անջատել ալիքի առաջին մուտքը
3. կկարողանա ուսուցանվող մեթոդներով լուծել երկրաբանական խնդիրներ, նախնական մշակման ենթարկել ստացված տվյալները՝ հոդոգրաֆ կառուցել և հաշվարկների միջոցով սեյսմիկ սահմանի տեղադրման խորությունը որոշել:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ապարների էլեկտրական հատկությունները: *Թեմա 2*՝ Հաստատուն հոսանքի մեթոդները և նրանց մոդիֆիկացիաները: *Թեմա 3*՝ Դիմադրության մեթոդները և նրանց կիրառումը կառուցվածքային, հանքային, ինժեներական և հիդրոերկրաբանական բնագավառներում: *Թեմա 4*՝ Սեյսմահետախուզական սարքավորման աշխատանքի սկզբունքը: *Թեմա 5*՝ Սեյսմաժապավենի մշակում,

հոդոգրաֆի կառուցում, ***Թեմա 6***՝ Բեկված ալիքի արագության որոշում: ***Թեմա 7*** Սեյսմիկ սահմանի տեղադրման խորությունը որոշում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0309/B01. Համակարգչից օգտվելու հմտություններ, ծրագրավորում (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (32 ժամ դասախոսություն,
32 ժամ գործնական պարապմունք),
4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը

Դասընթացի նպատակն է տալ ուսանողներին համակարգչից օգտվելու հմտություններ և ուսուցանել ծրագրավորման հիմունքները, ծրագրավորման C++ լեզվի հիման վրա:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

1. կունենա համակարգչից օգտվելու հմտություններ,
2. կիմանա տարրական ալգորիթմներ,
3. կկարողանա կիրառել կառուցվածքային մոտեցումը խնդիրներ լուծելիս,
4. կկարողանա կազմել ծրագրեր C++ լեզվով ըստ մշակված ալգորիթմի:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Համակարգչից օգտվելու հմտություններ: ***Թեմա 2***՝ Ալգորիթմ: ***Թեմա 3***՝ Լեզվի այբուբեն, շարահյուսական կանոններ և իմաստաբանական մեկնաբանումը: ***Թեմա 4***՝ Լեզվի լեքսեմներ, տիպ, փոփոխական, արտահայտություն: ***Թեմա 5***՝ Լեզվի օպերատորներ, զանգված:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0, 5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0,5 է:

0804/B02. Կառուցվածքային երկրաբանություն
և երկրաբանական քարտեզագրում -2 (5 կրեդիտ)
Շաբաթական 5 ժամ (40 դասախոսություն և
40 ժամ լաբորատոր աշխատանք),
4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ պատկերացում ձևավորել երկրի ընդերքում երկրաբանական կառուցվածքների ու մարմինների տեղադրման ձևերի և պայմանների մասին: Ունակություններ ձեռք բերել քարտեզների և կտրվածքների վրա դրանց արտացոլման համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա տարանջատել տարբեր կառուցվածքային տարրերը, վերլուծել երկրաբանական քարտեզներն ու տարածքների զարգացման փուլերը,
2. կկարողանա հետազոտման նյութերի հիման վրա կազմել տարբեր տիպի երկրաբանական քարտեզներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Շերտերի հորիզոնական տեղադրման ձևերը: Դրանց պատկերումը երկրաբանական քարտեզների վրա, երկրաբանական կտրվածքի կազմման կանոնները: ***Թեմա 2՝*** Միաթեք կառուցվածքներ: Դրանց արտահայտումը երկրաբանական քարտեզների ու կտրվածքների վրա: Միաթեք կառուցվածքների քարտեզագրման մեթոդները: ***Թեմա 3՝*** Նորմալ և շրջված տեղադրում: Մակերեսի վրա շերտի ելքի, լայնության և ձևի կախվածությունը նրա իրական հզորությունից, անկման անկյունից և ռելիեֆի ձևերից: Շերտային եռանկյուններ: ***Թեմա 4՝*** Ծալքավոր կառուցվածք: Ծալքերի բնութագրումը. նրանց տարրերը, մորֆոլոգիական դասակարգումը: Ծալքառաջացման դինամիկ և երկրաբանական պայմանները: ***Թեմա 5՝*** Ճեղքվածքներ և խզվածքային խախտումներ: Նրանց տեղաշարժի բնորոշումն ու ծագումնաբանական դասակարգումը: Նրանց արտահայտումը երկրաբանական քարտեզների վրա: ***Թեմա 6՝*** Հրային ապարների տեղադրման ձևերն ու առանձնահատկությունները: Հրաբխային համակարգերի կառուցվածքային ձևերը, ուսումնասիրման մեթոդները և քարտեզագրման եղանակները: ***Թեմա 7՝*** Ինտրուզիվ ապարների տեղադրման ձևերը: Ինտրուզիվ մարմինների ձևերը և առաջացման պայմանները, կոնտակտների ձևերը: Քարտեզագրման եղանակները: ***Թեմա 8՝*** Մետամորֆային ապարներ, նրանց տեղադրման ձևերը, տեքստուրային առանձնահատկությունները: Մետամորֆային համակարգերի շերտագրական ստորաբաժանումը, ծալքավորության բնութագրումը և քարտեզագրումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **8** հարց, յուրաքանչյուրը **0,5** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0805/B02. Երկրաէկոլոգիա - (2 կրեդիտ)

Շաբաթական 2ժամ (32 ժամ դասախոսություն)

4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ապագա երկրաբան մասնագետներին ծանոթացնել բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, նպատակասլաց կառավարման և շրջակա միջավայրերի պահպանության ռազմավարության ու միջազգային համագործակցության հիմնախնդիրներին, որոնք անհրաժեշտ են լինելու նրանց հետագա աշխատանքային գործունեության ընթացքում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա էկոլոգիական երկրաբանության հիմնախնդիրները,
2. կհասկանա մարդ-տնտեսություն-բիոտ-միջավայր համակարգի կարևորությունը՝ բնական և հասարակական գիտությունների միատեղման տրամաբանությունը,
3. կկարողանա կատարել բնական ռեսուրսների ձևավորման, գնահատման, խնայողաբար և համալիր օգտագործման, բնության վրա մարդածին տնտեսական ներգործության վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա1 ՝ <<Երկրաէկոլոգիա>> առարկայի ժամանակակից հիմնախնդիրները, ուսումնասիրության մեթոդները, գիտական հասկացությունները: ***Թեմա 2՝*** Հավերժ փոփոխվող երկրիր մոլորակը երկարակյաց արեգակնային համակարգում, երկրի ծագումը: Երկրակեղև, քարոլորտ: Երկրագնդի համակենտրոն ոլորտային կառուցվածքը, երկրաքիմիական կազմը, բնական ռեսուրսների ձևավորումը: Վ.Վերնադսկու ուսմունքը կենսոլորտի-մարդոլորտի մասին:***Թեմա 3՝*** Բնական ռեսուրսներ և բնական պայմաններ: Բնական ռեսուրսների դասակարգումը: Բնական ռեսուրսների կադաստրներ: ***Թեմա 4՝*** Երկրագնդի բնական ռեսուրսների (մթնոլորտ, ջրային, հողային, բուսական, կենդանական, կենսաբազմազանության և այլն) օգտագործման պահպանման ու վերականգնման առանձնահատկությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0,5 է:

0801/B03. Գեոմորֆոլոգիա և հորիզոնական նստվածքների երկրաբանություն (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (32 ժամ դասախոսություն և
16 ժամ լաբորատոր աշխատանք)
4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է կարողանալ կարդալ ռելիեֆը, դրա միջոցով պարզաբանել որոշակի տարածքի երկրաբանական կառուցվածքը և որոշակի խնդիրներ լուծել նստվածքային ծագման և ցրոնային օգտակար հանածոների կուտակումների հետ կապված որոշակի խնդիրներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա երկրի մակերևույթի ռելիեֆի յուրահատուկ ձևերի միջոցով հայտնաբերել նստվածքային և ցրոնային ծագման օգտակար հանածոների կուտակումները,
2. կհասկանա երկրի մակերեսի ձևերի համեմատական համադրությամբ անկայուն տեղամասերի (սողանքներ և փլվածքներ) առանձնահատկությունների պարզաբանումը խոշոր կառուցապատումների իրականացման համար՝ ճանապարհներ, թունելներ, ջրամբարներ, արդյունաբերական-քաղաքացիական օբյեկտներ և այլն,
3. կկարողանա բացահայտել տեղանքի նեոտեկտոնական զարգացման պատմությունը՝ երկրի մակերևույթի ձևերի անալիզի շնորհիվ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ծանոթություն “Գեոմորֆոլոգիա” առարկայի և դրա հիմնական խնդիրների հետ: **Թեմա 2՝** Երկրի մակերևույթի ռելիեֆի հիմնական ձևերի բովանդակությունը: **Թեմա 3՝** Ռելիեֆի ձևերի ուսումնասիրության պրակտիկ նշանակությունը զանազան ժողտնտեսական խնդիրների իրագործման գործում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորի քայլը 0.5 է:
2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորի քայլը 0.5 է:
3-րդ ստուգում. Կարճ գրավոր աշխատանք: Միավորի քայլը 0.5 է:
4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0.5 է:

0803/B04. Երկրի ֆիզիկայի և սեյսմալոգիայի հիմունքներ – 1 (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (32 ժամ դասախոսություն և
16 ժամ լաբորատոր աշխատանք)
4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել բնական աղետներից առավել վտանգավոր՝ երկրաշարժերի բնութագրիչ պարամետրերին, երկրա-

շարժների բնական և տեխնածին հետևանքներին, ստացված սեյսմալոգիական տվյալների մշակման և մեկնաբանման մոտեցումներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա երկրաշարժագիտության հիմնախնդիրները, երկրաշարժագիտության կիրառման ոլորտները,
2. կհասկանա տվյալների մշակման և մեկնաբանման ժամանակակից մոտեցումները,
3. կկարողանա օգտվել նշված բնագավառում համակարգչային տեխնոլոգիաներից և ժամանակակից սարքավորումներից:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Երկրաշարժագիտության հիմնական հասկացությունները, կիրառվող մեթոդների դասակարգումը և առարկայի զարգացման պատմությունը: ***Թեմա 2***՝ Երկրաշարժերի առաջացման հիմնական պատճառները, օջախի տեսական մոդելները: ***Թեմա 3***՝ Երկրաշարժերի տիպերը, ուժեղ երկրաշարժների բնական և տեխնածին հետևանքները: ***Թեմա 4***՝ Պատմական երկրաշարժերի ուսումնասիրման մեթոդոլոգիան: ***Թեմա 5***՝ Երկրաշարժերը գրանցող սարքերի տեսակները և ստացված արդյունքների վերլուծությունը, ինժեներային սեյսմալոգիայի հիմնախնդիրները: ***Թեմա 6***՝ ՀՀ տարածքի ուժեղագույն երկրաշարժները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0803/B04. Երկրի ֆիզիկայի և սեյսմալոգիայի հիմունքներ – 2 (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (32ժամ դասախոսություն և

16ժամ լաբորատոր աշխատանք)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել երկրի ֆիզիկական դաշտերին, լուսաբանել երկրագնդի ուսումնասիրման սեյսմիկ, ինչպես նաև այլ մեթոդների սկբունքները, տալ պատկերացումներ ինչպես դասական, այնպես էլ շատ նոր բացահայտումների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա Երկրի ֆիզիկական դաշտերի մասին, Երկրի հասակի մասին,
2. կհասկանա Երկրագնդի կտրվածքը,
3. կկարողանա համեմատել Երկրի և Լուսնի կտրվածքները:

Բովանդակություն.

Թեմա 1՝ Երկրագնդի զարգացման էտապները; ընդհանուր ծանոթություն Երկրի կտրվածքի հետ՝ ըստ սեյսմոլոգիական տվյալների: ***Թեմա 2***՝ Երկրի սեյսմիկություն, երկրաշարժեր: ***Թեմա 3***՝ Երկրի հասակի և ջերմաստիճանի որոշման եղանակներ: ***Թեմա 4***՝ Երկրի մագմատիկ գործունեություն. Էլեկտրահաղորդականությունը Երկրի ներսում: ***Թեմա 5***՝ Երկրի ձևը. Գրավիտացիոն դաշտ: ***Թեմա 6***՝ Տիեզերք, մոլորակներ, Լուսնի կառուցվածք

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0,5 է:

0801/B04. Լիթոլոգիա (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (32 ժամ դասախոսություն և
16 ժամ լաբորատոր աշխատանք),
5-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել նստվածքային ապարների մասին ամբողջական գիտելիքներ, ապարներում պարունակվող կոմպոնենտների որակական գնահատում, գենետիկական տիպերի, ֆացիաների և ֆորմացիաների, նստվածքային ապարների էվոլյուցիայի ընդհանուր լիթոգենեզ հասկացությունների կիրառում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա արդի քարաբանության տեսական խնդրացանկը,
2. կհասկանա քարաբանական վերլուծական մեթոդների առանձնահատկությունը,
3. կկարողանա կատարել քարաբանական աշխատանքների մասնագիտական վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Քարաբանությունը որպես գիտություն, ուսումնասիրության առարկան և խնդիրները, լաբորատոր և դաշտային մեթոդների հիմնական մոտեցումները, տեսական և կիրառական նշանակությունը: ***Թեմա 2***՝ Նստվածքային ապարների որոշումներ, կազմը և ծագումը, քիմիական և հանքաբանական կազմը: Նստվածքակուտակման զոնա, սեդիմենտոգենեզ, լիթոգենեզի տիպերը, նստվածքակուտակման զոնայի սահմանները: Շերտոլորտը, նրա սահմանները և հիմնական պրոցեսները: ***Թեմա 3***՝ Լիթոգենեզի ստադիաները, քայքայում, տեղափոխում և կուտակում: Ֆիզիկական, քիմիական, կենսաբանական և մեխանիկական հողմնահարում, նրանց ածանցյալները և գիտական նշանակությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիք քննություններ

Նախատեսված **2** ընթացիք քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքնաչյուրը **1** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է **4** հարց յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

0802/B05. Օգտակար հանածոների հանքվայրերի երկրաբանություն (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (32 ժամ դասախոսություն և 32 ժամ լաբորատոր աշխատանք)

5-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել երկրի կեղևում արժեքավոր բաղադրիչներ պարունակող միներալային նյութի կուտակումների առաջացման երկրաբանական և ֆիզիկո-քիմիակլան պայմաններին և տարածման օրինաչափություններին: Մետաղական, ոչ մետաղական և այրվող օգտակար հանածոների հանքավայրերի տեսակներին, հանքային ֆորմացիաների, ծագումնաբանական տիպերի, հանքային մարմինների ձևաբանության, հանքաքարերի կառուցվածքա – կազմվածքային առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա օգտակար հանածոների և հանքավայրերի տիպերը և տեսակները,
2. կհասկանա օգտակար հանածոների և հանքավայրերիտարածական տեղայնացման առանձնահատկությունները
3. կկարողանա վերլուծել օգտակար հանածոների հանքավայրերի տիպերը, տեսակները, նրանց առաջացման պայմանները և կիրառման ոլորտները.

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Առարկայի հիմնական խնդիրներն ու զարգացման պատմությունը: ***Թեմա 2***՝ Օգտակար հանածոների հանքային մարմինների ձևաբանությունը, հանքանյութերի կառուցվածքա-կազմվածքային առանձնահտկությունները: ***Թեմա 3***՝ Հանքառաջացման պրոցեսներ: ***Թեմա 4***՝ Մետաղային օգտակար հանածոների հանքավայրեր: ***Թեմա 5***՝ Ոչ մետաղային օգտակար հանածոներ: ***Թեմա 6***՝ Այրվող օգտակար հանածոներ (ածուխ, տորֆ և այլն):

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0801/B05. Ընդհանուր ջրաերկրաբանություն (5 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (32ժամ դասախոսություն և
48 ժամ լաբորատոր աշխատանք),
5-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել ջրաերկրաբանության վերբերյալ հաստատուն տեսական պատկերացումներ, ստորերկրյա ջրերի ուսումնասիրման տեսական իմացաբանություն, ջրաերկրաբանության գլխավոր հիմնախնդիրների ուսումնասիրման հիմնական գաղափարների պատմության իմացություն՝ որոշելու ջրաերկրաբանական գլխավոր հիմնախնդիրների գիտական և գործնական հերթական և հեռանկարային ուղղությունները և նրանց ծառայեցումը ժողովրդական տնտեսության զարգացմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը՝

1. կիմանա երկրաբանական օբյեկտների ջրաերկրաբանական առանձնացումները և հիմնավորումները,
2. կհասկանա ջրաերկրաբանական խնդիրների էությունը,
3. կկարողանա իրականացնել ինքնուրույն և նպատակասլաց դիտարկումներ,
4. կկարողանա որոշել ապարների ջրաֆիզիկական հատկությունները լաբորատոր պայմաններում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ջրաերկրաբանությունը որպես գիտություն, նրա տեղը երկրաբանական և այլ բնական գիտությունների շարքում, ուսումնասիրման օբյեկտը: ***Թեմա 2՝*** Ջուրը բնության մեջ, նրա քանակական բաշխումը երկրի տարբեր պատյաններում և նրանց փոխադարձ կապը: ***Թեմա 3՝*** Լեռնային ապարների ֆիզիկական և ջրային հատկությունները, երկրակեղևում ջրի գոյության թերմոդինամիկական պայմանները: ***Թեմա 4՝*** Ապարներում տարածված ջրի տեսակները: Ստորերկրյա ջրերի ծագման տեսությունները: ***Թեմա 5՝*** Ստորերկրյա ջրերի դասակարգումն ըստ տեղադրման պայմանների: ***Թեմա 6՝*** Ճեղքային և կարստային ջրեր: ***Թեմա 7՝*** Մակերևույթային և ստորերկրյա ջրերի հիմնական բնութագրիչների հաշվարկը: ***Թեմա 8՝*** Ջրաերկրաբանական կտրվածքների, հիդրոիզոգծերի և պիեզոիզոգծերի քարտեզների կազմում և վերլուծում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիք քննություններ

Նախատեսված **2** ընթացիք քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքնաչյուրը **1** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

0802/B03. Երկրաքիմիա (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (32 ժամ դասախոսություն և
32 ժամ լաբորատոր աշխատանք)
6-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քիմիական տարրերի բաշխման օրինաչափություններին և օգտակար հանածոների որոնման եղանակներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա քիմիական տարրերի բաշխման օրինաչափությունները,
2. կհասկանա քիմիական տարրերի բաղադրիչները,
3. կկարողանա պատկերացում կազմել գլխավոր և երկրոդական, հազվագյուտ և ցրված քիմիական տարրերի բաղադրիչների մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Երկրաքիմիա գիտությունը որպես երկրի և մոլորակների քիմիական տարրերի պատմություն: **Թեմա 2՝** Երկրի էներգետիկ ռեսուրսները: **Թեմա 3՝** Քիմիական տարրերի տարածվածությունը տիեզերքում և նրա ծագումը: ***Թեմա 4՝*** Օգտակար հանածոների որոնման ե/ք եղանակները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը **2** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0804/B03. Օգտակար հանածոների հանքավայրերի որոնում և հետախուզում (7 կրեդիտ)

Շաբաթական 7 ժամ (48 ժամ դասախոսություն և
64 ժամ լաբորատոր աշխատանք)
6–րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման պրոցեսի հետ, որն իր մեջ ներառում է երկրակեղևում հանքավայրերի տեղաբաշխման կանխատեսումը,

հանքային կուտակումների հայտնաբերումը և նրանց արդյունաբերական նշանակության բացահայտումը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա հանքավայրերի որոնման և հետախուզման պրոցեսի էությունը,
2. կտիրապետի հանքավայրերի որոնման և հետախուզման մեթոդներին,
3. կկարողանա գնահատել հանքավայրերի որոնման և հետախուզման աշխատանքների արդյունքները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Որոնման և հետախուզման աշխատանքների փուլերը: ***Թեմա 2***՝ Օհհ որոնողական նախադրյալներն ու հատկանիշները: ***Թեմա 3***՝ Որոնման մեթոդները. երկրաբանական հանույթի, միներալաբանական, երկրաքիմիական և երկրաֆիզիկական: ***Թեմա 4***՝ Օհհ հետախուզման խնդիրները և մեթոդները: ***Թեմա 5***՝ Հետախուզական համակարգեր, հետախուզական ցանցեր: ***Թեմա 6***՝ Օգտակար հանածոների նմուշարկման տեսակները և նմուշների վերցման եղանակները: ***Թեմա 7***՝ Օհհ պաշարները և կանխատեսումնային ռեսուրսները, նրանց կարգերը: ***Թեմա 8***՝ Պաշարների հաշվարկման եղանակները: ***Թեմա 9***՝ Օհհ երկրաբանտնտեսագիտական գնահատման սկզբունքները

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **8** հարց, յուրաքանչյուրը **0,5** միավոր: Միավորների քայլը 0,25 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0801/B06. Ընդհանուր ինժեներային երկրաբանություն (7 կրեդիտ)

Շաբաթական 7ժամ (48 ժամ դասախոսություն և

64 ժամ լաբորատոր աշխատանք)

6-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել երկրաբանական միջավայրի և ճարտարագիտական կառույցների փոխազդեցության խնդիրներին, ճարտարագիտա-երկրաբանական պրոցեսների կանխորոշմանը և հաշվարկմանը, լեռնային ապարների երկրատեխնիկական հատկությունների փոփոխության օրինաչափություններին, կապված ապարների առաջացման պայմանների և հետգենետիկ պրոցեսների հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը՝

1. կիմանա գրունտների տեսական հիմունքները և կծանոթանա ճարտարագիտական երկրադինամիկային,
2. կհասկանա ռեգիոնալ ճարտարագիտական երկրաբանության ընդհանուր օրենքները, որոնք հիմնված են քանակական և որակական ընդհանրացումների վրա,
3. կկարողանա կատարել ճարտարագիտա-երկրաբանական հետազոտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ճարտարագիտական երկրաբանությունը որպես երկրաբանական գիտությունների գիտական ուղղություն: **Թեմա 2՝** Գրունտների կազմը և կառուցվածքը, ջրաֆիզիկական և մեխանիկական հատկությունները: **Թեմա 3՝** Երկրաբանական պրոցեսներ, երևույթներ, նրանց ճարտարագիտաերկրաբանական դասակարգումը: **Թեմա 4՝** Հողմահարման պրոցեսների և կեղևի ճարտարագիտաերկրաբանական գնահատումը: **Թեմա 5՝** Գերնստման երևույթները: **Թեմա 6՝** Սելավային երևույթներ: **Թեմա 7՝** Սուֆոզիոն երևույթներ: **Թեմա 8՝** Սողանքային երևույթներ: **Թեմա 9՝** Կարստային երևույթներ: **Թեմա 10՝** Սեյսմիկ միկրոշրջանացում: **Թեմա 11՝** Ռեգիոնալ ճարտարագիտական երկրաբանության հիմնական դրույթները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիք քննություններ

Նախատեսված **2** ընթացիք քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքնաչյուրը **1** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

0805/B03. Ալպ-Հիմալայան գոտու երկրաբանություն (7 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (64 ժամ դասախոսություն և
16 ժամ գործնական աշխատանք),
7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել Ալպ-Հիմալայան ծալքավոր գոտու երկրակեղևի ձևավորման տեկտոնական հիմնական էտապներին ու փուլերին և դրանց հետ կապված տարաբնույթ լեռնային ապարների տարածվածությանն ու կազմին, ինչպես նաև հանքայնացումներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ինքնուրույն աշխատել երկրաբանական քարտեզի վրա,
2. կհասկանա տվյալ տարածքի երկրաբանական և տեկտոնական կառուցվածքը,

3. կկարողանա ինքնուրույն կազմել երկրաբանական կտրվածքներ՝ օգտագործելով հորատման և երկրաֆիզիկական տվյալները:

Բովանդակությունը.

***Թեմա 1*՝** Տարածքի երկրակեղևի հիմնական կառույցները: ***Թեմա 2*՝** Սալերի տեկտոնիկան: ***Թեմա 3*՝** Ալպ-Հիմալայան ծալքավոր գոտու երկրատեկտոնական շրջանացումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4**հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0,25 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0805/B04. Երկրատեկտոնիկա (7 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (64 ժամ դասախոսություն և
16 ժամ գործնական աշխատանք),
7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է տեսական մասում ուսանողներին ծանոթացնել երկրագնդի և հատկապես երկրակեղևի կառուցվածքին, նյութական կազմին, ֆիզիկական դաշտերի և օգտակար հանածոների տեղաբաշխման օրինաչափություններին, այսինքն՝ այն առանձնահատկություններին, որոնք հանդիսանում են երկրակեղևի շարժումների ու դեֆորմացիաների արդյունքը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա երկրատեկտոնիկայի մեթոդները և զարգացման հիմնական էտապները,
Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0803/B07. Հորատանցքերի ուսումնասիրման երկրաֆիզիկական մեթոդներ (ՀԵՈՒ) (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (28 ժամ դասախոսություն և
36 ժամ լաբորատոր աշխատանք)
6-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել՝ հորատանցքերում և միջհորատանցքային տարածքներում ապարների ուսումնասիրմանը երկրաֆիզիկական մեթոդների կիրառմամբ, լուծվող գործնական խնդիրներին և ստացված տվյալների մշակման ու մեկնաբանման մոտեցումներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ՀԵՈՒ-ի ուսումնասիրվող մեթոդների էությունը, նշված բնագավառում համակարգչային տեխնոլոգիայի և ժամանակակից սարքավորումների ներդրման մասին,
2. կհասկանա կիրառման ֆիզիկաերկրաբանական պայմանները, լուծվող երկրաբանական խնդիրները,
3. կկարողանա օգտվել տվյալների մշակման և մեկնաբանման ժամանակակից մոտեցումներից:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ ՀԵՈՒ-ի հիմնական հասկացությունները, կիրառվող մեթոդների դասակարգումը և առարկայի զարգացման պատմությունը: ***Թեմա 2***՝ ՀԵՈՒ-ի

էլեկտրական և էլեկտրամագնիսական մեթոդները, նրանց պետրոֆիզիկական հիմունքները: ***Թեմա 3***՝ ՀԵՌԻ-ի միջուկային երկրաֆիզիկական մեթոդների կիրառումը, ուղիղ և հակադարձ խնդիրների լուծում, ժամանակակից սարքավորումների կիրառում:***Թեմա 4***՝ ՀԵՌԻ-ի համալիրի կիրառման ֆիզիկաերկրաբանական նախադրյալները:***Թեմա 5***՝ ՀԵՌԻ–ի գործնական խնդիրների լուծում՝ կառուցվածքային, հանքային, ինժեներաերկրաբանության և հիդրոերկրաբանության բնագավառներում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում.: Գրավոր կարճ հարցում Միավորների քայլը 0,5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0,5 է:

0803/B08. Գրավիհետախուզություն (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (8 ժամ դասախոսություն և

56 ժամ լաբորատոր աշխատանք)

6-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել գրավիհետախուզական մեթոդի արդի զարգացման խնդիրներին, ծանրության ուժի պոտենցիալ ֆունկցիայի շարքի վերծանմանը, գեոիդի հավասարմանը և նրա մակերևույթին ծանրության ուժի չափված արժեքների բերման նպատակով մտցվող ուղղումներին, գրավիմետրական հանույթի մեթոդիկայի ու տեխնիկայի մասշտաբին և հենակետային ցանցին, օգտագործվող չափիչ գործիքների ընտրությանը, հանույթի ճշտությանը, կանոնավոր և ոչ կանոնավոր երկրաչափական ձև ունեցող երկրաբանական մարմինների գրավիտացիոն դաշտի տվյալների մեկնաբանմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրավիհետախուզական մեթոդի զարգացման արդի խնդիրները ,
2. կհասկանա գրավիհետախուզական աշխատանքների մեթոդիկան և տեխնիկան,
3. կկարողանա ծանրության ուժի չափված արժեքների վրա մտցնել համապատասխան ուղղումներ և մեկնաբանել:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գրավիհետախուզության տեսական հիմունքները և զարգացման խնդիրները: ***Թեմա 2***՝ Պոտենցիալ ֆունկցիայի առաջին և երկրորդ կարգի ածանցյալների էությունը:***Թեմա 3***՝ Դաշտային չափումներից ստացված նյութերը, մտցվելիք ուղղումները: ***Թեմա 4***՝ Գրավիմետրական հանույթի մեթոդիկան և տեխնիկան, ստացված նյութերի երկրաբանական մեկնաբանումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0803/B010. Մագնիսահետախուզություն (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (8 ժամ դասախոսություն և
56 ժամ լաբորատոր աշխատանք)
7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է Երկրի բնական մագնիսական դաշտի օրինաչափ փոփոխությունների ուսումնասիրություններով լուծել երկրաբանական խնդիրներ, ծագմամբ և կազմով իրարից տարբեր բոլոր լեռնային ապարները և հանքանյութերը իրենց մագնիսական հատկություններով իրարից տարբեր են, ուստի մագնիսական դաշտի ինդուկցիայի քարտեզների վրա նրանք ի հայտ են գալիս տարբեր ինտենսիվությամբ անոմալ մագնիսական դաշտերի տեսքով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը .

1. կիմանա մագնիսահետախուզության տեսությունը և դաշտային աշխատանքների մեթոդիկան.
2. կհասկանա մագնիսահետախուզության մեջ օգտագործվող չափող սարքավորումների և արդյունքների երկրաբանական մեկնաբանումների մոտեցումները
3. կկարողանա մագնիսական դաշտի չափված և մշակված տվյալներով գրաֆիկներ և քարտեզներ կառուցել

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Երկրի մագնիսական դաշտի առաջացման պատճառները և ուսումնասիրման պատմությունը: ***Թեմա 2՝*** Երկրամագնիսական դաշտի վարիացիաները: ***Թեմա 3՝*** Մագնիսահետախուզության դաշտային մեթոդները և չափող սարքավորումները: ***Թեմա 4՝*** Լեռնային ապարների և միներալների մագնիսական հատկությունները: ***Թեմա 5՝*** Երկրամագնիսական նորմալ և անոմալ դաշտեր: ***Թեմա 6՝*** Մագնիսահետախուզության ուղիղ և հակադարձ խնդիրները: ***Թեմա7՝*** Մագնիսական անոմալիաների երկրաբանական մեկնաբանման մեթոդները: ***Թեմա 8՝*** Մագնիսահետախուզության կիրառումը երկրաբանական քարտեզագրման, տեկտոնական շրջանացման, մետաղական և ոչ մետաղական հանքանյութերի որոնման և հետախուզման գործում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4**

միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0803/B011. Պետրոֆիզիկա և ինժեներային երկրաֆիզիկա (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (8 ժամ դասախոսություն

56 ժամ լաբորատոր աշխատանք)

7-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողներին ծանոթացնել լեռնային ապարների, միներալների և հանքանյութերի ֆիզիկական հատկությունները ուսումնասիրող գիտությանը, որի օգնությամբ կարող են լուծվել՝ երկրակեղևի երկրաբանական կառուցվածքի, նրա զարգացման պատմության և օգտակար հանածոների հանքավայրերի որոնման ու հետախուզմանը վերաբերվող խնդիրները, ինչպես նաև ծանոթացնել երկրակեղևում գոյություն ունեցող ինժեներա-երկրաֆիզիկական, ինժեներա-հիդրոերկրաբանական և հիդրոտեխնիկական օբվյեկտների երկրաֆիզիկական համալիր ուսումնսիրությունների արդյունքներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը .

1. կիմանա պետրոֆիզիկական հետազոտությունների տեսությունը և մեթոդիկան, ինժեներաերկրաֆիզիկական, ջրաերկրաբանական և հիդրոտեխնիկական օբյեկտները, երկրաֆիզիկական մեթոդների կիրառումը նշված օբյեկտների ուսումնասիրման նպատակով,
2. կհասկանա ապարների նմուշների վրա խտության, ծակոտկենության, առաձգականության, էլեկտրական, մագնիսական, ջերմային և ռադիոակտիվության պարամետրների չափման մերոդիկան և տեխնիկան, երկրաֆիզիկական մեթոդների համալիրի ընտրության կարևորության անհրաժեշտությունը; երկրաֆիզիկական մեթոդների տվյալների մշակումն ու մեկնաբանումը,
3. կկարողանա պետրոֆիզիկական սխեմաներ և քարտեզներ կառուցել. Ինքնուրույն երկրաբանական եզրահանգումներ կատարել, կկարողանա ժամանակակից ծրագրերով երկրաֆիզիկական մեթոդների արդյունքները մշակել և մեկնաբանել:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Լեռնային ապարների և միներալների խտությունը և ծակոտկենությունը: ***Թեմա 2՝*** Լեռնային ապարների առաձգական հատկությունները: ***Թեմա 3՝*** Լեռնային ապարների և միներալների մագնիսական հատկությունները: ***Թեմա 4՝*** Լեռնային ապարների և միներալների էլեկտրական հատկությունները: ***Թեմա 5՝*** Լեռնային ապարների և միներալների միջուկա-ֆիզիկական հատկությունները: ***Թեմա 6՝*** Լեռնային ապարների և միներալների ջերմաֆիզիկական

հատկությունները: ***Թեմա 7***՝ Պետրոֆիզիկական քարտեզների կառուցումը և ապարների պետրոֆիզիկական դասակարգումը: ***Թեմա 8*** Երկրակեղևում ինժեներային երկրաֆիզիկայի օբյեկտների տեսակները: ***Թեմա 9***՝ Երկրաֆիզիկական մեթոդների կիրառումը վերոհիշյալ օբյեկտների հայտնաբերման համար: ***Թեմա 10***՝ Ստորերկրյա ջրերի ուսումնասիրումը երկրաֆիզիկական մեթոդների համալիրով: ***Թեմա 11***՝ Սողանքային մարմինների և կարստային առաջացումների հայտնաբերումն ու ուսումնասիրումը երկրաֆիզիկական մեթոդների համալիրով: ***Թեմա 12***՝ Հիդրոտեխնիկական օբյեկտների տարածքների կառուցվածքային ուսումնասիրությունները երկրաֆիզիկական մեթոդների համալիրով, նրանց կառուցապատումից առաջ և շահագործման ժամանակ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում.: Գրավոր կարճ հարցում Միավորների քայլը 0,5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0,5 է:

0803/B013 . Սեյսմիկ շրջանացում և միկրոշրջանացում (2 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (8 ժամ դասախոսություն և
56 ժամ լաբորատոր աշխատանք)
8-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել սեյսմիկ շրջանացման և սեյսմիկ միկրոշրջանացման կազմակերպման և կատարման մեթոդոլոգիային, սեյսմիկ վտանգի գնահատմանը ծառայող կամ նպաստող համալիր տվյալների բազաներին, սեյսմիկ շրջանացման տարբեր մակարդակների քարտեզների կառուցման ձևերին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա սեյսմիկ շրջանացման և սեյսմիկ միկրոշրջանացման, նրա արդյունքների կիրառման ոլորտների մասին,
2. կհասկանա տվյալների մշակման և մեկնաբանման ժամանակակից մոտեցումները,
3. կկարողանա օգտվել նշված բնագավառում համակարգչային տեխնոլոգիաներից և ժամանակակից սարքավորումներից:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ընդհանուր սեյսմիկ շրջանացման խնդիրները և կատարվող աշխատանքների մեթոդոլոգիան: ***Թեմա 2***՝ Մանրակրկիտ սեյսմիկ շրջանացման խնդիրները և կատարվող աշխատանքների մեթոդոլոգիան: ***Թեմա 3***՝ Սեյսմիկ միկրոշրջանացման խնդիրները և կատարվող աշխատանքների մեթոդոլոգիան:

Թեմա 4՝ Սեյսմիկ շրջանացման փորձը ՀՀ տարածքում: ***Թեմա 5***՝ Սեյսմիկ շրջանացման արդի խնդիրները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

0803/B014. Սեյսմահետախուզություն (3 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ (8 ժամ դասախոսություն և
40 ժամ լաբորատոր աշխատանք
8-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին գործնական դասաժամերի ընթացքում ծանոթացնել սեյսմահետախուզական աշխատանքների ընթացքում ստացված դաշտային նյութերին, մշակման ենթարկել դրանք:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անջատել ալիքի մուտքը,
2. կհասկանա սեյսմիկ սահմանի տեղադրման խորության:որոշման մոտեցումները,
3. կկարողանա կառուցել հոդոգրաֆ և հաշվարկների միջոցով ստանալ ալիքի տարածման արագությունը ծածկող միջավայրում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հոդոգրաֆի կառուցում: ***Թեմա 2***՝ Բեկված գլխամասային ալիքի արագության որոշում մի քանի մեթոդովմի քանի մեթոդներով: ***Թեմա 3***՝ Անդրադարձված ալիքի արագության որոշում ծածկող միջավայրում: ***Թեմա 4***՝ Սեյսմիկ սահմանի տեղադրման խորությունը որոշում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում: Գրավոր կարճ հարցում Միավորների քայլը 0,5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0,5 է:

5.8. «Երկրաքիմիա և ռեգիոնալ երկրաբանություն» մասնագիտացում

0805/B06. Երկրաբանահանութային աշխատանքների մեթոդներ (2 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (8 ժամ դասախոսություն և
56 ժամ լաբորատոր աշխատանք),

5-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել երկրաբանական քարտեզագրության համառոտ մեթոդներին, պատրաստել որպես այս կարևորագույն բնագավառի մասնագետներ, որոնց քանակը այժմ խիստ սահմանափակ է, իսկ առանց երկրաբանական քարտեզների ցանկացած այլ բնույթի երկրաբանական աշխատանքներ (որոնումներ, հետախուզում, շահագործում և այլն) ուղղակիորեն անհնար է իրականացնել:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա երկրաբանական տարամասշտաբ քարտեզներին ներկայացվող պահանջները, դրանց նպատակները և խնդիրները, կսկսի կարդալ երկրաբանական քարտեզը,
2. կհասկանա երկրաբանական հանույթի հիմնական մեթոդները, որի շնորհիվ կարող է ակտիվորեն մասնակցել այդպիսի աշխատանքներին,
3. կկարողանա անմիջականորեն կատարել երկրաբանական հանույթ՝ ներկայացնելով պահանջվող մասշտաբի երկրաբանական քարտեզներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ծանոթություն երկրաբանական տարամասշտաբ քարտեզների հետ, սովորել կարդալ քարտեզը: ***Թեմա 2՝*** Տիրապետել երկրաբանական հանույթի հիմնական մեթոդներին: ***Թեմա 3՝*** Կազմել երկրաբանական քարտեզներ, դրանց կտրվածքները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **1** միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0802/B08 Մետամորֆային պետրոգրաֆիա (3 կրեդիտ)

Շաբաթական 3ժամ (8 ժամ դասախոսություն և

40 ժամ լաբորատոր աշխատանք)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը

Ուսանողներին ծանոթացնել երկրակեղևի փոխակերպված ապարների տիպերին, նրանց միներալային կազմին, տեքստուր-ստրուկտուր առանձնահատկություններին և առաջացման երկրաբանական ու ֆիզիկաքիմիական պայմաններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

1. կիմանա մետամորֆային ապարների տեսակները, տիպերը, տարածումը և նրանց հետ կապված օգտակար հանածոները,
2. Կհասկանա մետամորֆային ապարների առաջացման երկրաբանական և ֆիզիկաքիմիական պայմանները,
3. կկարողանա տարբերել և ճանաչել մետամորֆային ապարները և տալ նրանց բնութագիրը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մետամորֆային ապարների պետրոգրաֆիա գիտությունը երկրի մասին գիտությունների համակարգում և ուսումնասիրման առարկան: ***Թեմա 2***՝ Մետամորֆային ապարների միներալային կազմը, ստրուկտուրաները և տեքստուրաները: ***Թեմա 3***՝ Մետամորֆիզմի տիպերը ըստ մետամորֆիզմի գործոնների փոխհարաբերության: ***Թեմա 4***՝ Մետամորֆային ֆացիանները երկրակեղևում ըստ Էսկոլայի և թերների: ***Թեմա 5***՝ մետամորֆային հանքավայրեր: Մետամորֆային հանքավայրերը կրատոններում և վահաններում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում.: Գրավոր կարճ հարցում Միավորների քայլը 0,5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0,5 է:

0802/B09. Մետաղածնություն և պետրոգրաֆիա (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (8 ժամ դասախոսություն և
56 ժամ լաբորատոր աշխատանք)
6-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսումնասիրել երկրի կեղևում մետաղային հանքավայրերի տեղաբաշխման օրինաչափությունները: Երկրի կեղևի մետաղածնային զարգացման օրինաչափությունները խոշոր ստրուկտուրային միավորների (վահաններ և նրանց պլատֆորմներ, ծալքավոր շարժուն գոտիներ ու ակտիվացած մարզեր) համար:

Կրթական արդյունքները.

Դաընթացի հաջող ավարտին ուսանողը .

1. կիմանա երկրի կեղևի մետաղածնային խոշոր ստրուկտուրաները և նրանց զարգացման օրինաչափությունները,
2. կհասկանա այդ ստրուկտուրաների զարգացման առանձին փուլերի հանքագոյացման օրինաչափությունները, խոշոր ստրուկտուրաներում հանքայնացման առանձին փուլերի տարածական մեկուսացման օրինաչափությունները,
3. կկարողանա որոշել գլխավոր մետաղածնային մարզերում և դարաշրջաններում առանձին մետաղների արդյունաբերական կուտակում-

ների առաջացման պայմանները, գենետիկական տիպերը ու հանքային ֆորմացիաները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մետաղածնության ծագման ու զարգացման պատմությունը, հիմնական խնդիրները և տերմինաբանությունը: ***Թեմա 2***՝ Մետաղածնային մարզերն ու դարաշրջանները: ***Թեմա 3***՝ Մետաղածնային ստրուկտուրաների հիմնական տիպերն ու նրանց զարգացման փուլերը: ***Թեմա 4***՝ Վահանների և նրանց պլատֆորմների մետաղածնությունը: ***Թեմա 5***՝ Ծալքավոր շարժուն գոտիների մետաղածնությունը: ***Թեմա 6***՝ Ակտիվացած մետաղածնությունը: ***Թեմա 7***՝ Կառուցվածքամետաղածնային զոնաների տիպերն ու նրանց բնորոշ հանքային ֆորմացիաների համալիրները: ***Թեմա 8***՝ Կանխատեսումամետաղային քարտեզների կազմման մեթոդիկան և սկզբունքները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0805/B08. Նավթի և գազի երկրաբանություն, հորատման գործ (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (8 ժամ դասախոսություն և
56 ժամ գործնական պարապմունք),
6-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին հաղորդել գիտելիքներ նավթի ծագման, նավթի ու գազի հանքավայրերի ձևավորման, պահպանման, որոնման և հետախուզման աշխատանքների կազմակերպման, տարածքի նավթաբերության հեռանկարների գնահատման մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա նավթի ծագման վարկածները,
2. կհասկանա նավթի ու գազի հանքավայրերի ձևավորման ու պահպանման հնատեկտոնական ու հնաշխարհագրական պայմանները, նավթի ու գազի հանքավայրերի որոնման մեթոդները,
3. կկարողանա կատարել տարածքի նավթագազաբերության հեռանկարների գնահատում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Նավթի ու գազի երկրաբանության առարկան և խնդիրները: ***Թեմա 2***՝ Նավթի քիմիական ու ֆիզիկական հատկությունները: ***Թեմա 3***՝ Բնական այրվող գազեր: ***Թեմա 4***՝ Նավթի ծագումը: ***Թեմա 5***՝ Նավթի ու գազի կուտակ-

ների ձևավորման գործնթացները: ***Թեմա 6***՝ Նավթի և գազի կուտակների տեղադրման պայմանները: ***Թեմա 7***՝ Նավթի և գազի հանքավայրերի որոնողահետախուզական աշխատանքները: ***Թեմա 8***՝ Նավթաերկրաբանական շրջանացում, նավթի հանքավայրեր: ***Թեմա 9***՝ Գազային և գազանավթային հանքավայր: ***Թեմա 10***՝ Տարածքի նավթագազաբերության հեռանկարների գնահատումը: ***Թեմա 11***՝ ՀՀ նավթագազաբերության հեռանկարները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0,5 է:

802/B010. Որոնողական երկրաքիմիա (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (8 ժամ դասախոսություն և

56 ժամ լաբորատոր աշխատանք)

7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել որոնման երկրաքիմիական մեթոդներին օգտակար հանածոների հանքավայրի հետախուզման նպատակով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

1. կիմանա երկրաքիմիական անոմալիաները,
2. կհասկանա երկրակեղևում որոնման երկրաքիմիական մեթոդները,
3. կկարողանա որոնման աշխատանքներում ստացված տվյալները մշակել և ընդհանրացնել:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: ***Թեմա 2***՝ Երկրաքիմիական պսակների տեսություն: ***Թեմա 3***՝ Երկրաքիմիական որոնման եղանակներ: ***Թեմա 4***՝ Քարտեզագրում: ***Թեմա 5***՝ Տվյալների համակարգչային մշակում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0805/B08. Հայկական լեռնաշխարհի նորագույն հրաբխականություն (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (8 ժամ դասախոսություն և 56 ժամ լաբորատոր աշխատանք),
7-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել նորագույն և ակտիվ հրաբխականության երևույթներին, դրանց դինամիկային, հետհրաբխային գործունեության առանձնահատկություններին, ի վերջո հրաբխային վտանգի գնահատմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հրաբխային գործունեության տևողությամբ տարբերել միածին և բազմածին հրաբուխները և դրանով էլ գնահատել հրաբխային վտանգի չափը,
2. կհասկանա հրաբխային արտավիժումների նյութերի ֆիզիկամեխանիկական և դեկորատիվ հատկությունները՝ լայնորեն օգտագործելով նրանց որպես անփոխարինելի օգտակար հանածոներ, շինանյութեր, լցանյութեր, գեղազարդ երեսապատման սալերի, հուշարձանային կոթողների հումք և այլն,
3. կկարողանա կանխատեսել հրաբխային արտավիժումների բնույթը՝ հանգիստ, էֆուզիվ, առանց ցնցումների և պայթյունային-էքսպլուզիվ հզոր ցնցումներով ուղեկցվող գործունեությունը, ըստ այդմ էլ գնահատել հնարավոր ավերածությունների չափը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ծանոթություն հայկական լեռնաշխարհի նորագույն հրաբխականության մարզերի ու շրջանների հետ: ***Թեմա 2***՝ Հրաբխային պրոցեսի և արտավիժումների մանրամասն ուսումնասիրությունը: **Թեմա 3**՝ Հրաբխային արտավիժումների և դրանց ինտենսիվության հնարավոր կանխատեսումը: ***Թեմա 4***՝ Հրաբխանյութերի կիրառությունը որպես օգտակար հանածոներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0,5 է:

0802/B011. Էկոերկրաքիմիա (2 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (8 ժամ դասախոսություն և 32 ժամ լաբորատոր աշխատանք)
8-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատական է ուսանողներին ծանոթացնել քիմիական տարրերի մասնակցությանը կենսաբանական և երկրաքիմիական բոլոր պրոցեսներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

1. կիմանա երկրաքիմիական պրոցեսներին քիմիական տարրերի մասնակցությունն ու դերը,
2. կհասկանա էկոերկրաքիմիայի նշանակությունը,
3. կկարողանա գաղափար կազմել օդի, հողերի, ջրերի, ընդերքի ռեսուրսների ռացիոնալ օգտագործման մասին:

Բովանդակությունը.

Թեա 1՝ էկոերկրաքիմիայի նշանակությունը երկրաբանական առարկաների համակարգում: ***Թեմա 2***՝ Երկիր մոլորակի էկոհամակարգը, կենսասֆերան և նոոսֆերան: ***Թեմա 3***՝ Բնության ռեսուրսների օգտագործումը: ***Թեմա 4***՝ մթնոլորտային օդի, հողերի, ջրերի, ընդերքի ռեսուրսների ռացիոնալ օգտագործումն և պահպանումը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0,5 է:

0805/B09. Հնաշխարհագրական հետազոտման մեթոդներ (2 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (8 ժամ դասախոսություն և
32 ժամ գործնական պարապմունք),
8-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ նստվածքային ապարների և դրանց հետ կապված օգտակար հանածոների ձևավորման պայմանների, անցյալի ֆիզիկաաշխարհագրական պայմանների, տարածքի երկրաբանական պատմության վերականգնման և նստվածային օգտակար հանածոների հեռանկարների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ֆացիաների տեսության հիմունքները, տարատեսակ նստվածքային ապարների առաջացման պայմանները,
2. կհասկանա հնաշխարհագրական վերականգնումների մեթոդները,
3. կկարողանա մշակել տարածքի նստվածքային ծագման հանքավայրերի (նավթ, ածուխ և այլն) հեռանկարների գնահատման չափանիշները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հնաշխարհագրություն առարկան և խնդիրները: ***Թեմա 2***՝ Ֆացիաների տեսության հիմնախնդիրները և նշանակությունը: ***Թեմա 3***՝ Ցամաքային ֆացիաների ընդհանուր բնութագիրը և դասակարգումը: ***Թեմա 4***՝ Ծովերի ու ցամաքների անցումային զոնայի ֆացիաների բնութագիրը: ***Թեմա 5***՝ Ծովային ֆացիաների ընդհանուր բնութագիրը և դասակարգումը: ***Թեմա 6***՝ Ֆացիաների վերլուծության մեթոդները: ***Թեմա 7***՝ Հնաշխարհագրության հիմունքները: ***Թեմա 8***՝ Ֆացիալ և հնաշխարհագրական քարտեզներ: ***Թեմա 9***՝ Հնաշխարհագրական ուսումնասիրությունների արդյունքների ամփոփումը և կիրառական նշանակությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը գրավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

5.9. «Ջրաերկրաբանություն և ճարտարագիտական երկրաբանություն» մասնագիտացում

0801/B07. Ջրաերկրաքիմիա (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (8 ժամ դասախոսություն և
56 ժամ լաբորատոր աշխատանք)
5-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել ստորերկրյա ջրերի քիմիական և գազային կազմին, նրանց ձևավորման պայմաններին: Ջրի քիմիական կազմի որոշման և արտահայտման եղանակներին: Առանձին ռեգիոններում ստորերկրյա ջրերի կազմի ձևավորման օրինաչափություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

1. կիմանա ստորերկրյա ջրերի քիմիական կազմի ձևավորման պայմանները և քիմիական էլեմենտների միգրացիայի հիմնական օրինաչափությունները,
2. կհասկանա ստորերկրյա ջրերի դասակարգման սկզբունքներն ըստ քիմիական կազմի,
3. կկարողանա լաբորատոր և դաշտային պայմաններում կատարել ջրի քիմիական անալիզ,
4. կկարողանա մշակել ջրի քիմիական անալիզի արդյունքները և տալ ջրի որակական բնութագիրը:

Բովանդակությունը.

Թեմա1՝ Ջրաերկրաքիմիան, որպես ջրաերկրաբանության ինքնուրույն բաժին: ***Թեմա 2***՝ Ջրի մոլեկուլի կառուցվածքը: ***Թեմա 3***՝ Ստորերկրյա ջրերի քիմի-

ական և գազային կազմը: Ստորերկրյա ջրերի դասակարգումն ըստ քիմիական կազմի: ***Թեմա 4՝*** Ստորերկրյա ջրերում քիմիական էլեմենտների միգրացիայի հիմնական դրույթները: ***Թեմա 5՝*** ստորերկրյա ջրերի քիմիական կազմը ձևավորող տարրերի աղբյուրները և գործոնները: ***Թեմա 6՝*** Ստորերկրյա ջրերի քիմիական կազմի ձևավորումը կապված կլիմայական, երկրաբանական և հիդրոդինամիկական պայմաններից: ***Թեմա 7՝*** Ռեգիոնալ ջրաերկրաքիմիա: Պլատֆորմային և լեռնածալքավոր շրջաններում ստորերկրյա ջրերի քիմիական կազմի ձևավորման առանձնահատկությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիք ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորի քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորի քայլը 0.5 է:

3-րդ ստուգում. Կարճ գրավոր աշխատանք: Միավորի քայլը 0.5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0.5 է:

0801/B08. Ինժեներային կառույցներ (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (8 ժամ դասախոսություն և
40 ժամ լաբորատոր աշխատանք),
5-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել իմացություն ինժեներային կառույցների չորս հիմնական դասերի պլանավորման, նախագծման, շինարարության, ինչպես նաև վերջիններիս շահագործման ժամանակ տեխնիկական հսկողություն իրականացնելու սկզբունքների, կանոնների, նորմատիվների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը՝

1. կիմանա հիդրոտեխնիկական, արդյունաբերական, քաղաքացիական, տրանսպորտային կառույցների նախագծման և շինարարության հիմնական սկզբունքներն ու կանոնները,
2. կհասկանա գնահատել ինժեներային կառույցի կայունությունը և կայունությանը սպառնացող գործոնները,
3. կկարողանա ուսումնասիրել շինարարական նյութերի ֆիզիկամեխանիկական հատկությունները և գնահատել նրանց պիտանելիությունը ինժեներային կառույցների շինարարության ժամանակ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ինժեներային կառույցների դասակարգումը: Ինժեներային կառույցների պլանավորման և նախագծման փուլերը: ***Թեմա 2՝*** Հիմնական շինարարական նյութերը: Շինարարական նյութերի դասակարգումն ըստ գործող ստանդարտի: Շինարարական նյութերի ֆիզիկամեխանիկական հատկանիշները և նրանց որոշման եղանակները: ***Թեմա 3՝*** Հողային աշխատանքների արտադրութ-

յուն: Գրունտների դասակարգումն ըստ փորման և կտրման դիմադրության: Գրունտների մշակման եղանակները: ***Թեմա 4՝*** Հիմքաշինություն: Հիմքեր և հիմնատակեր: Հիմքերի և հիմնատակերի դասակարգումը: ***Թեմա 5՝*** Արդյունաբերական կառույցներ: Հիմնական էլեմենտներն ու կոնստրուկցիաները: ***Թեմա 6՝*** Քաղաքացիական կառույցներ: Հիմնական էլեմենտներն ու կոնստրուկցիաները: ***Թեմա 7՝*** Հիդրոտեխնիկական կառույցներ՝ հիդրոհանգույցներ, ջրամբարներ, պատվարներ: Պատվարների տիպերն ու տեսակները: Հողային պատվարների նախագծման, կառուցման և կոնստրուկցիաների առանձնահատկությունները: ***Թեմա 8՝*** Տրանսպորտային կառույցներ՝ կամուրջներ, օդանավակայաններ, թունելներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիք քննություններ

Նախատեսված **2** ընթացիք քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքնաչյուրը **1** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

0801/B07. Գրունտագիտություն և գրունտների մեխանիկայի հիմունքներ (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (1ժամ դասախոսություն և
2 ժամ լաբորատոր աշխատանք),
6-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել գրունտների կազմի և կառուցվածքի, ֆիզիկական, ֆիզիկաքիմիական, ֆիզիկամեխանիկական հատկությունների ձևավորման օրինաչափություններին, սովորեցնել լաբորատոր և դաշտային պայմաններում գրունտների տարբեր հատկությունների որոշման մեթոդները: Հոծ միջավայրի մեխանիկայի տարրերին, մասնավորապես առաձգականության տեսությանը, պլաստիկության, սողքի տեսությանը, գրունտների մեխանիկայի դրույթներին, այն կարողանալ կիրառել լեռնային ապարների կայունության և լարվածային վիճակի գնահատման ժամանակ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը՝

1. կիմանա գրունտների ընդհանուր դասակարգման էությունը և մոդելավորման հաշվարկատեսական մեթոդները,
2. կհասկանա գրունտների առաջացման պայմանների և նրանց երկրատեխնիկական հատկությունների միջև եղած օրինաչափությունները, հետախուզական փաստաթղթերի փորձագիտական իրականացում

3. կկարողանա լաբորատոր և դաշտային պայմաններում որոշել գրունտների երկրատեխնիկական հատկությունները աշխատել կառույցների և շինությունների հետ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գրունտագիտությունը որպես ճարտարագիտական երկրաբանության բաժին, հիմնական խնդիրները: ***Թեմա 2***՝ Գրունտների կազմը և կառուցվածքը: ***Թեմա 3***՝ Գրունտների հատիկաչափական և միկրոագրեգատային կազմը: ***Թեմա 4***՝ Գրունտներում ջրի տեսակների ստորաբաժանումը: ***Թեմա 5***՝ Կառուցվածքային կապերը գրունտներում: ***Թեմա 6***՝ Գրունտների ֆիզիկական հատկությունները: ***Թեմա 7***՝ Գրունտների լուծելիությունը: **Թեմա 8՝** Կապակցված գրունտների պլաստիկությունը: ***Թեմա 9՝*** Գրունտների ուռչում և կծկում: ***Թեմա 10***՝ Գրունտների ջրամրությունը: ***Թեմա 11***՝ Գրունտների ամրությունը: ***Թեմա 12***՝ Գրունտների դինամիկ կայունություն (ջրիկացում, տիքսոտրոպիա, պլիվունային երևույթներ): ***Թեմա 13***՝ Գրունտների ընդհանուր դասակարգումը: ***Թեմա 14***՝ Հրային ապարների ճարտարագիտա-երկրաբանական առանձնահատկությունները*:* ***Թեմա 15***՝ Մետամորֆային ապարների ճարտարագիտաերկրաբանական առանձնահատկությունները: ***Թեմա 16***՝ Արհեստական գրունտների ճարտարագիտաերկրաբանական առանձնահատկությունները: ***Թեմա 17***՝ Տեսական մեխանիկայի և նյութերի դիմադրության տարրական հիմունքները: ***Թեմա 18***՝ Գրունտների հիմնական մոդելները: ***Թեմա 19***՝ Գրունտների մեխանիկական հատկությունները: ***Թեմա 20***՝ Գրունտների մեխանիկայի հիմնական օրինաչափությունները (Խտացման օրենք, Լամինար ֆիլտրացիոն օրենք, Կուլոնի սահքի օրենք): ***Թեմա 21***՝ Գրունտների ֆիզիկո-քիմիական մեխանիկա: ***Թեմա 22***՝ Գրունտների սողքի օրինաչափությունները: ***Թեմա 23***՝ Լարումների բաշխումը գրունտներում: ***Թեմա 24***՝ Բեռնվածքի աճին զուգընթաց գրունտների լարվածային վիճակի փուլերը: ***Թեմա 25***՝ Լանջերի և շեպերի կայունություն: ***Թեմա 26***՝ Հիմնատակերի նստման հաշվարկումը և նրա փոփոխությունները ժամանակի ընթացքում: ***Թեմա 27***՝ Գրունտների դինամիկ հատկությունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիք քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքնաչյուրը **1** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

0801/B10. Մելիորատիվ ջրաերկրաբանություն (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (8 ժամ դասախոսություն և

56 ժամ լաբորատոր աշխատանք),

6-րդ կիսամյակ,ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել մելիորացվող հողատարածքների մելիորատիվ վիճակի բարելավման մեթոդներին և եղանակներին՝ հիմքում դնելով այդ տարածքների ջրաերկրաբանական պայմանները և դրանց փոփոխության օրինաչափությունները՝ կապված մելիորացիայի հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

1. կիմանա բնութագրել և գնահատել մելիորացվող տարածքի ջրաերկրաբանական պայմանները դրանք պայմանավորող գործոնների և ցուցանիշների վերլուծման հենքի վրա,
2. կհասկանա գնահատել ջրաերկրաբանական պայմանների փոփոխությունը և դրանց օրինաչափությունները ջրատեխնիկական մելիորացիայի ազդեցության հետևանքով,
3. կկարողանա ջրաերկրաբանական–մելիորատիվ պայմանների վերլուծության արդյունքում մշակել միջոցառումներ հողերի մելիորատիվ վիճակի բարելավման համար,
4. կկարողանա բնութագրել և գնահատել ոռոգելի և չորացվող հողերի մելիորատիվ վիճակը, այն պայմանավորող գործոնների և ցուցանիշների վերլուծման հենքի վրա:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ընդհանուր տեղեկությունների մելիորացիայի և մելիորատիվ ջրաերկրաբանության մասին: ***Թեմա 2***՝ Ոռոգելի և չորացվող հողատարածքների ջրաերկրաբանական պայմանների բնութագիրը: ***Թեմա 3***՝ Ոռոգելի և չորացվող հողերի մելիորատիվ վիճակի բնութագիրը: ***Թեմա 4***՝ Մելիորատիվ համակարգերը, ոռոգման, չորացման և աղազերծման եղանակներն ու մեթոդները: ***Թեմա 5***՝ Ոռոգման ազդեցությունը ջրաերկրաբանական պայմանների փոփոխության վրա: ***Թեմա 6***՝ Մելիորացվող հողատարածքներում տարվող ջրաերկրաբանական հետազոտությունների տեսակները և մեթոդները: ***Թեմա 7***՝ Ջրային և աղային հաշվեկշիռներ և դրանց բաղադրիչների որոշումը: ***Թեմա 8***՝ Ջրային և աղային ռեժիմների կանխատեսումները ոռոգելի հողատարածքներում: ***Թեմա 9***՝ Ոռոգելի հողատարածքներում մելիորատիվ դրենաժների դինամիկական հաշվարկը: ***Թեմա 10***՝ Ռեժիմային դիտարկումները և այդ տվյալներով ջրաերկրաբանական օարամետրերի որոշման եղանակները և մեթոդները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիք ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորի քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորի քայլը 0.5 է:

3-րդ ստուգում. Կարճ գրավոր աշխատանք: Միավորի քայլը 0.5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0.5 է:

0801/B11. Ստորերկրյա ջրերի դինամիկա և հատուկ ջրաերկրաբանություն (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (8 ժամ դասախոսություն և
56 ժամ լաբորատոր աշխատանք),
7-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել ստորերկրյա ջրերի շարժման օրինաչափություններին, ֆիլտրացիայի հիմնական օրենքին, գծային և ոչ գծային ֆիլտրացիոն շարժումներին, ֆիլտրացիոն հոսքի եզրային պայմաններին, դիֆերենցիալ հավասարումների համար փորձնական-ֆիլտրացիոն աշխատանքների օգնությամբ հիդրոդինամիկ պարամետրերի ստացմանը: Ծանոթացնել ջրաերկրաբանական հետազոտությունների կատարման տեսական հիմունքներին տարբեր գործնական խնդիրների լուծման համար: Այն ընդգրկում է քաղցրահամ ստորերկրյա ջրերի որոնման և հետախուզման մեթոդները ջրամատակարարման, հողերի բարելավման և տարբեր տիպի շինարարական աշխատանքների կատարման համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

1. կիմանա ստորերկրյա ջրերի ֆիլտրացիայի հիմնական օրենքը, նրա կիրառության սահմանները, ստորերկրյա քաղցրահամ ջրերի որոնման, հետախուզման և շահագործական պաշարների գնահատման մեթոդները,
2. կհասկան ճնշումնային և ոչ ճնշումնային ստորերկրյա ջրատար հորիզոնների ֆիլտրացիայի հիմնական դիֆերենցիալ հավասարումները, ջրաերկրաբանական կանխագուշակումների նպատակներով ստորերկրյա ջրերի ռեժիմային դիտարկումների եղանակները,
3. կկարողանա հաշվել ֆիլտրացիոն կորուստները ջրավազանի հատակից և պատվարից,
4. կկարողանա ստանալ փորձնական-ֆիլտրացիոն արտամղումների և ներմղումների տվյալներով հիդրոդինամիկ պարամետրերը և կազմել ջրաերկրաբանական քարտեզներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հոսքի հիդրոդինամիկ էլեմենտները և ֆիլտրացիայի հիմնական օրենքը: ***Թեմա 2***՝ Ֆիլտրացիոն հոսքի բանաձևերը ֆիլտրացիայի կոշտ ռեժիմի դեպքում: ***Թեմա 3***՝ Հարթ պլանային ոչ ճնշումնային հոսքի հավասարումը, առաձգական ռեժիմով ֆիլտրացիայի հավասարումը: ***Թեմա 4***՝ Պլանային հոսքի սահմանային պայմանները: ***Թեմա 5***՝ Հորատանցքերի ջրաերկրաբանական հաշվարկներ: ***Թեմա 6***՝ Պլանային ֆիլտրացիայի միաչափ կայունացած ռեժիմի հավասարումներ: ***Թեմա 7***՝ Ջրաերկրաբանական հանույթի տեսակները և խնդիրները: ***Թեմա 8***՝ Ջրաերկրաբանական քարտեզների բովանդակությունը: ***Թեմա 9***՝ Ջրաերկրաբանական հորատանցքեր, նրանց կոնստրուկցիաները: ***Թեմա 10***՝ Ջրաերկրաբանական հետազոտությունների ժամանակ օգտագործվող տեխնիկական միջոցներ և սարքավորումներ: ***Թեմա 11***՝ Ստորերկրյա ջրերի ռեժիմի և հաշվեկշռի ուսումնասիրության մեթոդները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիք ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորի քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորի քայլը 0.5 է:

3-րդ ստուգում. Կարճ գրավոր աշխատանք: Միավորի քայլը 0.5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0.5 է:

0801/B012. Ինժեներային երկրաղինամիկա (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (8 ժամ դասախոսություն և
56 ժամ լաբորատոր աշխատանք),
7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ինչպես բնական, այնպես էլ անթրոպոգեն երկրաբանկան պրոցեսների և երևույթների տարածման օրինաչափություններին: Այն պրոցոսների և երևույթների, որոնք ազդում են մարդու նորմալ կենսագործունեության, ինչպես նաև կառույցների և շինարարությունների շահագործման վրա:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը՝

1. կիմանա ճարտարագիտական երկրաբանության մեթոդների կիրառմամբ երկրաբանական պրոցեսների և երևույթների ուսումնասիրում,
2. կհասկանա երկրաբանական պրոցեսների և երևույթների կանխագուշակում և գնահատում,
3. կկարողանա կատարել երկրաբանական պրոցեսների և երևույթների համար քանակական ցուցանիշների ստացում, հաշվարկային մեթոդների կիրառմամբ,

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ճարտարագիտական երկրադինամիկան, որպես ճարտարագիտական երկրաբանության բաժին: **Թեմա 2՝** Երկրաբանական պրոցեսների և երևույթների Սավարենսկու դասակարգումը: **Թեմա 3՝** Հողմահարման պրոցեսներ, հողմահարման կեղևի մանրամասն սխեման: ***Թեմա 4՝*** Սելավային երևույթներ: **Թեմա 5՝** Գերնստման երևույթներ: **Թեմա 6՝** Կարստային երևույթներ: **Թեմա 7՝** Պլիվունային և սուֆֆոզիոն երևույթներ: **Թեմա 8՝** Սողանքային երևույթներ: **Թեմա 9՝** Փլվածքային երևույթներ: **Թեմա 10՝** Սեյսմիկ միկրոշրջանացման ճարտարագիտա-երկրաբանական գործոնները: **Թեմա 11՝** Ստորերկրյա փորվածքների անցմամբ պայմանավորված երկրաբանական պրոցեսները: Գաղափար լեռնային ճնշման մասին: **Թեմա 12՝** Հեղուկ և գազային օգտակար հանածոների արտամղման հետևանքով առաջացած նստումնային երևույթները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիք քննություններ

Նախատեսված **2** ընթացիք քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքնաչյուրը **1** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորի քայլը 0.5 է:

0801/B013. Ջրաերկրաբանական հետազոտման մեթոդներ (2 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (16 ժամ դասախոսություն և

16 ժամ լաբորատոր աշխատանք)

8-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է սովորեցնել ուսանողին տիրապետի ջրաերկրաբանական ուսումնասիրությունների մեթոդիկայի տեսական հիմունքներին և կարողանա դրանք կիրառել տարբեր գործնական խնդիրների լուծման ժամանակ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

1. կիմանա ստորերկրյա ջրերի որոնման, հետախուզման և շահագործական պաշարների գնահատման եղանակներն ու մեթոդները,
2. կհասկանա հանքային, արդյունաբերական և թերմալ ստորերկրյա ջրերի որոնման, հետախուզման և պաշարների գնահատման մեթոդները,
3. կկարողանա գնահատել ստորերկրյա ջրերի հանքավայրերի ռեսուրսները, պաշարները, ռեժիմը, ջրի շահագործման առանձնահատկությունները և որակը դրանք ծառայեցնել ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ջրաերկրաբանական հետազոտությունների մեթոդիկա դասընթացի բովանդակությունը, զարգացումը և դերը ժողովրդական տնտեսության մեջ: ***Թեմա 2՝*** Ստորերկրյա ջրերի հանքավայր հասկացությունը և դրանց ուսումնասիրման առանձնահատկությունները: ***Թեմա 3՝*** Ջրաերկրաբանական ուսումնասիրությունների կառուցվածքները և հիմնական ձևերը: ***Թեմա 4՝*** Ջրաերկրաբանական հանույթ և քարտեզագրում: ***Թեմա 5՝*** Դաշտային փորձա-ֆիլտրացիոն աշխատանքների կատարում և վերջինիս տվյալների հիման վրա ջրաերկրաբանական պարամետրերի որոշում: ***Թեմա 6՝*** Ստորերկրյա ջրերի ռեժիմի (մոնիթորինգ) և հաշվեկշռի իրականացում: ***Թեմա 7՝*** Լաբորատոր ջրաերկրաբանական ուսումնասիրությունները: ***Թեմա 8՝*** Ստորերկրյա ջրերի ֆիլտրացիայի մոդելավորում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը գրավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միա-

վորների քայլը 0,5 է:

0801/B14. Ինժեներաերկրաբանական հետազոտման մեթոդներ (3 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ (8 ժամ դասախոսություն և
40 ժամլաբորատոր աշխատանք),
8-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ճարտարագիտա-երկրաբանական հետազոտությունների այն օպտիմալ ծավալի հետ, որով հնարավոր է լուծել այդ ուսումնասիրությունների առջև դրված խնդիրները: Պարզ է, որ մեթոդիկա ասելով պետք է հասկանալ այն աշխատանքների համալիրը, որոնք կարգավորում են նախագծման էտապը, նորմատիվ փաստաթղթերը շինարարական նորմատիվնով, կանոններով և այլն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը՝

1. կիմանա տարբեր կառույցների համար նախատեսվող ճարտարագիտաերկրաբանական հետազոտությունները,
2. կհասկանա ճարտարագիտաերկրաբանական հետազոտությունների մեթոդիկայի էությունը,
3. կկարողանա մշակել ճարտարագիտաերկրաբանական ինֆորմացիոն նյութերը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ ճարտարագիտաերկրաբանական հանույթ, քարտեզ և կտրվածքներ: ***Թեմա 2՝*** ճարտարագիտա-երկրաբանական հետազոտման մեթոդներ: ***Թեմա 3՝*** Հորատանցքներից լեռնային փորվածքների, բաց մերկացումների նմուշարկման մեթոդներ: ***Թեմա 4՝*** Երկրաֆիզիկական մեթոդերի կիրառումը ճարտարագիտաերկրաբանական հարցերի լուծման ասպարեում: ***Թեմա 5՝*** Դինամիկ և ստատիկ զոնդավորում: ***Թեմա 6՝*** Դաշտային ճարտաագիտա-երկրաբանական ուսումնասիրություններ: ***Թեմա 7՝*** Գրունտների դեֆորմացիոն ամրության որոշումը մամլիչային պրեսիոմետրիաան մեթոդներով: ***Թեմա 8՝*** Զանգվածների լարվածադեֆորմացիոն վիճակների գնահատման մեթոդները: ***Թեմա 9՝*** ճարտարագիտաերկրաբանական ռեժիմային դեֆորմացիաներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված **4** ընթացիք ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորի քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորի քայլը 0.5 է:

3-րդ ստուգում. Կարճ գրավոր աշխատանք: Միավորի քայլը 0.5 է:

4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0.5 է:

5.10. «Օգտակար հանածոների հանքավայրերի որոնում և հետախուզում» մասնագիտացում

0804/B05. Հետազոտման դիստանցիոն մեթոդներ (3 կրեդիտ)
Շաբաթական 3 ժամ (10 ժամ դասախոսություն
և 38 ժամ գործնական աշխատանք),
5-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել աերոհանույթի տեսակներին, աերոտիեզերական նկարների վերծանման մեթոդներին և դրանց կիրառմանը երկրաբանական աշխատանքների ժամանակ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա աերոհանույթի մասին իր սեփական պատկերացումները, ձեռք կբերի
2. ստերեոսկոպով աշխատելու հմտություններ, կկարողանա վերծանել աերոլուսանկարները, առանձնացնել նրանց վրա տարբեր երկրաբանական կառուցվածքային տարրերը և ստացված տվյալները անցկացնել երկրաբանական քարտեզների վրա:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Աերոհանույթի տեսակները: Հանույթի բարդությունը: Աերոլուսանկարների տեսակները: ***Թեմա 2՝*** ԱԼՆ-ի հատկություններն ու հատկանիշները, դրանց վերծանման մեթոդները: ***Թեմա 3՝*** Հորիզոնական և թեք տեղադրության շերտերի, ծալքավոր կառույցների արտահայտումը ԱԼՆ-ի վրա: ***Թեմա 4՝*** Ճեղքվածքների և խոշոր խզվածքների արտահայտումը ԱԼՆ-ի վրա: ***Թեմա 5՝*** Էֆուզիվ և ինտրուզիվ ապարների արտահայտումը ԱԼՆ-ի վրա: ***Թեմա 6՝*** Տիեզերալուսանկարների հետ աշխատելու յուրահատկությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 4 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 4 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:
2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:
3-րդ ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:
4-րդ ստուգում.Անհատական առաջադրանք: Միավորների քայլը 0,5 է:

0804/B06. Հետախուզման տեխնիկա (3 կրեդիտ)
Շաբաթական 4 ժամ (6 ժամ դասախոսություն և
58 ժամ լաբորատոր պարապմունք)
5–րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել օհհ որոնման և հետախուզման աշխատանքների ժամանակ օգտագործվող լեռնային փորվածքների անցման և հորատանցքների հորատման պրոցեսներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա երկրաբանահետախուզման աշխատանքների ժամանակ օգտագործվող լեռնային փորվածքների ու հորատանցքերի տեսակները,
2. կհասկանա կատարման տեխնալոգիան և նրանց կիրառման առանձնահատկությունները կոնկրետ դեպքերում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Լեռնային ապարների հիմնական հատկությունները: ***Թեմա 2***՝ Պայթեցման, օդափոխման, ապարների տեղափոխման աշխատանքները: ***Թեմա 3***՝ Հորիզոնական, ուղղահայաց և թեք մակերեսային լեռնային փորվածքների անցումը: ***Թեմա 4***՝ Հորատման աշխատանքների ձևերն ու տիպերը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **8** հարց, յուրաքանչյուրը 0,5 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0804/B07. Որոնման երկրաքիմիական մեթոդներ (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (16 ժամ դասախոսություն և
48 ժամ լաբորատոր աշխատանք)
6–րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել որոնման երկրաքիմիական մեթոդների տեսական հիմքը կազմող հասկացություններին, որոնք անհրաժեշտ են բնական պրոցեսներում օգտակար հանածոների կուտակումների ուսումնասիրության և կանխագուշակային ռեսուրսների գնահատման ժամանակ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա առաջնային և երկրորդային երկրաքիմիական պսակների ձևավորման բնույթը, նրանց եզրագծման առանձնահատկությունները,
2. կկարողանա տալ կանխագուշակային ռեսուրսների գնահատումը երկրաքիմիական պսակների միջոցով:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կիրառական երկրաքիմիայում օգտագործվող հիմնական հասկացությունները: Հանքավայրերի երկրաքիմիական պսակները: ***Թեմա 2***՝ Որոնման

երկրաքիմիական մեթոդները և նրանց օգտագործման դեպքերը: ***Թեմա 3***՝ Որոնումների լիթոերկրաքիմիական մեթոդները: Երկրաքիմիական պսակների հատկությունները: ***Թեմա 4***՝ Ցրման երկրորդային պսակները, նրանց դասակարգումը, աշխատանքների մեթոդիկան: ***Թեմա 5***՝ Որոնումների հիդրոերկրաքիմիական, կենսաերկրաքիմիական և ատմոերկրաքիմիական մեթոդները: **Թեմա 6՝** Կանխատեսումնային ռեսուրսների գնահատումը երկրաքիմիական պսակներով:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված **2** ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ **4** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **8** հարց, յուրաքանչյուրը 0,5 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ **8** միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է **4** հարց, յուրաքանչյուրը **2-ական** միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0804/B08 Փորվածքների փաստագրում և ստորգետնյա քարտեզագրում (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (6 ժամ դասախոսություն և
58 ժամ լաբորատոր աշխատանք)
6-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ստորգետնյա փորվածքների և հորատանցքերի փաստագրման ու քարտեզագրման աշխատանքներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա գործնականում կիրառել ձեռք բերած հմտությունները լեռնային փորվածքների և հորատանցքերի փաստագրման համար,
2. օգտագործելով փաստագրման տվյալները՝ կազմել հետախուզական հորիզոնների երկրաբանական հատակագծերը :

Բովանդակությունը.

Թեմա1՝ Երկրաբանական փաստագրման էությունն ու ձևերը: ***Թեմա 2***՝ Մակերեսային լեռնային փորվածքների փաստագրում ***Թեմա 3***՝ Սյունակային հորատանցքերի փաստագրումը: ***Թեմա 4***՝ Ստորգետնյա հետախուզական փորվածքների փաստագրումը: ***Թեմա 5***՝ Փաստագրման տվյալների հիման վրա հետախուզական հորիզոնների հատակագծերի և հանքավայրերի կտրվածքների կազմումը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված **4** ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը **4** միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

3-րդ ստուգում. Գրավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:
4-րդ ստուգում. Անհատական առաջադրանք: Միավորների քայլը 0,5 է:

0804/B09. Հանքային դաշտերի և հանքավայրերի կառուցվածքները (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (6 ժամ դասախոսություն և
58 ժամ լաբորատոր աշխատանք)
7–րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հանքային դաշտերի ու հանքավայրերի հիմնական կառուցվածքային տարրերին, հանքային մարմինների տիպերին ու ծագումնաբանական առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կստանա տեղեկություններ հանքակուտակումների տեղակայումը կանխորոշող կառուցվածքային տարրերի մասին,
2. կհասկանա հանքային մարմինների տեղաբաշխման օրինաչափությունները,

Բովանդակությունը.

